



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Աստղծագործական համայնքները ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օպուզործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

33944

28  
156



ՊԱՇՏՈՆ

ՓԱՌԱԲԱՆՈՒԹԵԱՆ

ՍՈՒՐԲ ԱՎՏՈՒԱՆԱՆԿՆԻՆ

Հ. Ի. Փ.

Ի ՄԻՒԹԱԲԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

3394

ԵՐԱԲՈՐԻ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՎԵՆԵՑԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅԵ ԴԱԶԱՐՈՒ

1862

小説名古屋

吉田白川山中

小説家は小説家

小説家は小説家

三  
二  
一

小説家

吉田白川山中

三  
二  
一

## ՅՈՐԴՈՐԱՆՔ

Սուրբ Աստուածածնայ չերմեն  
ուանդ լլլալու համար :



Ա. Ինչպէս որ աստուածային ողբանւթիւնը ան ատենները աւելի երկցեր է աշխարքիս մէջը, երբոր մարդիկ մասնալով զլուստուած աւելի նեղութեան ու ծանր տառապանաց մէջ ընկեր են նէ, ասանկ ալսուրը ։ Կատուածածնայ մայրական խնամքը ու սէրը քըփառնեց վրայ առաւելապէս երկցեր է ու կ'երենայ. ան ատենները, երբոր մարդիկ թունալով իր ջերմեռանդութենէն՝ փօխանակ բարեպաշտութեան ու աստուածային ծառայութեան՝ տուեր են զիրենք աշխարքիս ունայնութեանը, ու անով մասնուեր են

զանազան տանջանքներու ու անչա-  
մար փորձանքներու : Առաջի կը տես-  
նենք որ անանի ատենեներ սուրբ Աս-  
տուածածին իրեն մասնաւոր ինսամ-  
քովլը հաներ է ջերմեռանդ մար-  
դիկներ , որ իրենց աղէկ օրինակովլ  
ու բարի քարոզներովլը յորդորեր ու  
շարժեր են զորիչներովլ՝ բարեպաշտ  
ու ջերմեռանդ ըլլալու . ինչպէս որ  
յայտնի է եկեղեցական պատմու-  
թիւններէն , որ կը զբուի սուրբ Աս-  
տուածածնայ հրաշքներուն մէջը :

Բ . Աս ինսամքս սուրբ Աստուա-  
ծածնայ նշան է իր մայրական սի-  
րոյն , որ ունի մեր վրայ . ու առ մայ-  
րական սէրը սկսաւ ունենալ ան ա-  
տենը , երբոր ծնաւ իր Յիսուս միա-  
ծին որդին աշխարքիս փրկութեանը  
համար . ու ետքը աւելի վառուե-  
ցաւ իր սիրով մեր սիրով , երբոր  
Յիսուս խաչն վրայ իր մայրութեա-  
նը յանձնեց զմեզ , (Յով. ԺԹ . 26)  
իրեն որդի ընելովլ Յովչաննէս սի-  
րելի աշկերտը , ու անով իր ամին  
հաւատացեալ ժողովուրդը՝ որոնց

համար որ աւելի սիրովլ խաչն վրայ  
կը մեռնէր : Ասանկ ըլլալովլ սուրբ  
Աստուածածնայ մայրութիւնը ոչ  
երբէք պակուեր է եկեղեցնայ վրայ-  
էն , [թէ պէտ և շատ մարգիկ եկե-  
ղեցնայ մէջ ապերախտ ըլլալովլ ի-  
րեն ճշմարիտ որդիութիւն չեն ը-  
րած . սակայն ինքը իր գթութիւնը  
անպակաս ցըցուցէր է ամենուն վրայ ,  
ու մասնաւոր չնորհքովլ յորդորեր  
է զիրինք նոր նոր ջերմեռանդու-  
թեան ու բարեպաշտութեան էտելէ  
ըլլալու , մասնաւանդ ծանր նեղու-  
թեան ու հալածանքներու մէջ :

Գ . Ասանկ ծանր նեղութիւն ու  
սաստիկ հալածանք , որ աստուա-  
ծային թոյլտուութենէն շատ ան-  
դամ եկեր եր քրիստոնէից վրայ ,  
կրնանք ըսել [թէ ամենէն ետքինը  
եղաւ ան խոռովութիւնը , որ մեր օ-  
րերը քաշեց Խրոսպա , ու իրեն հետ  
բոլոր աշխարքս : Աս ինովութեանս  
մէջը ուզելովլ սուրբ Աստուածածին  
ցըցնել իր մասնաւոր ինսամքը , շար-  
ժեց մէկ բարեպաշտ կրօնաւորի մը

սիրտը , որ ժողովրդեան մէջ հաս-  
տատէ անանկ ջերմեռանդութիւն  
մը , որ ըլլայ տարին անգամ մը եր-  
սուն օր մայիս ամսուն մէջը իր պաշտ-  
պանութեանը համար . և աս ջեր-  
մեռանդութիւնս անանկ շատցաւ  
խտալից մէջ , մանաւանդ հռոմ  
քաղաքը , որ յիսուն տարի է բոլոր  
մայիսին ամիսը երսունըմէկ օր շատ  
ժամերու մէջ հանդիսով տօնա-  
խմբութիւն կ'ընեն , ամէն օր սըր-  
բութիւն դնելով ու քարոզներ տա-  
լով , և այլ ջերմեռանդական ա-  
զօթքներ լնելով սուրբ Աստուա-  
ծածնայ :

Դ . Աս ջերմեռանդութեանս պը-  
տուղը տեսնուեցաւ քիչ ատենի  
մէջ . անանկ որ պաշտպանութեամբ  
սուրբ Աստուածածնայ աշխարքս  
դտաւ իր խաղաղութիւնը , խալքսե-  
լով ան խուզիւթենէն , որ տիրեր  
էր վաթսունըքոթը տարուընէ ՚ի  
վեր : Ուստի սուրբ եկեղեցին մայր  
գթած ըլլալով , ու փափաքելով՝ չէ  
թէ մինակ աշխարքիս խաղաղու-

թեանը , այլ մանաւանդ հոգեւոր  
յասաջիմութեան իր զաւկընե-  
րուն , որպէս զի բարեպաշտ ու ջեր-  
մեռանդ ըլլան սուրբ Աստուածա-  
ծնայ , կու տայ մանաւոր օրհնու-  
թիւն ու ներովութիւն՝ ով որ տա-  
րին հեղ մը աս ամսուան ջերմե-  
ռանդութիւնը ինչպէս պէտք է նէ՝  
սիրով կատարէ , ու ետքի օրը աղէկ  
խոստովանանք ըլլալով սրբութիւն  
առնէ ու աղօթքը ընէ սուրբ եկե-  
ղեյնայ խաղաղութեանը համար :

Ե . Աս օդտակար ու անուշ ջեր-  
մեռանդութիւնը սուրբ Աստուա-  
ծածնայ տեսնալով հռոմ քաղքին  
մէջը , շատ տարուան փափաքս որ ու-  
նի պղտիկ բանով մը իմ օրդեղրու-  
թեան պարտքս նուիրելու ամէնօր-  
հնեալ սուրբ Տիբամօրս , յորդո-  
րուեցայ քաղել զաս պղտի փունջս  
ծաղկըներու՝ իրեն անունով ընծայ-  
ուած մայիս ամսուն գրքէն , որ կ'ը-  
սուի Ամառ Ապրիլ առաջ որպէս  
լայ մեր ազգին բարեպաշտներուն  
ալ մէկ առիթ մը համտեն ընելու

իր անուշահոտութիւնը, մանաւանդ  
թէ վառուելու ու զմայլելու քաղցր  
ջերմեռանդութեամբ սուրբ Տիերա-  
մօրն։ Ճա որովհետեւ ես զիս կը ճանչ-  
նամ որ շատ պակսեր եմ իմ որ-  
գիութենէս առ սուրբ Աստուածա-  
ծինը, կը փափաքիմ որ ուրիշներու  
ջերմեռանդութեան պատճառը ըլ-  
լալով, մասնակից ըլլամ իրենց բա-  
րեգործութեանը, ու արժանի զը-  
թութեան և մայրական խնամոց ա-  
մենասուրբ Տիերուհւոյս։

Զ. Գիտմալով որ ամենաւն յայտ-  
նի է սուրբ Աստուածածնայ մեծու-  
թիւնը, փառքը, պատիւը, որբու-  
թիւնը, արժանաւորութիւնը, ան-  
պատմելի գովիւսոր ու չնորհը, ինչ-  
պէս քիչէն շատէն զրուած է որիշ  
զրոց մէջ, ինչպէս են Հիւսէտէ բա-  
րեբանութեան, Պատիւը ոժնից, Կան-  
չարան շնորհաց սուրբ Աստուածածնին,  
մէկդի կը թողում անմնց վրայ զրե-  
լը, յորգորելով բարեպաշտները որ  
երթան կարդան զան զըքերը, ու ի-  
մանան թէ ինչափ մէծ ու զարմա-

նալի չնորհքներով ու փառքով լե-  
ցուած է սուրբ Աստուածածին։  
Այլ մինակ կը փափաքիմ դնել աս-  
տեղս մէկ քանի յորգորանք մը ցը-  
ցնելով իր մայրական զութը ու սէ-  
րը, որ ունի մեր վրայ։ որպէս զի բա-  
րեպաշտները վառուին ու բորբոքին  
երեն ջերմեռանդութեամբ։

Գորք ու խնամք սուրբ Աստուածածնայ :

Կ'ուղես իմանալ սուրբ Աշտուածածնայ սէրը ու սիրալ մէր վրայ , կարգա իրեն այցելութեան պատմութիւնը՝ ու կասու աւետարանին մէջ ( Գլ. Ա. : 39 ) . ուր կը տէսնես՝ թէ սուրբ կյուր երբոր իմացաւ Դաքրիէլ հրեշտակին աւետեօքը՝ թէ պիտի ըլլայ մայր Աշտուածոյ , ամենայն խսնարհութեամբ հնազանդելով աստուածային կամքին , լեցուեցաւ ուրախութեամբ սրտի ձանչնալով որ Աշտուած զինքը պիտի առնու գործիք աշխարդիս փըրկութեանը , ու իր միջնորդութեամբ բարիք պիտող ընէ ամենուն . ուստի նոյն ուրախութեամբ մէկէն ելաւ տնէն ու զնաց Օ աքարիս քահանային տունը , ու աստուածային խնդութեամբ բարիք տուաւ Խղիսաբէթի : Վ'նչ անուշ ու Հոգւով

սրբով լեցուած խօսքեր եր ան բարել սուրբ Աշտուածածնայ , որ երբոր լսեց Խղիսաբէթ՝ ինքն ալ ու իր զաւակն ալ լեցուեցան Հոգւով սրբոյ չնորհքովը . ու սկսաւ Խղիսաբէթ օրհնել զուրբ կյոյ Աշտուածածնը , երանութիւն տալով չէ թէ մինակ իրեն աստուածամնյութեանը , այլ և անօնց որ Ճմարիտ հաւատքով կ'ընդունին ու կը դիմեն իրեն : Վ'ն ատենը սուրբ Աշտուածածին բացաւ իր ամէնօրհնեալ բերանը , ու մարգարեական հոգւով ետքի ըլլալու հրացները իր միջնորդութեամբ՝ առաջուց սկըսաւ պատմել Խղիսաբէթի , փառաւորելով Աշտուածոյ մէծութիւնը ու սքանչելիքներն որ պիտի ընէր իր ձեռքովը . ուստի ըստաւ .

“ Ուժացուսցէ անձն իմ զՏէր , և ցնացաւ հոգի իմ յԱշտուած փրկիւ իմ : ” Վ'ուղէր ըսել թէ աս մէծ չնորհքն որ Աշտուած ինձի ըրաւ , որով եղայ մայր Աշտուածոյ , անանկ մէծութիւնն մընէ , որ ինձմով

պիտոր մեծնայ , Ճանցուի ու փառաւորուի Աստուծոյ զթութիւնը , ողղոմնութիւնը , խմաստութիւնը , ամենակարսղ զօրութիւնը . ինչու որ միջնորդ ըլլալովս Աստուծոյ մարդեղութեղութեանը , ու անուլ մարդկային փրկութեան , ինձմնուլ պիտոր Ճանչնան մարդիկ՝ թէ Աստուած ինչափ մեծ ու անհաւատալի բաներ կ'ընէեղելքը աշխարքիս . ուստի աս սքանչը լիքներուս համար կը ցննայ ու կ'ուրախանայ իմ հոգիս՝ մըտմտալով Աստուծոյ փառքը ու ողղոմնութիւնը մարդուս վրայ : Աս ողղոմնութիւնս երբոր Աստուած սկսաւ ընել աշխարքիս , չուզեց ձեւոք առնուլ անանկ մեծատուն խաթուն մը , որ իր մարմնաւոր հարստութեամբ ու փառքով ամենուն ճանչուոր ըլլայ , այլ ընտրեց խոնարհ ու բարեպաշտ կցս մը , որ զինքը աղախին Աստուծոյ սեպելով բոլոր կ'եանքը չերմռուանդութեամբ կ'անցըներ միշտ Աստուծոյ ծառայելով . անոր համար կ'ըսէ .

“ Օ ի հայեցաւ ՚ի խոնարհութիւն աղախնոյ իւրց , : Աս ան խոնարհութիւնն է , որով բարձրցաւ քան զամենը վեր . ան խոնարհութիւնն է , որով կը հասնի ամենուն . ան խոնարհութիւնն է , որով զամենը կը սիրէ ու մօր պէս ամենուն վրայ խնամք ունի ու իրենց կարօտութիւնը կը լեցընէ . ուստի ամենքն ալ վայելելով իրեն սէրը ու զթասրտութիւնը կ'օրհնեն , կը գովեն , կը մեծցընեն ու երանութիւն կու տան իրեն մայրութեանը . անոր համար ըստ .

“ Օ ի ահա յայսմնետէ երանեսցեն ինձ ամենայն ազգը , : Իրաւո՞ չիկայ աշխըրքիս մէջը մէկ ազդմը , մէկ քաղաք մը , մէկ գեղ մը ու մէկ տուն մը , որ չիձանչնան իր մեծութիւնը ու փառքը , տեսած ըլլան իր հրաշքը , չիպատուեն զինքը , ու երանութիւն չիտան իր մայրութեանը : Ինչու որ ամենքը կը ձանչնան թէ Աստուած ինչ պատույց հասուցեր է իր սուրբ մայրը , ու ինչ

անպատմելի կարողութիւնսեր տը-  
ւեր է իրեն, որով կ'երևայ Վստու-  
ծոյ ձեռքը, Վստուծոյ պահնչելիքը  
ու աստուածային սրբութիւնը. ա-  
նոր համար կ'ըսէ.

“ Օ ի արար ինձ մեծամեծս հը-  
զօրն, : Քան զաս մեծ ինչ կընայ  
ըլլալ, որ կցս աղջիկ մը՝ խսնարչ ու  
անծանոթ աշխըրքիս, ընտրուի ու  
ըլլայ մայր Վստուծոյ միջնորդ մարդ-  
կային փրկութեան, գանձապէտ շր-  
նորհաց ու բաշխող աստուածային  
ողորմութեան. անանկ որ լեցուած  
է աշխարքս իր հրաշքներով, իր դը-  
թութեամբը, իր մայրական սիրով.  
որով մարդիկ Վստուծոյ կը մօտե-  
նան, Վստուծոյ կը ծառայեն, Վս-  
տուծոյ անունը կը պատուեն ու կը  
մեծարեն, ուստի կ'ըսէ.

“ Աւ սուրբ է անուննորա, : Վս-  
տուծոյ սրբութիւնը երեցաւ Վս-  
տուածանայ կուսական մայրու-  
թեամբը. անանկ որ աղջիկ մը ըլ-  
լայ մայր ու կոյս, ծնանի չէ թէ մի-  
նակ զորդին Վստուծոյ, այլ և ըլլայ

մայր բազմութեան հաւատացելոց,  
որ զինքը սրբութեամբ ու կուսու-  
թեամբ կը պատուեն, սրբութեամբ  
ջերմեռանդութիւն կ'ընեն, ու իրեն  
մաքրութեանը հետեւելու համար՝  
կեանքերնին սուրբ ու անարատի՝ ան-  
ցնուն Վստուծոյ ծառայութեանը  
մէջ, ուստի արժանի ալ կ'ըլլան աս-  
տուածային ողորմութեանը. ինչ-  
պէս որ կ'ըսէ ետեւէն.

“ Աւ ողորմութիւն նորա ազգաց  
յազգս երկիւղածաց իւրոց, : Վս-  
տուածային ողորմութիւնն որ ըրեր  
է մեզի ու կ'ընէ միջնորդութեամբ.  
սուրբ Վստուածածնայ՝ չիկարծենք  
որ գիտուածական կամ ժամանա-  
կաւոր բան մին է. այլ մշտնջենաւոր  
ու յաւիտենական, անանկ որ որ-  
դուոց որդի պիտի երթայ. միայն թէ  
ձանջնայ մէկը ու իր կողմանէ ար-  
գելք մը չիգնէ աստուածային ողոր-  
մութեան, իմանայ որ մեծ որազեւ  
Վստուծոյ է ունենալու ասանկ մայր՝  
միջնորդ ու բարեխօս, որով կընանք  
ամէն խնդիրքնիս առնուլ Վստուծ-

մէ : Այս մեծ ողորմնւթիւնս որ Աքա-  
տուած ըրաւ մեզի իր մարդեկու-  
թեամբը ու ցըցուց իր ամենակա-  
րող զօրութիւնը , ալ ուրիշ ի՞նչ  
բան կընայ ըլլալ իրեն անկարելլ .  
ուստի կ'ըսէ ետևէն .

“ Վրար զօրութիւն բազկաւ իւ-  
րովլ . : Վստուծոյ բազուկը իր ա-  
մենամեծ խմաստութիւնը ու կարո-  
ղութիւնն է . մեզի անկարելլ երե-  
ցած բանը զիւրին ձամքով կ'ընէ ,  
անանիկ որ մարդկանց խելքը Ժիշա-  
նիր . մանաւանդ հպարտ ու ամբար-  
տաւան մարդկիներուն , որ զիրենք  
բանի տեղ զիքը են ու կը կարծեն որ  
մարդկային խելքով ու մարդկային  
ուժով ամէն բան կ'ըլլայ . սակայն  
Վստուած ու զենալով խմարչեցը-  
նել զաննկք , առաւ իր ձեռքը մէկ  
խմարչ աղջիկ մը , ու անուղ այնպի-  
սի մեծ ու զարմանալի հրաշքներ ը-  
րաւ ու անդադար կ'ընէ , որպէս զի  
երեցընէ թէ ինքն Վստուած է որ  
զայս ամենայն կ'ընէ , չչ թէ մար-  
դիկ իրենց տկար ու հողեղին բնու-  
թենովը . անոր համար կ'ըսէ .

“ Զրուեաց զամբարտաւանս մը-  
տօք սրտից իւրեանց , քակեաց ըզ-  
հզօրս յաթուոց և բարձրացոյց ըլլ-  
խմարչս . : Վուզէ ըսէլ թէ ասի-  
կայ է կանոն աստուածային կառա-  
վարութեանը , որ իր ողորմութիւնը  
կ'ընէ մինակ խմարչներուն , բա-  
րեսպաշտներուն , երկիւզած Ծերմե-  
ռանգներուն , կը Եցրնէ զանոնք ըլ-  
նորհքով ու կը փառաւորէ իր մե-  
ծութեամբը . իսկ առջի հպարտին ,  
այսինքն սատանային նախն հպարտ-  
ները կը մերժէ ու երեսէ կը ձգէ .  
մանաւանդ զանոնք որ Վստուծոյ բա-  
րեքը վայելելով , չեն ձանճնար թէ  
Վստուծոյ ողորմութիւնն է , այլ ի-  
րենց խելքին ու բախտին կու տան  
յաջողութիւնը . իբր թէ իրենք ան-  
կարօտ են մէկի մը , ու կընան ամէն  
բան ընել . սակայն Վստուած իր ո-  
ղորմութիւնը անոնց միայն կու տայ ,  
որոնք որ կը փափաքին ու զիրենք ալ  
կարօտ կը ձանճնան Վստուծոյ չոր-  
հացը , ինչպէս որ կ'ըսէ .

“ Օքազցեալ լոյց բարութէ ,

և զմեծատունս արձակեաց ունայնը,, : Վաղցած կ'ըսուին անոնք, որ իրենց բարոր յոյսը զրեր են լուտուծոյ վրայ, ու ուրիշ բան չեն ուզեր, բայց եթէ լուտուծոյ կամքը իրենց վրայ կատարուի. ուստի զլուտուած ալ կը պարտաւորեն՝ որ զիւրենը լցցնեամենայն բարութք, այսինքն ամեն չնորհքով: լոր համար կը տեսնենք որ ձմարիտ բարեպաշտները ծառայելով լուտուծոյ, թէպէտ և նեղութիւն մ'ալ ունենան, միշտ սրտերնին ուրախէ, զիտնալով որ լուտուած զիրենք հօր պէս կը նայի, ու սուրբ լուտուածածինն ալ մօք կը խնամէ. ուստի անանկ բարեպաշտները ոչ երբէք զրոկուած են իրենց խնդիրնեն, այլ ուշ կամ շուտ իրենց անդադար ազօթքովը առեր են ամեն ուղածնին: լուսնաց ներհակ անոնք որ զիրենք բանի մը կարոտ չփոխելով, անհոգ են եղեր լուտուծոյ ծառայութեանը, զրիուեր են թէ աշխարիխ բաներէն, և թէ որ մեծն է՝ արքայու-

թեան ժառանգութենէն: ինչու որ՝ լուտուած մինակ իր ծառաները կը պահէ ու կը պաշտպանէ, իր ծառաներուն կ'ողորմի ու գթալով՝ հօր պէս կը խնամէ զանոնք. ինչպէս որ առաջաւց խոստացեր էր լուրահամ նահապետին ու իրեն սուրբ զաւկը ներուն. անոր համար կ'ըսէ ետևէն:

“Պաշտպանեաց Խորայելի ծառայի իւրում՝ յիշել զաղորմութիւնս, որպէս խօսեցաւ առ հարմեր՝ լուրահամու և զաւակի նորա յաւիտեան,, : լուտուած սուրբ լուտուածածին խորայելի այսինքն ըլքէաներուն ժողովովեան անտունովը կ'իմացընէ զամեն մարդիկ, որ գերուած էին սատանային ձեռքը, ու անով մատնուած էին մեղքի ու մոլորութեան մէջ. լուտուած տեսնալով անոնց խեղճութիւնը, յիշեց իր անբաւ ողորմութիւնը. ուստի ելաւ եկաւ աշխարհք փրկել ու պաշտպանել զամենը իր սուրբ մարդեղութեամբը, ինչպէս որ խոստացեր էր լուրահամու և ուրիշ նահապե-

տաց, թէ իր ողբամն թիւնը պիտոր  
շիպակսեցնէ անսնցմէ, և թէ լու-  
րահամենահապետին զաւկովս պի-  
տի օրհնուելն ամէն ազգեր. (Ծննդ.  
18. • 18):

Այս աս ան ամէնօրհնեալ զա-  
ւակն է, որ եղաւ մայր լուսուծոյ,  
ու ծնաւ մեր Հիսուս փրկիչը, որով  
աղատեցանք յաւիտենական դատա-  
պարտութենէն, ու ժառանգ եղանք  
արքայութեան: Իս ամէնօրհնեալ  
զաւակն է, որով օրհնուեցաւ աշ-  
խարհքս, աղատեցաւ իր պատիմնե-  
րէն ու զարդարուեցաւ անհամար  
չնորհներով, որ լուսուած ըրաւ ու  
կ'ընէ անդադար անոր միջնորդու-  
թեամբը: Ոճէ որ կ'ուզես գուն ալ  
տեսնալ սուրբ լուսուածանայ զօ-  
րաւոր պաշտպանութիւնը քու վը-  
րագ, եղիր ջերմեռանդ, եղիր աղօ-  
թառեր, եղիր իրեն որդեգիրը կամ  
զաւկի պէս, որպէս զի ինքն ալ ըզ-  
քեզ մօր պէս հոգայ ու ինամէ. ա-  
մէն կարօտութիւնդ լեցընելէն ետ-

քը, զարդարի զքեզ աստուածային  
չնորհքով:

Կ'ուզես իմանսալ սուրբ լուսուա-  
ծանայ գութը ու կակուզ սիրտը  
մեր վրայ, կարգս Հօվհաննու աւե-  
տարանին մէջը կանա զալիվեացոց  
հարսնիքին պատմութիւնը (Յուլ. 5.  
Գլ. 8.). ուր կը տեսնես (թէ սուրբ լու-  
սուածանին ինչ ինամիք ունի անոնց  
վրայ, որ զինքը մեծարելով կը կան-  
չեն իրենց տունը կամ իրենց հոգւայն  
բնակարանը: Լու երջանիկ հարսնի-  
քը երբոր եղաւ նէ, կանցուած էր  
սուրբ լուսուածանինը իրբեւ մայր  
գթած, որ իրենց ամէն կարօտու-  
թիւնը տեսնէ ու հոգայ. և որով  
հետեւ մեծ կարօտութիւննին Հօվ-  
սուսին հոն ըրլան էր, նայէ աս-  
տուածային կարգազրութիւնը՝ որ  
Հիսուս ալ կանչուեցաւ իր աշկերտ-  
ներամը, որպէս զի հոն տեղը սուրբ  
լուսուածանայ միջնորդութեամ-  
բը ընէ իր առջի հրաշքը: Ալ փա-  
փաքէին հարսնեւողք որ իրենց հարս-

նիքը պատուավ ըլլայ . կ'ուզէին որ  
նեղութիւն կամ պակսութիւն մը  
չիբաշեն . ուստի Աստուած անսանկ  
կարդ մը պաւ՝ որ ամէն ուզածնին  
շնչքով չնորհքավ ըլլայ :

Խ'նչ ցանկալի բան էր ան հարս-  
նիքին խնառու մը . ուր սուրբ Աստուա-  
ծածին եկեր էր զիբենք հոգալու , և  
Հիսուս օր հնելու ու կարօտութիւն  
նին լեցնելու . ասսր համար կ'երե-  
նայ թէ հարմնեւողներուն աւելի ու-  
րախութենէն , որ ասանկ մեծ պա-  
տույ են հասեր , մասնաւոր աստուա-  
ծային կարգադրութեամբը պակսե-  
ցաւ զինին . և որովհետեւ անսանկ  
անսպատմելի ուրախութեան մէջ  
մեծ ցաւ ու սրտկութուկ պիտի ըլ-  
լար փեսին ու ամէն հարմնեւողնե-  
րուն , շուտով մը սուրբ Աստուածա-  
ծին առանց մէկին խմացընելու գնաց  
ու ըսաւ իր սիրելի աստուածորդւոյն ,  
թէ հարմնիքը գինիի պակսութիւն  
ունի : Հասկրցիր ասովլ սուրբ Աս-  
տուածածնայ փոյթը ու խնամքը իր  
ջերմեռանդներուն վրայ , թէ ինչ-

պէս կը տեսնայ անոնց կարօտու-  
թիւնը , և թէ ինչպէս շուտովլ բա-  
րեխօս կ'ըլլայ իր աստուածորդւոյն  
առջելը :

Ի՞ն ատենը թէպէտ Հիսուս ե-  
րեցուց թէ հրաշք ընելու ժամա-  
նակը դեռ չէր եկած , բայց սուրբ  
կոյսը գիտնալով որ իր խնդիրքը ան-  
տարակոյս կ'ընէ իր սիրելի որդին ,  
մէկին գնայ ըսաւ ծառայողներուն՝  
որ պատրաստ կենան ու ինչ որ Հի-  
սուս իրենց ըսէ նէ , նային որ շու-  
տովլ կատարեն : Ուստի Հիսուս ու-  
ղենալով իր սիրելի մօքը կամքը կա-  
տարել , ու զմեզ ալ յորդորել որ  
միշտ անոր բարեխօսութեանը զի-  
մենք ամէն կարօտութեան մէջ ,  
ձեռք զարկաւ իր առջի հրաշքը ցը-  
ցընել աշխարդիս՝ ամենասուրբ մօ-  
քը խօսքովլ . որովլ խմացուց թէ ա-  
մէն չնորհք որ կը տրուի մեզի , պի-  
տի ըլլայ պտուղ մասնաւոր բարե-  
խօսութեան սուրբ Աստուածա-  
ծնայ :

Եւ որովհետեւ Աստուած իր ու-

դրմութեան մէջը առատ է, մանաւանդ երբոր իր ամենասուրբ մօրը միջնօրդութեամբը կ'ընէ, անոր համար չ'խառաւս հրամից ծառաներուն ջրով լեցընել վեց հատ քարէ կարասներն որ կային ան տանը մէջը, ու երբոր լեցուցին զանօնք ինչուան բերանը, չ'խառաւ մէկէն ըրաւ իր աստուածային հրաշքը. անանկ որ կարամներուն միջիեղած ջրերդ գարձան անուշ զինի եղան. ու անով իրենց հարմնիքը առանց շփոթութեան կրյան ուրախ սրտով կատարել :

Ուտմտա աս մամնաւոր իննանին ալ սուրբ Աստուածածնայ, որ չէ թէ մինակ հրաշք ընել տուաւ, որպէս զի հարմնիքին ան ատենի կարօտութիւնը լեցուի, այլ և չ'խառաւին ըրած հրաշքը ջնոննալու համար՝ այն չափ շատ ընել տուաւ զինին, որ կըրնային հարմնիքին ետքն ալ վայլել ու զմայլի Յիսուսին սիրովը. ինչպէս որ անանկ ալ եղաւ կ'ըսեն եկեղեցական պատմիները: Ու ասն զի

աս հարմնիքին տէրը կամ վեսան, որ եր կ'ըսեն Աիմն կանանացի, տէսնալով Յիսուսին հրաշքը թողոց ամեն բանը, ու իրեն աշկերտ ըլլալով, ասլրեցաւ ու մեռաւ Յիսուսին փառացը համար: (Վարչ Սբբոյ հտ. թ. երես 96):

Եայէ Իստուծոյթանը, թէ որ մէկը ուղենայ փրկել ինչ ճամբայ կը զնէ, ու ինչ կերպով զինքը ուորը կ'ընէ: Ուսէ մէկը՝ թէ աշխարքիս հոգը ու զբաղմունքը արգելք կ'ըւլայ հոգին փրկելու. ինչու որ ամէն վիճակի մէջ Իստուած իր չնորհքը ու ողորմութիւնը չնպակուեցներ. միայն թէ տեսնեն մարդոկի ու հետեին իրեն աղդարարութեանը, որ կ'ընէ ումանց աջողութեամբ, ու ումանց ալ ձախորդութեամբ:

Դիտնաս որ փրկութեան ապահով ճամբան է ջերմեռանդ ըլլալը սուրբ Աստուածածնայ: Ինիկայ քեզի կը սորմեցնի թէ: ինչպէս սիստոր Աստուծոյ ծառայես, ինչ բարեգործութիւն պիտի ընես, ու կեանքդ

ինչպէս պիտի անցընես : Եւ որպէս զի քու ջերմեռանդութիւնդ կարենաս առանց տարակուութու ընել, անոր համար ուզեցի առ կարծ գիբքս շնել, որ դիւրին ըլլայ չէ թէ մինակ տարին հեղ մը ամսուան մոածականներով ջերմեռանդութիւն ընելու, այլ և ամեն օրուան աղօթքներով, (որ պիտի դնենք մտածականներէն ետքը), պատուելու ու անդադար մեծարելու սուրբ Աստուածածնայ մայրութիւնը, որով արժանի ալ կ'ըլլանք իր բարեխօս սութեամբը յաւիտենական փրկութեան . ինչպէս որ կ'աղաւչ տուրբ Գրիգոր Կաքեկացին . “ յաձեան զօրեղ քոյն հայցուածոց լիցի մեղ անդատապարտ համարձակութիւն յատենի մեծ և ահաւոր սուրբ դատաւորին ” :



Կարգ որ կանոն ամսուան չերմեռանդուրեկան սուրբ Աստուածածնայ :

Որպէս զի աս բարեպաշտութիւնը չէ թէ միայն հաճայ ու ընգունելի ըլլայ սուրբ Աստուածածնայ, այլ և ընողներուն ալ զուարձալի ու հոգեոր զբօսանք մը, պէսք է պահել զաս կարգս :

Տանը մէջ ամենէն աղէկ տեղը կամ սենեակը, ուր որ սալվորութիւն ունին մէկտեղ ժողվուած աղօթք ընելու, պէտք է դնել ջերմեռանդաշարժ աղուոր պատկերք մը սուրբ Աստուածածնայ, ու որչափ կարելի է նէ զանազան մոմերով ու ծաղկըներով զարգարել զանիկայ, անսնի որ տեմնողները շարժէ ու յորդորէ ջերմեռանդութիւն ընելու :

Ի՞ն իրիկունը որ պիտի մտնեն մայիսի աաջի օրը, ամէնքը մէկտեղ ժողվուած իրուանին առջեւ մոմերը

վառելով՝ պիտի ըստի ջերմեռանն դութեամբ վարդարանը կամ պատկը և կամ լիթանիայն սուբք Աստուածնայ: Ենկից ետքը ըսելուէ ինչ որ այլ սուլորական աղօթքը ունինէ իրենց տանը մէջ: միայն թէ ետքի աղօթքները չափաւոր ըլլայ՝ որ շիճաննձրանն ու աղօթքներուն շատութեանը համար զիլզիրատան որ շուտ լմբննայ, այլ ջանան ընելամենայն զգաստութեամբ ու ջերմեռանդութեամբ:

Աղօթքները լմբնապալէն ետքը՝ ամէն մարդ վիճակաւ հանելու է մէյ-մէկ հոգեռոր բան, (որ պիտի առաջուց գրուած ու պատրաստած ըլլայ մասնաւոր պղտի թղթերու վրայ), որպէս զի ան կարճ հոգեռոր խօսքերը ամէն մէկին ըլլան հոգեռոր կրթութին մայիս ամսուան մէջ: Այս հոգեռոր խօսքերս, որ կ'ըսուի հոգեռ ծառէիներ, պիտի գնենք ետքի գըլլուուն մէջը՝ տասուերկու հատ, տասուերկու հոգիի համար: որպէս զի գիւրին ըլլայ բարեպաշտներուն ա-

ուանց աշխատանաց օրինակելու բանեցընել:

Այս թղթերէն ՚ի զատ (որ ամէն մէկը իրեն համար պիտի հանէ), պիտք է վիճակաւ հանել մէկ ուրիշ հոգեռոր ծաղիկ մ'ալ, որ ծառայէ ամենուն մէկտեղ մայիսի առջի օրը: Այս հոգեռոր ծաղիկն ալ կը գտնաս ետքի զիլուն մէջը, ուր պիտի դնենք երառնըմէկ հատ՝ մայիս ամսուն օրերուն համբանքովը:

Այս վիճակիները կամ հոգեռոր ծաղիկները հանելին ետքը, պիտի կարդացուի առջի օրուան մոտածականը հանդերձ ետքեի պտղով ու աղօթքովը, որ կը ծառայէն ամէն մարդու:

Իսածնիս առջի իրիկուան համար, պիտք է ընել ամէն իրիկուն մայիս ամսուան մէջը: բաց ՚ի առջի վիճակէն, որ պիտի ծառայէ ամէն մէկին բոլը ամսուան համար: իսկ երկրորդ վիճակը օրէ օր պիտի հանսւին

Ուտածականը կարդալու ատեն մէյմէկ քիչ մամբաւալու է ամէն մէկ բաժնին վրայ, իսկ ետքի դրուած

պատղին հառաջանքը օրուանմէջ շատ  
անդամ օրսանց զրուցելու է :

Ա կից ՚ի զատ ամէնշաբաթ կամ  
գոնէ տասանքինսդ օրն անդամ մը  
պէտք է մասնաւոր ջերմեռանդու-  
թիւն ընել, խոստովանք ըլլալով  
որ սրբութիւն առնելով : Եւ ամէն  
օր անէն դուրս ելլելու ատենդ ջա-  
նա որ երթաս այցելութիւն ընես  
եկեղեցնայ մը, կամ խորանի ու  
պատկերի մըստրք Տիրամօքնութեր-  
ջապէս բոլոր ամսուան մէջ անանկ  
կենցաղալարէ, որով ճանցուիս թէ  
նուիրուած ես սուրբ Աստուածա-  
ծնայ . Ճանալով գործքերդ անանկ  
ընել, որ անհաճայ չերենայ իրեն  
սուրբ ու մաքուր աշքերուն : Եւ եր-  
բոր ամիսը լըննայ նէ, քու սիրուդ  
որ հոգիդ նուիրէ սուրբ Աստուա-  
ծածնայ մասնաւոր ազօթքով մը, որ  
սիտի գնենք մասած ականներէն ետ-  
քը :

ԾԱԳԻՒԹ ՀՈԳԵԽՈՐ

Ցասուերկու բարի գործքեր, որ վիճակու  
բաժնելու և բնաւանեաց՝ Մայիսի առջի օ-  
րուան իրիկունք :

Ա. Աստուածանց անկողինեն ել-  
լելու ատենդ ջանա որ առանց հեղչ  
գութեան ելլես, որպէս զի օրուան  
սկիզբը զուարթութեամբ ըլլայ . ու-  
նայս որ պարկեշտութեամբ հա-  
զուիս ու մումրտաս ամէն օրուան հո-  
գեոր կըթութիւնդ :

Բ. Պ անա ամէն օր պատարագ  
լել, ու ջերմեռանդութեամբ ընել  
սուրբ Աստուածածնայ պաշտօնը :

Գ. Վ մէն օր քիչ մը ատեն ըլլայ,  
կարգաս մէկ հոգեոր զիրք մը . ինչ-  
պէս վարք սրբոց, կամ այլ խրատա-  
կան բաներ . փախչելով ան սնոտի  
զբքերէն, որ քու վիճակէդ գուրս  
են :

Դ. Պ անա ամէն օր զբէզ զրկե-  
լու մէկ զբօստնքէ մը, թէպէտ ան-

մեղ ու պատշաճ բան ըլլայ . ինչպէս  
նախաճաշիկ ընելէն , կամ զուար-  
ճապի բան մը տեսնալէն ու լսելէն ,  
կամ անուշահոտ ծաղիկ մը հոտուր-  
տալէն , և այլ ասոր նման բանելէն :

Ե . Վ զքբաներու վրայ գութ ցը-  
ցուր , տալով իրենց ողորմութիւն  
մը . թէ որ ուրիշ բան ալ չունենաս  
տալու , գոնէ նախաճաշիկդ տուր :

Զ . Վ մէն օր՝ բանի մը ձեռք չի-  
զարկած , ծունկ չոգէ՝ օգնութիւն  
ու պաշտպանութիւն իննզիկ սուրբ  
Վ ստուածածնէն :

Է . Վ մէն օր անէն ելլելու մօնաւ-  
լու ատենդ՝ սուրբ Վ ստուածածնայ  
պատկերը պատ , ու ըսէ իրեն մէկ  
Ողջն քեզ Վ արիստ մը :

Ծ . Վ անա որ աղէկ հնազմնդու-  
թիւն ընես քեզմէ մեծերուն , ու  
անոնց հրամանը սիրու կատարէ՛ ա-  
ռանց ուշանալու . միայն թէ ըսած-  
նին ըլլայ մեղք , կամ Վ ստուծոյ  
անհաճոյ բան մը :

Թ . Օ գոյշ կեցիր ուրիշի վրայ  
թէշ խօսելէն ու բամբասելէն , կամ

ուրիշը ծաղրելէն , թէպէտ և ըսածդ  
թէթ և բան ըլլայ . որ գէշ չխօսորվիս  
ու մեծ բաներու մէջ չլինիս :

Ժ . Վ մէն օր ջանան որ բարի օրի-  
նակով մը կամ անոյշ խօսքերով  
վաստըկիս ընկերներուդ միջէն զա-  
նիկայ՝ որ քան զամէնը անփոյթ է  
հոգեռորի . նայէ որ տանիս զինքը ե-  
կեղեցին . յօրդորես որ ըսէ սուրբ  
Վ ստուածածնայ պատկը , խօստովա-  
նի , սրբութիւն առնէ , կամ այլ  
այսպիսի բարեգործութիւններ ընէ :

Ժ Ա . Վ անա ամէն օր մէկ պըզ-  
տիկ ձկնութիւն մը ընել , կամ նե-  
ղութիւն մը քաշել սուրբ Վ ստուա-  
ծածնայ փառացը համար . Վ ս ճըզ-  
նութիւնս կրնայ ըլլալ . երբոր սե-  
ղանին վրայ մէկ աղէկ սիրած կերա-  
կուրդ գայ , կամ ամեննեին չուտե-  
լով անկից , և կամ քիչ ուտելով . կամ  
թէ սեղանէն գուրս ծուր չիխմե-  
լով , թէպէտ և ծարաւ ունենաս :

Ժ Բ . Վ անա որ աս ամսուան մէջ  
ներելի ու թէթ և մեղքէ ալ զգու-  
շանաս :

ԵԱՀԱԿԻՔ. ՀՈԴԵՆՈՒԹԻ

Երաներմէկի բարի գործքեր, որ Մայիս  
ամսուան մէկ տամէկ օր հանելու և վիճակա:

Ա. Առողք Աստուածածնայ ա-  
նունը նոր որ զրուած տեսնաս նէ,  
Համբուրէ ջերմեռանդութեամբ:

Բ. Պատարագ ընել տուր, կամ  
գոնէ մէկ պատարագ մը աւելի լու-  
քաւարանին միջի եղած ան հողի-  
ներուն համար, որոնք որ իրենց կե-  
նացը մէջ աւելի ջերմեռանդ են ե-  
ղեր սուրբ. Աստուածածնայ:

Գ. Վանի որ միտքդ ինինայ սուրբ.  
Աստուածածնայ յիշատակը, Զանա  
որ ըսես մէկ լողայն քեզ Մարիամ  
մը:

Դ. Աստուածանց հագուածիդ պէս,  
որ իրիկունն ալ հանուելէդ առաջ  
դառնալով դէպ'ի մէկ եկեղեցի մը,  
կամ մէկ ջերմեռանդաշարժ պատ-  
կեր մը սուրբ Աստուածածնայ, իրն-  
դրէ իր օր հնութիւնը քու վրագ:

Ե. Վանա մէկ բարիք մը ընել  
ան մարդուն, որուն հետ որ կար-  
ծես թէ ներջակութիւն մը ունիս,  
կամ թէ ատենօք վնաս մը տուեր  
ես իրեն:

Զ. Մանաւոր զգուշութեամբ  
պահէ զգայարանքդ, մանաւանդ ա-  
չուըներդ:

Է. Բոլէ տասնըհինգ տուն վար-  
դարանին իրեք մասին մէկը, կամ  
սուրբ Աստուածածնայ պսակը. զըր-  
կելով զբեզ մէկ զլուսանփէ մը:

Ը. (Օ)գնութիւն մը ըրէ քաւա-  
րանի ան հողիներուն, որ աւելի ջեր-  
մեռանդ են սուրբ Աստուածածնայ  
ու ըսէ իրեք Խ խորոց կարդացի:

Թ. Պատարագ լսելու ատենը ըզ-  
դաստութեամբ ու պարիկշտու-  
թեամբ կեցիր առանց ասդին ան-  
դին նայելու:

Ժ. Առողք Աստուածածնայ փա-  
ռացը համար ջանա որ պահէս ան  
աղէկ խրատները ու կանոնները որ  
տրուած է քեզի բարի ըլլալու հա-  
մար. մանաւանդ ան կանոնը, որ սո-  
վորաբար անփոյթ ես պահէլու:

ԺԱ. • Պահանակ որ ուրիշի նեղան  
թիւն մը չխտաս . մանաւանդ թէ՝  
երբոր ուրիշը քեզի տալու ըլլայ նէ ,  
սիրառ համբերես :

ԺԲ. • Լայէ որ ջանք ունենաս կար-  
դալուգ , աղօթքիդ և ամէն կարգիդ  
ու կանոններուգ , որ տրուած են  
քեզի :

ԺԳ. • Պատօտանց կանուխ ամէն  
գրծքէդ առաջ նուիրէն սուրբ Աս-  
տուածածնայ քու զգայարանքդ՝ ու  
ամէն գործողութիւնդ ալ որ պիտի  
ընես ան օրուան մէջը :

ԺԴ. • Պահանակ ամէն որ քիչ մը ա-  
տեն մտածական աղօթք ընել :

ԺԵ. • Պատարագ տեսնալու ա-  
տենդ ջանա որ հոգեւորապէս հա-  
զարդուիս : Որէն ներգործութիւն  
հաւատց , երկրպագութեան , զրդ-  
ման , առաջադրութեան ու փափա-  
քանաց սիրտդ ընդունելու զէնիսուս:

ԺԶ. • Ոիէ որ վրադ մէկ սնուի ու  
սուելորդ զարդարանք մը ունիս նէ ,  
ջանա վերցընել ու անոր դինը ողոր-  
մաւթիւն տալ աղբասներու :

ԺԷ. • (Ծը երկու անդամ՝ ջանա  
որ ներգործութիւն զղման ընես  
պագնելով խաչելութիւնը :

ԺԹ. • Պատօտանց արթընյածիդ  
պէս առանց տրնտընալու ելիք ան-  
կողինէն , որպէս զի օրուան սկիզբը  
թուլութեամբ ու ծուլութեամբ  
ըլլայ :

ԺԹ. • Օ քիչ զքեզ մէկ զքօսան-  
քէ մը , թէպէտ և պատշաճ ու ան-  
վաս բան մը ըլլայ :

Ի. • (Ծուան մէջ քիչ մը ատեն  
կարգամ մէկ հոգեւոր գիրք մը :

ԽԱ. • Իրիկունը պատկելէդ առաջ  
քննութիւն ըրէ խղճմանքիդ :

ԻԲ. • Աեզանէն գուրս օրուան մէջ  
մը ուտեր մի խմեր բան մը առանց  
հարկաւորութեան :

ԻԳ. • (Ծը իրեք անդամ՝ կոտըէ  
քու կամքդ , նուիրելով սուրբ Աս-  
տուածածնայ աս նկնութիւնս :

ԻԴ. • Աւեցած կերակրէդ կամ  
նախաձաշիկէդ ջանա որ բաժին մը  
հանես աղբըսի :

ԻԵ. • Պահա այցէլութիւն մը ըրէ

բանտը Եղողներուն, կամ չիւանդի  
մը . կամ թէ մէկ բանով մը մսի-  
թարութիւն տուրնեղութեան մէջ  
եղողներուն :

Ի՞՞ . ՞ Երմեռանդութիւն ընե-  
լով սուրբ Աստուածածնայ, իրեն  
գթութեանը յանձնէ զաննեք, ոյք  
որ մահացու մեղքի մէջ կը զըս-  
նուին նէ :

Ի՞՞ . ՞ այի՛ որ խոնարհական դործք  
մը ընես սուրբ Աստուածածնայ սի-  
րոյն համար :

Ի՞՞ . ՞ անա որ մարմնաւոր ա-  
պաշխարանք մը քաշես խոստովա-  
նաշօրդ հրամանովը :

Ի՞՞ . ՞ արի ու հոգեոր դործքե-  
րու մէջ նայէ որ ծուլութիւն ընես :

Լ . ՞ ազգատարած կենալով ըստէ  
եօթը Փառք հօր ՚ի պատիւ եօթը  
ցաւոց սուրբ Աստուածածնայ :

Լ.Ա. ՞ Խողութիւն ինզը՛ սուրբ  
Աստուածածնէն աս ամսութն միջի  
ըրած պակսութիւններուդ համար :

Ա.Ո.Ա.ՁԻՆ ՕՐ

Թէ ինչո՞ւ համար աս տմուռան չերմե-  
ռանդութիւնը պէտք է լնել :

Ա . ՞ ոդւոյդ փրկութեանը հա-  
մար մէծ կարօտութիւն ունիս սուրբ  
Աստուածածնայ : Ծակ որ անմեղես,  
գիտցիր որ քու անմեղութիւնդ մէծ  
վտանգի մէջ է : ՞ Բանի քանի մար-  
դիկ որ քան զբեզ աւելի անմեղ  
էին, ինկան մեղաց մէջ ու դատա-  
պարտուեցան : Ծակ որ ապաշխարազ  
ես, գիտցիր որ հաստատոն մնալոց  
ապահով չէ : Ա զի սովորութիւն-  
ներգ, ան առիթները ու ան հին քա-  
րեկամներն որ ունիս, կրնան զքեզ  
նորէն ձգել : Ծակ որ մեղաւոր ես,  
գիտցիր որ մէծ կարօտութիւն ու-  
նիս սուրբ Աստուածածնայ, որպէս  
զի կարենաս դառնալ ու զզալ մե-  
ղացդ վրայ : Ակար շատ անգամ  
ապաշխարել, ու չիկրցար զլուխ  
հանել : զիտցիր որ եթէ սուրբ Ա-

տուածածնայ միջնորդութիւնը ըլլ-  
լար նէ, ինչուան հիմա կարելի է որ  
կօրսուած ըլլայիր :

Բ. Այս ամսուան ջերմեռանդու-  
թեամբ կրնաս վաստրկիլ սուրբ Իս-  
տուածածնայ պաշտպանութիւնը ու-  
քու հոգւոյդ փրկութիւնը : Ի՞նկա-  
րելի է որ ասանկ զթած մայր մը մը-  
տիկ ըննէ իր բարեպաշտ զաւկին :  
Ո՞ւ հի վարդարան մը ըսելու համար,  
ու մէկ ծոմապահութիւն մը ընե-  
լու իր սիրոյն, մասնաւոր շնորհք-  
ներ տուեր է մեծամեծ մեղաւոր  
ներու + ուստի մոտմոտ թէ ինչ բա-  
րիքներ պիտի ընէ քեզի աս ամ-  
սուանս համար՝ որ բոլոր իր ծառայ-  
ութեանը պիտու նուիրես :

Գ. Այս քեզի թէ որ կորմացը-  
նես զաս շնորհքու + վայ՝ թէ որ սկը-  
սիս, ու քանի մը օրէն անհոգ ըլլա-  
լով թողոս զաս ջերմեռանդու-  
թիւնու : Ո՞վ զիտէ թէ աս վերջի  
շնորհքն է որ Իստուած կու տայ  
քեզի մեղքելզ գառնալու համար :  
Ո՞վ զիտէ թէ աս ջերմեռանդու-

թեանս չետ կապուած ըլլայ քու  
հոգւոյդ փրկութեան ապահովու-  
թիւնը : Եւ ուղ զիտէ թէ աս ա-  
միս ըլլայ քու կենացդ ետքի ամի-  
սը : Կարենալով մէկ պղտի բանով մը  
վաստրկիլ ասանկ մեծ ու զօրաւոր  
պաշտպանութիւնն սուրբ Իստուա-  
ծածնայ, ու անհոգ ըլլալով ընել  
զանիկայ, ինչ մեծ ցաւ ու խղճմը-  
տանք պիտի ըլլայ մեռնելու ատե-  
նը : Ի՞նչէ մումբատա ու պատրաստէ  
զեեզ :

Պատաշ: Ուուրբ Իստուածածնայ  
մէկ պղտի պատկերը կամ հանդեր-  
ձը պահէ քու վրադ, ու երբեմն միտ-  
քը բերելով զոււրբ կցոյը, սրտանց  
բուէ իրեն . Ո՞վ ամենասուրբ կցոյ  
Ո՞րիամ, քեզի կու տամ իմ սիր-  
տըս ու հոգիս : “ Ի՞նկանիւք առաջի  
քու Իստուածածին, և աղաւէւք զա-  
նարատ վեցյադ ” :

ԱՊՈԹԻՔ

Մայր ողորմնեթեան և ապաւեն  
փրկութեան սուրբ կցս Վարիամ,  
կը հաւտամ ու կը դաւանիմ ճշմա-  
րիտ սրատվ, թէ, գուն ըլլալովդ մայր  
Վատաձոյ միջնօրդ եղար մեր փրը-  
կութեանը: Լարօտ էինք քուկին  
կուսական մայրութեանդ, որպէս  
զի անենամք մեր Հիմուս փրկիւը.  
ինչպէս որ առանց քու աստուածա-  
մայրութեանդ որդի էինք դատա-  
պարտութեան, ասանկ ալ առանց  
քու բարեխոսութեանդ ամենեին  
տկար ու անպիտան ենք մեր հոգին  
փրկելու: Գիտեմ որ մայրական սի-  
րովդ կ'ուզես իմ փրկութիւնն: Ես  
ալ անօր կը փափաքիմ, սակայն մե-  
ղաւոր ըլլալով չեմ ճանչնար հո-  
գւոյս փրկութեան պէտք եղած բա-  
ները: Գիտեմ որ կը հոգաս ու կը  
ինամես քու որդիքդ: Ես ալ կը փա-  
փաքիմ անոնց մէջը գտնուիլ, որ-  
պէս զի արժանի ըլլամ քուկին ինսա-

մոյդ, սակայն անարժանութիւնս  
կը վախցընէ զիս + ուստի կ'աղաւեմ  
զքեզ մայր ողօրմնութեան, միսիթա-  
րէ զիս քուկին քաջըր սիրովդ + տուր  
ինծի անանկ չնորհք մը, որ ասկից  
ետքը ճշմորիտ որդիսութիւն ընելով  
քեզի, աղեկ ծառայեմ Աստուծոյ  
ու հանիմ յաւիտենական փրկու-  
թեան:

ԵՐԿՐՈՐԴ ՕԲ

Հոգոյ փրկուրեան վրայ:

Ա. Եկեր ես աշխարք մինակ քու  
հոգիդ փրկելու համար: Վզէկ զիտ-  
ցիր աս բանս: Ուսու եկեր ուտելու  
խմելու համար, կամ մեծնալու հա-  
գուելու և կապուելու, ևս առաւել  
մեղանչելու համար: այլ եկեր ես մի-  
նակ փրկելու քու հոգիդ: Խոչ օ-  
գուտ է քեզի աշխարքս վաստովիլ,  
ու քու հոգիդ կորալնցընել: Ուէ  
թագաւոր ես, կամ փիլիսոփայ, կամ

մեծ կարդացող, ի՞նչ կրնան օգտել  
քեզի քու իշխանութիւնդ ու քու  
կին զիտութիւնդ՝ երբոր չես սոր-  
ված քու հոգիդ փրկելը:

Ք. Մարդուս փրկութիւնը ա-  
նանկ բաներէն չէ, որ ապահով ըլ-  
լայ: Մտրկով ծախու չառնուիր, այլ  
աշխատանքով կը վաստըկուի, ու  
մէկ մահացու մեղքով ալ կը կոր-  
ուի: Փրկուելու համար չօգտեր որ  
մէկ հեղ մը անմեղ ու սրբուած ըլ-  
լայ մեղքերէն, այլ պէտք է որ նոյն  
սրբութեան ու անմեղութեան մէ-  
ջը մնայ ու տևէ ինչուան մահը: Ի՞նչ  
ապահովութիւն ունիմ ես իմ հո-  
գիս խալըսելու: Առջի կեանքս ան-  
ցոյցեր եմ մեղքով ու անհոգու-  
թեամբ: Հիմակուան կեանքս ա-  
նանկ խառնախնդոր բան մըն է, որ  
ես ալ չեմ ճանչնար: Ասկից ետքի  
կեանքս ինչպէս պիտոր ըլլայ, Ա-  
տուած զիտու:

Գ. Հոգին կորսնցընելը անանկ  
վաս մըն է, որ գեղ ու ճար չունի:  
Ընէ որ կորսնցընեմ մէկ առնելիք

մը, կամ դատաստան մը, կամ ա-  
ռողջութիւնս, կարելի է որ մէկ ճա-  
րը գտնուի: սակայն թէ որ անգամ  
մը կորսնցուցի իմ հոգիս, յաւի-  
տեան պիտի կորսուի: Ընէ որ մէկ  
ձեռքս անպիտան ըլլայ, մէկալը կը  
մնայ՝ որ կրնամ բանեցընել: Թէ որ  
մէկ ուժս սախտի, մէկալը կընամ  
քալելու ճարը գտնալ: Թէ որ մէկ  
ացք կուրնայ, մէկալով կընամ աես-  
նալ: բայց հոգիս որ մէկ է՝ երկուք  
չէ, կամ միայն կրնայ փրկուիլ, և  
կամ միայն դատապարտուիլ: Հա-  
պա ինչն համար ասանկ անհոգ եմ  
իմ հոգիս փրկելու: Կ'երենայ որ իմ  
փրկութիւնս ապահով եմ զրեր  
մորիս մէջը: Կ'ապրիմ առանց մըտ-  
մըտալու, և չիտեմ թէ հիմա որ  
մեռնելու ըլլամ նէ՝ ուր պիտի եր-  
թայ իմ հոգիս:

Պողոս: Գնամ սուրբ Աստուածա-  
ծնայ պատկերի մը առջեւ, ու բոլո-  
րով սրտիւ յանձնէ քու հոգիդ ի-  
րեն բարեխօսութեանը, ու լսէ.  
Կ'զախին Աստուածոյ և մայր, բար-

ձբացի պատիւ քո ինս, և ցուցյի  
փրկութիւն իմ քե ։ :

ԱՂՅԹԻՑ

Թա՛ որ այսչափ սիրելի է ինծի  
աշխըրքիս ողորմելի կեանքը, ո՞րչափ  
աւելի պիտի ըլլայ յաւիտենական  
երանութիւնը արքայութեան մէջ.  
սակայն ես կուրցած ըլլալով ու խա-  
ւարեալ մեղքով չեմ տեսներ իմ  
բարիքս, չեմ ճանչնար իմ օգտւոս-  
ուստի արքայութիւնը փնտռելու  
տեղ, ու իմ հոգւոյս փրկութեան  
ետեւէն լինելու, աշխըրքիս ունայն  
բաներուն հետեմ, մանաւանդ թէ՝  
հոգիս կորանցընելու : Կ'աղաքեմ ըզ-  
քեղ մայր լուսուծոյ, դուն որ միջ-  
նորդ եղար փրկութեան, լուսաւորէ  
իմ խաւարեալ միտքս, կակրցներ  
իմ քարացեալ սիրտս, որ ճանչնամ  
իմ հոգւոյս յաւիտենական բարի-  
քը, ու անոր փափաքելով ծառայեմ  
լուսուծոյ բոլորով սրտիւ, ու քու-  
կին զօրաւոր միջնորդութեամբ դ  
ճանիմ արքայութիւն :

ԵՐԵՌՈՒ ՕՐ

Մարդուն հոգոյն ազնուութեանը վրայ :

Ա. Մամրտա թէ քու հոգիդ որ-  
չափ աղնիւ ու պատուական բան մըն  
է, լուսուծոյ ստեղծուածը ըլլալուն  
համար : Ո՞վ ըրեր է զքեղ, — լու-  
սուած իր ձեռքովը : Որո՞ւն պատ-  
կերն ես գուն . — լուսուծոյ պատ-  
կերը ու նմանութիւնը : Լուսածս  
անանկ ձշմարտութիւն մըն է, որ  
լուսուած յայտներ է իր անստելի  
խօսքովը . Ո՞ւրար լուսուած ըզ-  
մարդն ի պատկեր իւր լուս պատ-  
կերի լուսուծոյ արար զնա . . (Ծննդ.  
Ա. 27) : Խնչու համար այսչափ ան-  
հոգ ես քու հոգւոյդ աղնուութեա-  
նը վրայ, ու մեղքով կ'ուզես կոր-  
սընցընել զաս գեղեցիկ լուսուծոյ  
պատկերը՝ սատանային փորձու-  
թիւններուն մաիկ ընելով :

Բ. Ո՞ւմրտա թէ որչափ աղնիւ  
պիտի ըլլայ քու հոգիդ, որ ծախս

առնուած է աստուածային արիւնով։  
Գիտես որ կորսուած էիր յաւիտե-  
նական դատապարտութեամբ . ով  
խալսուց զքէզ սատանային ձեռքէն։  
— Խալսուց հայրն երկնաւոր : Ի՞նչ  
բանով խալսուց . — Ո՞չ օսկի տա-  
լով և ոչ արծաթ , այլ անգին ու  
պատուական կեանքովը ու արիւնով  
իր միածին որդւոյն : Վզէկ մամբտա ,  
թէ աս ազնիւ հոգիիք , որ ասանկ  
սուղ առնուած է , նորէն պիտի կոր-  
սրնցընես մէկ չար ցանկութեան մը  
համար , կամ մէկ ոչինչ բանի մը  
համար :

Գ . Ո՞ւմբտա հոգւոյդ ազնուու-  
թիւնը , որ ստեղծուեր է յաւիտե-  
նական երանութեանը համար : Գի-  
տես որ որդեզբած ես երկնաւոր թա-  
զաւորին , ու մէկ օր մը պիտի նըս-  
տիս իր քովը , ու իրեն հետ թա-  
զաւորութիւն քշես : Պիտք է թա-  
զաւորի տղին որ իր հօրտունը աղէկ  
կենայ ու բարի ըլլայ , որպէս զի ինքն  
այլ ետքը կարենայ թագաւորէլ :  
Ո՞ւմածէ թէ դուն որ ժառանդ ես

արքայութեան , քուկին կեանքը ինչ  
բանով կ'անցընես , ու ուր կը կե-  
նաս : Ժնէ որ աղէկ մոտբտաս նէ ,  
կը գմնաս զքեզ տղմայ ու աղտեղու-  
թեանց մէջ անբան անասունի մը  
պէս : Կ'երկենայ որ չես ամբընար ու  
չես վախնար՝ Վստուծմէ հեռանա-  
լուդ համար :

Պատուլ : Վզէկ քննութիւն մը ըրե՛  
խղձնուանքիդ . ու թէ որ մահացու  
մեղք մը գմնաս հոգւոյդ վրայ , զնա  
շուտով խոստովանանք եղիր , ու ա-  
ռաջադրե՛ որ մէյ մ'ալ չինիս ան  
մեղքին մէջը : Ո՞իջնորդ բռնէ քե-  
զի սուրբ Վստուածածինը , ու ըսէ՛  
իրեն . “ Ձեռն տուր անկելցյս , տա-  
ճար երկնային . փառաւորեալ զոր-  
դիդ քո ՚ի քեզ՝ աստուածօրէն ինձ  
հրաշագործել քաւութիւն և ողոր-  
մութիւն . ” :

### ԱՂՅԹԻ

Գիտեմ Ճշմարիտ հաւատքովս ,  
թէ ստեղծուած եմ՝ Վստուծոյ , ու

իմ հոգիս իրեն պատկերն է : Այս-  
սուած էի յաւիտենական դատա-  
պարտութեամբ, ու ծախու առնուե-  
ցայ Հիսուսին ամենասուըք արիւ-  
նովլ, զարգարուեցայ աստու ածային  
չնորհքներովլ ու եղայ որդեզիր և  
ժառանգ արքայութեան : Ի՞այց ես  
անհոգ ըլլալով աս ամէն բարերա-  
րութեանց, նորէն սեցուցի իմ հո-  
գիս՝ աղտօտեցի զանազան մեղքովլ,  
հեւացայ իմ ստեղծողէս, գերի ե-  
ղայ սատանացի : Կ'աղաքեմ զբեզ,  
սուրբ կիյս Վարիամ, գուն որ քու-  
կին անարատ մնջրութեամբդ ար-  
ժանի եղար մայր Վատուծոյ ըլլա-  
լու, ընդունիս իմ ապաշխարու-  
թիւնս, որ բողըսովլ սրտիւ գառնա-  
լովլ մեղքերէս, կը ցաւիմ ու կը  
զղջամ իմ կուրութեանս վրայ, ո-  
րովլ չկըցայ ճանչնալ հոգւսա աղ-  
նուութիւնը : Տնր ինձի հաստա-  
տուն չնորհք մը, որովլ կարենամ  
ասկից ետքը սուըք սրտովլ ծառայել  
Վատուծոյ, ու արժանի ըլլալ երկնից  
արքայութեան :

ԶՈՐՅՈՒԹԻ ՕՐ

Մարմնոյ առողջութեան վրայ :

Ա. • Կը մեղանչես մարմինդ հանգ-  
չեցընելու համար, ու չես մատըտար  
որ մեղքը ընելովդ՝ աւելի վնաս կու-  
տաս անոր : Վի կարծեր թէ հոգիդ  
կորմնցընելովլ մարմինդ առողջ կը  
պահէս : Գիտցիր որ կամ երկուքն  
ալ պիտի ըլլան երանելի, և կամ  
երկուքն ալ դատապարտելի : Ժե՛  
որ դատապարտուի ատ քու մար-  
մինդ, չունիս ու ըիշ մ' ալ, որ կա-  
րենաս զանիկայ երանելի ընել : Վը-  
ժոխիքին տանջնանքը բոլոր մարմինդ  
իր ամէն բաներավլ պիտոր տանջէ :  
չէ թէ աս աշխըքիս ցաւերուն պէս,  
որ կ'ըլլան մինակ մէկ աեղ մը, կամ  
մէկ մասնաւոր անդամի մը վրայ :  
Ծանր կու գայ քեզի մէկ զլխու ցաւ  
մը քաշել, պինդ անկտոնոյ մը վրայ  
սպակիլ, անհամ կերակուր մը ու-  
տել, ու անհանգիստ տեղ մը նըս-

տիլ։ Հասպա Բնչպէս պիտի դիմանաւ գմբիլն միջի սաստիկ տան ջանքներուն։

Բ. Որչափ փափաք ու հպարտութիւնին ունի քու մարմինդ զարդարելու, գիտցիլ որ մեռնելէդ ետքը գլուխդ պիտի մնայ մէկ չոր ոսկոր մը առանց մօրթի, առանց աշքի, առանց բերնի, առանց լեզուի։ ձեռքդ ոտքդ առանց մօի, ու բոլոր մարմինդ մէկ աման մը գարշահոտութեան ու որդերու։ Ասոնցմէ՛ ի զատ՝ թէ որ գժոխըը երթալու ըլլաս նէ, բոլոր մարմինդ ներսէն զըրսէն կրակին մէջը պիտոր էրի մըկի։ Երեսդ սենայ, մաղերդ կորնմըրտի, լեզուդ կատուի, աշուներդ կրակի պէս վառուի, ու դուն ալ պիտի ըլլաս սատանայի մը պէս։ Աղէկ մըտմըտա զասոնք։

Գ. Ոչէ որ մարմինդ ուղենայ մեղանցել, պէտք է որ զուն քեզի ըսես։ Բնչ օգուտ ունի աս մարմնայս կամքը կատարել, ու ետքը գժոխըն կրակով յաւիտեան էրիլ ու տու-

րիլ։ Քիչ մը ատեն զուարձանալ, ու ետքը յաւիտեան տանջուիլ։ Ոչէ որ կ'ուզես մարմինդ սիրել ու զարդարել, ջանա անանկ սիրես ու զարդարես, որ ըլլայ քեզի ճշմարիտ աղուորութիւն մը ու պարծանք արքայութեան մէջ։

Պատուղ. Որէ մէկ մասնաւոր ճշգնութիւն մը, որ ըլլայ ապաշխարանք ան աւելորդ զբօսանքներուն դէմ՝ որ ըլլեր ես մարմինդ հանգչեցնելու համար. աղաչելով սուրբ Աստուածածինը, որ քեզի բարեխօս ըլլայ։ Գիտցիր որ սուրբ Աստուածածինը չէ մինակ իր ծերմեռանդներուն հոգւոյն պաշտպանն է, այլ և իրենց մարմնայն, ինչպէս որ շատ հրաշքներ տեսնուած է. անոր համար աղաչէ զինքը, ու ըսէ ծերմեռանդութեամբ. “ Հիւսեա միացն զմեղուցելոյս դառն հեծութիւն ընդ քումք էրջանիկ և ինկաւորեալ հայցուածոյ զի ՚ի քէն օգնեալ և բարեգործեալ . . . կեցից Վրիստոսի որդւոյ քո և տեառն . . .”

ԱԴՅԹԻՔ

Վայ իմին կուրութեանս որ մոռնարալ հոգւցոյ ազնուութիւնը , ու Աստուծոյ յաւիտենական բարիքն որ ինծի համար պատրաստեր է , մարմնոյս հանգստութեանը ետևէ ինկեր եմ : Ում մոմբտար որ մարմնս հոգալով , զե՞ն կու տամ հօգուոս , ու հոգիս կորսնցընելով մարմնսալ մէկտեղ պիտի կորսնցընեմ : Ո՞վ Աստուած իմ Հիսուս , լուսաւորէ իմ խաւարեալ միտքս , որ Ճանչնամ իմ Ճշմարիտ հոգեոր բարիս , ու Ժիխարտուիմ աշխարքիս սուտ բանելէն : Տնօր ինծի քուկին չնորհքըդ , որպէս զի սիրեմ նեղութիւն քաշելը քեզի համար , ու փախիմ աշխարքիս հանգստութենէն , որ զիս կը հեռացընէ քեզմէ : Աը փափաքիմ քեզի հետ մեռնիլ խաչին վրայ , քան թէ առանց քեզի թագաւորելաշխարքիսմէջը : Ո՞եծ հանգըստութիւն է ինծի քուկին կամք

կատարելը ու չարչարուիլը , քան թէ առանց քու կամացդ մէջութեան հանիլ ու փառաւորուիլ : Խնչ բարիք որ ունիմ՝ քեզմէ է . ու ինչ ազէկ բանի ալ յօյս ունիմ նէ , ան ալ քեզմավ պիտոր ըլլայ . ուստի կ'աշղաչեմ զքեզ , փրկիչ իմ Հիսուս , միջնորդութեամբ ամէնօրհնեալ սուրբ մօրդ , արթընցուր իմ թըլմ բած սիրտս , զքեզ սիրելու , զքեզ փնտըւելու , զքեզ տեսնալու , ու յաւիտեան ժառանգելու :

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՕՐ

Ժամանակի վրայ :

Ա. Անցնի ժամանակը , ու անոր հետմէկտեղ իմ կեանքս ալ կը պակիս : Տամնըհինգ , քսան , երսուն , քառսուն տարիներն որ պակսեր են իմ կեանքէս , մէյ մ'ալ չեն դանար . ու շտեմ թէ որչափ մնացեր է , թէպէտ զիտեմ որ քիչ մնա-

յած պիտոր ըլլայ : յամանակ ըստանիս՝ կարձ բան մըն է . օրերը կ'անցնին առանց իմանալու : թէ որ առ ժամանակս յաւխտենականութեան հետ կշուռք զարնելու ըլլանք նէ , չէ թէ մինակ կարձ է , այլ և բան մը չէ անոր քովը :

Բ . յամանակին կարձութիւնը ունի հետը մէկ անգին օգուտ մը , որ կրնանկը իր կարձութեանը մէջ վաստրիլ մէկ յաւխտենական երանութիւն մը : Վմէն վայրիեան կրնամ ինձի համար մէյմէկ աստիճան փառաց եւելընել արքայութեան մէջ : Վիչ մը ատեն թէ որ աղէկ մտմտամ հոգւոյս քաները , կրնամ խալսել իմ հոգիս սատանային ձեռքէն , ու դնել լուսուծոյ ձեռքը : Եթէ ամէն օր քիչ մը ատեն աղօթքի կամ պատարագ տեսնալու կամ հոգեոր գիշը մը կարդալու հետ ըլլամ նէ , կրնամ հեռանալ մեղքէն ու ապահով ընել իմ հոգւոյս փըրկութիւնը :

Գ . յամանակին կարձութիւնը

ունի հետը մէկ մեծ վախ մըն ալ : Վմէն ատեն կրնամ մեղանչէլ , կըրնամ մեռնիլ , կրնամ դատապարտուիլ : Ա այ ինձ , որ աս կարձ ժամանակիս մէջը կրնայի սուրբ ըլլալ , ու դեռ ասանկ մեղաւոր մնացի : Կորսընցուցի ժամանակս դատարկ բաներու մէջ . տղայութեան մէջ , խաղերու մէջ , զւօսանքի ու մեղերու մէջ : Վուչ օգուտ ունիմ հիմայ ձեռքս առջի ժամանակները դատարկ անցընելուս համար : Պիտի գայ օր մը , որ քիչ մը ատեն պիտօր ինդքեմ Վստուծմէ սպաշխարելու համար , ու ան ալ պիտի չկամնուի յաւիտենից :

Պիտուղ : Ուսնաւոր աղօթք մը կամ ջերմեռանգութիւն մը ըրէ Վստուածածնայ , գիտոյիր որ ան ջերմեռանգութեան ատենը չէ թէ մինակ դատարկ չանցնիր , հապա մեծ մեծ բարիքներու ալ պատճառ կըլլայ քեզի : Ուստի ըսմէ սուրբ Վստուածածնայ . “ Վրտասուօք օգնեալ վտանգեցելցոս գովեալդ ’ի կա 3\*

նայս . Ճունը խոնարհեցու առ իմ  
հաշտութիւն ճնօղդ Աստուծոց , :

ԱՂՅԹՔ.

Ի՞նչ մեծ քարիք է որ ինծի ըրեր  
եւ Աստուած իմ Հիսուս , տալով  
ինծի ժամանակ որ պակասութիւն  
ներս շտկելով հոգւոց փրկութեան  
ետևէ ըլլամ . սակայն ես անհոգ ըլ-  
լալով չէ թէ մինակ դատարկ ան-  
ցուցեր եմ իմ կեանքս , այլ մանա-  
ւանդ մեղքով կորսընցուցեր եմ ան-  
աղնիւ ու անդին ատենը , որով կը-  
նայի քեզի ծառայել ու իմ հոգիս  
փրկել : Ուստի բոլորով սրտիւ կը  
ցաւիմ ու կը զղջամ կորսընցնելուս  
վրայ , որ նորէն գտնալու ճարը չի-  
կայ . բայց կ'աղաւեմ քուկին դժու-  
թիւնդ , որ այսչափ համբերեր ես  
իմին անկարգութեանս , տաս ինծի  
քիչ մին ալ ատեն , որպէս զի կա-  
րենամ քու չնորհքովդ ապաշխա-  
րել ըրածներուս վրայ , ու շտկել  
իմ անթիւ պակասութիւններս : Ալ-

ինդրեմ քեզմէ ալ սուրբ Աստուա-  
ծածին , որ կ'ուղես իմհոգւոյս փըր-  
կութիւնը , բարեխօս եղիք Յիսու-  
սին որ ողօրմի ու տայ ինծի ժամա-  
նակ ապաշխարելու . Ես ալ կ'առա-  
ջազրեմ հաստատ սրտով որ ասկից  
ետքը իմ կեանքս անցրնեմ Աստու-  
ծոյ ծառայութեան մէջ : Ալ փա-  
փաքիմ մայր Աստուծոյ՝ հաւատա-  
րիմ մնալ որդիութեանդ մէջը , որ-  
պէս զի աշխըքիս վրայ վայյեմ մայ-  
րական ինսամբդ , ու ետքը արժանի  
ըլլամ արքայութեան մէջն ալըզ-  
քեզ փառաւորելու :

ՎԵՑԵՐՈՐԴ ՕՐ

Մանացու մեղաց վրայ :

Ա . Ասմընամ թէ մահացու մեղք  
ըրած ատենդ ինչ ուզեր ես լինել :  
Ուզեր ես քու կովմանէդ կռուիլ ու  
ոտից տակ առնել քու տէրդ , քու  
ատեղդողդ , քու հայրդ , քու փըր-

կեց, քու հոգւցդ փեսան, քու Այտաւածդ, քու ամէն բարիքդ ու մեծութիւնդ : ‘Եայէ՛ որ ըրածդ լինչ ամբարտաւասնութիւն է, որպիսի ապրատափութիւն, ապերախտութիւն ու անկարգութիւն : Կորսնցուցիր Աստուծոյ չնորհքը, Աստուծոյ որդեգրութիւնը, առջի կենացդ բարեգործութիւնը, արգայութեան ժառանգութիւնը, ու երկրնքէն զըժովքը գլորեցար :

Բ. • Ոյէ՛ որ մեղաց մէջ էս նէ՛ վայքեղի . զիտցիթ որ Աստուած է քու թշնամիդ, զիտցիթ որ սատանային գերին էս : Աը զբօնուու, ժուռ կուզաս, կը պառկիս, կ'ելեսու կը խննտաս . շիտես որ եթէ Աստուած իր ձեռքը վրայէդ վերցընէ, մէկէն կը մեռնիս ու կը դատապարտուիս : Հազարաւոր հրեշտակներ դժոխք ինկան՝ մողով գործուած մեղքի մը համար . հայա դուն ինչո՞ւ այսչափ մեղաց տէր ըլլալէն ետեւ ապահով կը կարծես զքեղ : Անչ կուրութիւն է ասիկայ :

Դ. • Ոյէ՛ որ մեղքիթ մէջ ալ չես նէ՛ , զիտցիթ որ միշտ վասնգի մէջ ես մեղանչելու : Անէկ սաստիկ փորձութիւն մը, ու մէկ ամյուսալի դիպուած մը կրնայ քեզի ըլլալ պատճառ մեղանչելու . մանաւանդ ան ատենը՝ երբոր դուն չես կարծեր : Հրեշտակը երկինքը մեղանչեց . Ասգամ զրախտին մէջ . Հուզա ու Գիտրոս առաքեալ մեղանչեցին Քրիստոսի դպրատան մէջը : Անէկ մտմբտա զասիկայ՝ որ դուն ալ եթէ հրեշտակի կեանքութիւնա, կամ Ազամնյա անմեղութիւնը, ու առաքեաներուն չնորհքը, կրնաս մէկ վայրկենի մը մէջ սատանայ դառնալ : Ատմբտա զասնոք ու վախցիր :

Պարուշ : Ոյէ՛ որ փորձութիւն ունենաս մեղանչելու, առ ձեռքդ սուրբ Աստուածածնայ վարդարանը, ու շերմեռանդութեամբ պազնելով զանիկայ, յանձնէ իրեն քուկին սիրտդու հոգիթ : Գիտցիթ որ սուրբ Աստուածածնայ յիշատակը կը պահէ զքեղ ամէն տեսակ փորձութիւննեւ :

բէն, ու աղաչելով ըսէ իրեն, ո՞յսա  
ըխօսեա վասն անձանց մերոց և ա  
զաշեա զմիածին որդիթ: Փրկել ըդ  
մեզ՝ ի փորձութենէ և յամենայն  
վանդից մերոց „:

ԱՂՅԹԻՔ

Զիտեմ թէ ընտոր լամ ու ցա  
ւիմ մեղքերուս վրայ, քրկիչ իմ  
Ծիսուս, որ մոռնալով քուկին մե  
ծութիւնդ, քու անթիւ բարերա  
րութիւններդ, ուղեցի աւելի սա  
տանային ծառայել քան թէ քու  
կամքդ կատարել: Ունէ որ մէկ բա  
րիք մը մինակ ըրած ըլլայիր ինծի,  
պէտք էր բոլոր կեանքս քեզի տայի.  
ուր մնաց որ ամէն բարկոս քեզմէ  
է, ու ես ալ առանց քուկին պահ  
պմնութեանդ ոչինչ եմ: Ո այ իմին  
ապէրախտութեանս, որ կուրցինե  
լով իմ հոգիս՝ չէ թէ մինակ չու  
զեցի ճանչնալ քուկին բարերարու  
թիւնդ, այլ և ծանր մեղքերովս  
սրգողցուցի զբեզ իմ տէրս, իմ փըր-

կիս, իմ բարերարս, իմ դատա  
ւորս: Ուստի կ'ամընամու կը վախ  
նամ առջևդ երենալու + զիտեմ որ  
արժանի եմ՝ դատապարտութեան,  
արժանի եմ ամէն պատժոյ. սա  
կայն կը հաւտամ որ քուկին ողոր  
մութիւնդ շատ աւելի ու անթիւ է  
քան զիմ մեղքերս. չէ թէ մինակ  
կը ներես ողորմութեամբ ու կը թո  
ղուս մեղքերուս պատիճները, այլ  
և կու տաս ինծի քու չնորհքդ, որ  
ասկից ետքը մեռնիս յանձն առ  
նում, քան թէ մահացու մեղքամ  
մը զբեզ սրգողցնեմ: Կը ցաւիմ  
ու կը զզուիմ ըրած մեղքերէս. կ'ա  
ռաջազրեմ ու կը փափաքիմ աս  
տուածային չնորհքովդ մնալ ու մեռ  
նիլ քու ծառայութեանդ մէջը, փա  
ռաւորելով զանհուն ողորմութիւնդ,  
որ ցըցուցեր ես ինծի:

ԵՕԹՆԵԲՈՐԴԻ ՕՐ

Անդաց պատուհաններուն վրայ :

Ա. Աստուած կրնայ պատժել  
մեղբը՝ ինչպէս որ ուզենայ : Մար-  
դիկ մէկմէկիշ փաստ քաշելով՝ շատ  
հեղ կ'ուզեն ոխերնին աւանուլ, ու  
չեն կրնար . սակայն Աստուած ա-  
սանկ չէ : Հերիք է որ կամենայ, մէ-  
կէն կ'ըլլայ ուզածը : Կրնայ պատ-  
ժել զբեղ վերցընելով՝ քու առող-  
ջութիւնդ, ունեցած ապրանքդ, ըն-  
տանիքդ ու քու կեանդք, հերիք է  
որ ուզենայ : Ճաէ որ մեղաց մէջ ես  
նէ, կրնայ հիմայ ալ պատժել զբեղ  
յանկարծակի մահուամբ մը, հերիք  
է որ ուզենայ : Մամբաւ թէ գի-  
տե՞ս կամ կրնան մի իմանալ Աստու-  
ածոյ կամքը : Կրբոր չիտեսնէ, ինտոր  
կրնաս մեղաննել ու անհոգ կենալ  
քու մեղբիդ մէջը :

Բ. Աստուած կ'ուզէ անտարա-  
կոյս պատժել զմեղբը : Ճաէ որ մեղբ

ըրեր ես, գիտցիր որ Աստուած կ'ու-  
զէ քեզմէ մէկ ապաշխարանք մը,  
կամ աս աշխարքիս մէջը, և կամ  
անդին՝ ի հանդերձեալն . կամ զլօա-  
լով մեղբիդ վրայ, և կամ գժովաքը  
տանջուելով : Դամ ու Խւա թո-  
ղութիւն առին իրենց անհնաղան-  
գութեանը, փրկուեցան ու սուրբ ե-  
ղան . սակայն իրենց մեղբին մար-  
մնաւոր պատիժը կը քաշուի կոր ին-  
չուան հիմայ : Ա ըսեր թէ մեղբ մը  
աւելի կամ մեղբ մը պակաս եմ ը-  
րեր, ինչ է եղեր . ինչու որ պատիժ  
մը աւելի, պատիժ մը պակաս ունե-  
նալը շատ մէծ բան է :

Գ. Աստուած հիմայ ալ կը պատ-  
ժէ կոր քու մեղբերդ : Ին հիւան-  
դութիւնները, ան քու տանդ ձա-  
խորդութիւնները, կորմնցուցած պա-  
տիւդ, յուսերուդ գատարկ ելլելը,  
քու թշնամիններուդ զրպարտու-  
թիւնները, աղջափ սաստիկ ու ան-  
համուսմ փորձութիւնները, չըլ-  
լայ թէ քու հիմ մօոցած մեղբե-  
րուդ համար ըլլան, որ դուն ամե-

նեին չես մտմըտար : Աակայն թէ  
որ ամէն կամքդ կատարուեր է , ու  
ամէն ուզածդ ալ յաջողութեամք  
կ'ըլլայ , զիտցիր որ աս պատիժը ա-  
ւելի մեծ է քան զատջինը . ինչու որ  
անով հաստատ կը կենաս քու գէշ  
վարփիդ մէջը , ու մեզզ մեզքի վրայ  
դնելով՝ կրակդ կը շատցընես դժախ-  
քին մէջը : Ասանց վրայ՝ թէ որ  
իոշճնանքդ ալ կորմնցուցեր ես , ու  
Աստուծոյ պատուհաններուն վախն  
ալ չունիս սրտիդ մէջը , վայ քեզի .  
զիտցիր որ բոլորօվին պատժուած  
ես աստուածային սաստիկ արդա-  
րութեամքը : Եթէ կայ մէկը , որ  
կարօտ ըլլայ մինակ սուրբ Աստուա-  
ծածնայ պաշտպանութեանը , զիտ-  
ցիր որ դուն ես :

Պառող : Խնկիր սուրբ Աստուա-  
ծածնայ պատիերի մը առջև , ու  
ինդը իրմէ որ Աստուծոյ պատիժը  
չեռացընէ քեզմէ : Վ անամ որ մեզ-  
քէ փախչելով շոկես քու վարփդ :  
Ով զիտէ թէ Աստուած ինչուան  
հիմա չփատժեր զքեզ սուրբ Աս-

տուածածնայ բարեխօսութեանը  
համար . ուստի ըսէ իրեն բոլորով  
սրտիւ . “ Իւրեխօսուեամ , ինդրեամ ,  
աղաչեամ . զի ըստ անձառելի մա-  
քրութեանդ և ահա զբանիդ հաւա-  
տամ զընդունելութիւն .” :

ԱՊՅԹԻ

Վայ ինծի , որ ձանչնալով Աս-  
տուծոյ ամենակարով ըլլալը , ու զիտ-  
նալով թէ մեզքէն կը գարչի , կ'ա-  
տէ ու կը պատժէ ընողները , անհոգ  
եմ եղեր զգուշանալու , մանաւանդ  
թէ ուզեր եմ մեզանչել առանց  
մոմբուալու Աստուծոյ արդարութիւ-  
նը : Վիտեմ , տէր , որ շատ անգամ  
արժանի եղեր եմ քուկին բարկու-  
թեանդ իմ մեզքերուս համար .  
սակայն աստուածային ողորմաւ-  
թիւնդ իմ ապաշխարութիւնս ու-  
զելով , անպատիժ թողուցեր է իմ  
մեզքս : Ու որ պատժէիր , արդար  
դատաստանդ կը ցըցնէիր . բայց ո-  
զոմեցար , քաղցր բարութիւնդ ե-

րեցնելով ինծի, որպէս զի գառնամ մեղքէս, պատկառիմ ըրածներէս, սիրեմ ողօրմած տէրդ, ու ծառայելով քեզի՝ փառաւորեմ քուկին մեծութիւնդ։ Եւ որովհետեւ ես ինծի տկար ըլլալով չեմ կրնար հաստատ մնալ առաջազրութեանս վլայ, կ'աղաքեմ զքեզ սուրբ Առտուածածին, եղիք ինծի օգնական ու պաշտպան, քու մայրական խրնամքով պահէ զիս սաստանային փորձութիւններէն, որ ըլլայ թէ մեղանչելով սրդալցնեմ իմ քաղցր փրկիչս, ու զրկուիմ իրեն անուշ տեսութենէն։ Աը փափաքիմ հմաքաշ չել մեղքիս պատուհասը, որպէս զի խալսիմ յաւիտենական տանջանքն :

ՈՒԹԵՐՈՐԴԻ ՕՐ

Մանուսի վրայ :

Ա. Պէտք է որ մեռնիմ մշկ օր մը. պիտի թողում իմ ընտանիքս, բարեկամներս, ունեցածս, ու այլ ամէն բաները՝ ինչուան աս մարմինս ալ։ Աստեղի բնակութիւնս պիտոր ըլլայ որդնալցից գերեզմաննը. իսկ անզինը յաւիտենական տեղ մը, ազէկ թէ գէշ, չեմ գիտեր։ Աս ըսածս անանկ ճշմարտութիւնն մըն է, որ կարօտութիւն չունի հաւտալու. վասն զի ամէն օր կը տեսնամ կորիմ աշքովս։ Աը մեռնին ծերերը, կը մեռնին պատիկները, կը մեռնին աղքընները, կը մեռնին ունեղոնները, կը մեռնին մեղաւորները, կը մեռնին սուրբերը. մեռաւ սուրբ Աստուածինը, մեռաւ Հիսուս ալ. ուստի պէտք է որ ես ալ մեռնիմ։

Բ. Գիտեմ որ պիտի մեռնիմ,

բայց թէ նւր կամ բնապէս . արդեօք  
տան մէջ , թէ եկեղեցինայ . նստած  
տեղու , թէ քալելու ատեն , ան չի  
տեմ ; Արդեօք մէկ պղտիկ տկարու-  
թեամբ մը , թէ մէկ ծանր հիւան-  
գութեամբ , կամ յանկարծակի մա-  
հուամբ , չեմ գիտեր . Արդեօք առ-  
կից երառու տարիին՝ թէ քսան տա-  
րիէն . ալ զիտէ՝ կարելի է ըլլալ աս  
տարի , աս ամսուան մէջ , կամ աս  
զիշէրս : Ո՞նակ Աստուած զիտէ ,  
ու ըսեր է ինձի թէ մահը զիշէ-  
րուան գողի պէս ան ատենը կու զայ ,  
երբոք չես կարծեր :

Գ . Անանկ կ'ապրիմ կոր , իբր թէ  
ամենենին պիտի չխեռնիմ , ու չեմ  
ուզեր ալ միտքս բերել մահը : Ծայ  
որ հիմայ մեռնելու ըլլամ , խղճն-  
տանքս անանկ աղտոտ է , որ աս աշ-  
խըքէս իրնամ մէկէն դժոխքը եր-  
թաւ : Ալ ճանճնամ զասիկայ ու կը  
վախնամ . բայց զՃարը չեմ ուզեր  
մտմտալ : Ալ ձգեմ ամնէ ամիս ու  
օրէ օր , և քանի որ կ'երթամ նէ՝  
կը մտենամ մահուան , ու մէղքերս

չեմ սրբեր : Ծայ որ մեղքիս մէջը  
մեռնելու ըլլամ նէ , ուսկից կրնամ  
գանգատիլ :

Պառակ : Օսունկ չոքելով գետի-  
նը , մասմասա քուկին հող ու մօխիր  
ըլլալք : Հողէ ստեղծած է մարմինդ ,  
ու նորէն հող պիտի դառնայ : Ուս-  
տի խնդրէ սուրբ Աստուածածնէն ,  
որ քովդ գտնուի հոգիդ տալու ա-  
տենը , ու ինքն ըլլայ քեզի բարե-  
խու Հիսուսին առջեւը : Բոլէ իրեն  
բոլըրով սրտիւ . “ ( ) ժանդակեան  
թեոցդ ազօթիւք՝ խոստովաննեալ  
մայրդ կենդանեաց . և ելիցն իմ  
յերկիս հոլովէ՝ առանց լվանաց  
հետեւել ’ի կեանս օթեվանայդ  
պատրաստութեան . զի թեթեասցի  
կատարածն իմ՝ ինձ ծանրացելցս  
անօրէնութեամբ , :

ԱՂՅԹԱԲ

Մայր կենդանութեան ու ապա-  
էն փրկութեան սուրբ կօյս Վա-  
րիամ , զիտեմ որ անտարակցս պի-

տոր մեռնիմք բայց չի գիտնալով թէ երք, ուր և ինչպէս պիտի մեռնիմք, կը զիմեմ խնարհութեամբ քու քաղցր մայրութեանդ, որ կ'ուզես ու կը փափաքիս ամենուն փրկութեանը կ'աղաքեմ որդիբական պատկանանքով որ ողորմիս ինձի, ու քու կին մայրական սիրովդ իննամես իմ հոգիս. որպէս զի կեանքս բարի գործքերով անցյնեմ, ու ամեն ատեն պատրաստ ըլլամ հոգիս քու ձեռքդ տալու : Կ'աղաքեմ զքեզ մայր ողորմութեան, օգնական եղիր ինձի ան ստիկալի օրը, երբոք հոգիս պիտի բաժնուի մարմինէս ու երթայ աշաւոր դասաւորիս առջեւը : Չունիմ բարեգործութիւն որ արդարանամ. չունիմ ինձի օգնական ու ապաւէն մը քեզմէ՞ի զատ : Ու բախացնուր իմ հոգիս քու պաշտպանութեամբդ. մասիթարէ զիս քու կին մայրական սիրովդ, որպէս զի արժանի ըլլամ արքայութեան մշջը փառաւորելու քու ողորմութիւնդ որ կը ցըցնես ինձի պէս մեզաւորին :

ԻՆՍԵՐՈՐԴ ՕՐ

Դատաստանին վրայ :

Ա. Դատաստանին օրը պիտի երկնաւը ջիւռուսի գատաւորին առջեւը : Ջիւռուս իմ հայրս էր, ու ես զինքը չսիրեցի. իմ տէրս էր, ու ես զինքը թողուցի. իմ լսուածս էր, ու ես զինքը անարգեցի : Պիտի իմացյնէ ինձի իմ ապէրախանութիւնս, իմ անհաւատարմութիւնս, ու անհոգութիւնս : Ին ատեննը ինչ երեսով կրնամ զիմել սուրբ Աստուածածնայ, որովհետեւ իր սիրելի որդինիմեղքուխոացեցի : Չեմ կրնալ աղաքել պահապան հրեշտակը, որովհետեւ իր բարի յորդորանքներուն ականջ միտուի : Իշխանքիս մէջը սատանան եղաւ իմ տէրս. ուստի ան օրն ալ անիկայ պիտի ըլլայ իմ թշնամիս :

Բ. Դատաստանին օրը աշխարհիս առջեւը պիտի կարգայուն իմ

ամէն մեղքերս : Խ'նչ մեծ ամօթձ  
պիտոր ունենամը ընկերներուս առ  
ջեւը , որոնց մէջը հրեշտակ մը կը  
սեպուէի . ծնողաց առջեւը , որ զիս  
ամսեղ կը կարծէին . խստավանա  
հօրս առջեւը , որուն մեղքս ջլզու  
յեցի : Պիտի կարդացուին ամէն մեղք  
քերս , մաքիս ծածուկ խորհուրդ  
ները , սրտիս փափաքներն ալ որ չեն  
կատարուած . ան ամընալու հեշ  
տու թիւնները . ան մեղքերը՝ որ մի  
նակ կամ մէկի մը հետ ըրեր եմ  
տանը մէջ , կամ վարպետին տունը ,  
կամ խանսւթը , կամ եկեղեցնայ  
մէջ : Խ'նչ խախտութիւն պիտի ըլ  
լայ ան ատենը :

գ. Դատաստանին օրը պիտի առ  
նում իմ վճիռս : Քիսուս Կթիս  
տու կամ պիտոր օր չ'սէ զիս սուրբե  
րուն հետ , և կամ պիտի անիծէ մե  
զաւորներուն հետ : Խարքը՝ կամ Հիւ  
սուսին հետ պիտոր երթամ ալբայ  
ու թիւն , կամ գատապարտելոց հետ  
դժոխքը : Աս վճիռս չիկրնար կախ  
մնալ քիչ մը ատեն , և ոչ ետ դառ-

նալ յաւիտեանս յաւիտենից : Խ'նչ  
մեծ ուրախութիւն է լեւը Հիսու  
սին բերնէն , թէ Եպիկեք իմ հօրս օր  
հնեալ զաւկըները , վայլեցեք իմ  
արքայութիւնս : Ի սոր ներհակ՝ ինչ  
սոսկալի բան պիտի ըլլայ լեւը , թէ  
Հեռացէք ինծմէ ով անիծածներ ,  
ու զացէք տանջուելու յաւիտենա  
կան կրակին մէջը : Աս երկու վճակն  
որը պիտի ըլլայ իմս : Ա այ ինծի ,  
զիտեմ որ գատաստան պիտոր եր  
թամ , ու անհօգութեամբ չեմ մըտ  
մըտար անոր լրայ :

Պիտուղ : Պառկելու ատենդ գիր  
թէ Աստուծոյ առջեւն ես , ու մամը  
տամ թէ ինչ կ'ըսէ քեզի խղճմը  
տանքդ : Հիմակութնէ միջնորդ բըռ  
նէ քեզի սուրբ Աստուծածննու , որ  
ան ատենը պարզերես ելես Աստու  
ծոյ առջեւը , ու ըսէ իրեն բողոքով  
սրտիւ . “ Ա բացես տօն ինձ բեր  
կըտ թեան զօրն իմ տագնապի , ով  
ջացուցիչ երկանցն Եւայի , :

ԱՂՅԹԻՔ.

Քանի որ կը մտմբտամ իմ մեղ  
քերս, կը դողամ ու կը սարսափիմ՝  
թէ ինչպէս պիտի երենամ իմ դա-  
տաւորիս առջեւ։ Կիտեմ որ ար-  
ժանի եմ ամէն պատժոյ. գիտեմ  
որ չունիմ բարիք մը, որ մեղքե-  
րուս գէմ զայ. այլ մանաւանդ կ'ս-  
տուծոյ ինծի ըրած անթիւ ողոր-  
մութիւնները մունալով, բանի տեղ-  
չեմ զրած ինծի տուած չնորհքնե-  
րը. ուստի անպատասխանի եմ, եր-  
բոր առջեւս զնէ իր ըրած բարիքնե-  
րը, ու իմ ապէրախտութիւնս : Ո՞ի  
միայն յօյս ու ապաւէն ձանշնալով  
զքէզ ինծի սուրբ Աստուածածին,  
կ'աղալեմ ինոնարհութեամք որ հե-  
մակուլնէ բարեխոս ըլլաս ինծի հա-  
մար, թողութիւն ինողրես մեղքե-  
րուս, ու տաս չնորհք մը որ ասկից  
ետքը ջանամ բողորով սրախ ըրած  
մեղքերուս վրայ զդալ, ու իմ սուեղ-  
ծողիս կամքը կատարել, որպէս զի

պարզերես ելլելով իր առջելը՝ ար-  
ժանի ըլլամ լսելու զան քաղցր ձայ-  
նը, թէ Ակէք իմ հօրս օրհնեալ  
զաւկըները, ժառանգեցէք ձեզի հա-  
մար պատրաստուած յաւիտենական  
արքայութիւնը „ :

ՏԱՄՆԵՐՈՐԴ ՕՐ

Դժոխիքի վրայ :

Ա. Ո՛վ մեղաւոր, կը տեսնան  
դու ան սոսկալի կըակով ու ծխով  
լցուն բանալը, որ քեզի համար պատ-  
րաստուած է՝ եթէ մեղքէկ չիդա-  
զրիս ու չիզգծաս : Աղէկ մուլթա ան  
կրակը՝ որ մէջը պիտօր կրիս հօգւով  
ու մարմնով, որով ըրեր ես քուկին  
մեղքերդ : Ան կրակը պիտի մըտ-  
նայ քու բոյօր ներսի աղիքներուդ  
մէջը, բերնիդ՝ ոսկըններուդ ու գըլ-  
խիդ մէջը, անսնկ որ պիտի ըլլաս  
կրակ դարձած երկըթի մը պէս, ու  
տանջաւելով սատսնաներուն ձեռ-

քը՝ ամէն զիեւէդ կրտակ պիտոր ցաթշ  
կէ : Խնչովէս պիտի կենաս ան սոս  
կալի կրակին մէջը , որ հիմա չես  
կրնար զիմանալ մէկ պղտիկ ձրագի  
մը բայցն , ու ինտոր չես մոտր-  
տար :

Բ . Ծաէ որ դատապարտուիս զը-  
ժոխըր , ինչ պիտոր լնես ան տե-  
ղը : Պիտի մոտըտաս՝ թէ քիչ մը  
բանով կրնայիր փրկուիլ ու չուզե-  
ցիր : Խիսքդ պիտի զան ան քարող-  
ները , ան կրթութիւնները , ան  
զբքերը , ու ան շնորհքները , որով  
Ասուած կանչեր է զբեզ ու դուն  
մտիկ չես ըրեր : Պիտի մոտըտաս  
զանոնք որ քու վիճակովդ էին , քու  
տարուօքդ , քու բնութենովդ , նոյն  
տնէն , ու նոյն վանքեն , որ փրկուե-  
ցան , ու դուն դատապարտուեցար :  
Ասոնք մոտըտալէն ետքը պիտոր  
կատղիս , յուսահատիս , անիծես  
զբեզ , ու անարդէս պահապան հրեշ-  
տակդ , բարեխոս սուրբերդ , զի՞-  
տուս քու եղբայրդ , և զուրբ Կյոյը  
քու մայրդ : Խնչ սոսկալի կեանք

պիտոր ըլլայ , ու ինչ զարհութելի  
խոռվութիւն գժոխիբն մէջ :

Գ . Խրբոր իյնիս ան կրակին մէ-  
ջը , մոմըտա թէ որչափ պիտի կե-  
նաս հան , արգեօք հարիւր , կամ հա-  
զար , կամ բիւրաւոր տարիներ + չէ ,  
այլ շատ աւելի : Իսկ թէ որչափ ,  
զիայիր որ որչափ Խտուած՝ Խ-  
տուած է , զուն ալ միշտ և յաւի-  
տեան պիտի միաս ան տեղը , ամե-  
նին մէկ տաեն մը պիտոր չունե-  
նաս հանգիստ , կամ շարժիլ մը ,  
կամ ացքդ գոյել , կամ կոթիլ մը  
ջուր պատակդ անցընելու : Ո՛վ զար-  
հութելի կրակ , սոսկալի գժոխիք , ու  
սարսափելի յաւիտենականութիւն :

Պատառ : Ծաէ որ կ'ուզես փրկու-  
թեան հանիլ , իննըրէ սուրբ Խ-  
տուածածնէն , որ աղէկ իմայլնէ  
քեզի թէ ինչ է գժոխիքը , ու երբոր  
մոնաս մէկ եկեղեցի մը , մտածէ աս  
բանս . Եթէ աս եկեղեցնայ մէջը  
յաւիտեան մնալու ըլլայի նէ , (որ  
սուրբ ու հանգիստ տեղ է) , ինչ  
ծանր նեղութիւն էր ինձի . Հապա

ի՞նչ պիտի ըլլայ դժոխքին մէջ։ Ու  
լսէ՛ բարօրով սրտիւ առ սուրբ Առա-  
տուածածինը։ « Ո՞յց Բատուծոյ,  
փրկել զանձնս մէր ՚ի յաւիտենից  
՚ի հրոյն աղաւեմք զքեզ»։

ԱԴՅԹՅԻ

Գիտնալով մեղքերուս շատու-  
թիւնը ու ծանրութիւնը, ես ինձի  
կ'ընեմ իմ գտատապարտութեանս  
վշիուը։ Եւ որովհետեւ ամէն տե-  
սակ մեղքով ու բոլոր մարմնով մե-  
զաներ եմ, արժանի եմ ամէն տե-  
սակ տանջանաց, մանաւանդ թէ մէկ  
դժոխքը քիչ է իմ մեղքերուս, վասն  
զի մէծ է ապերախտութիւնս որ ը-  
րեր եմ առեղծողիս դէմ։ Հոգի  
տուեր է ինձի, որ զինքը ճանչնամ  
ու սիրեմ, բայց ես իմ միտքս ու  
սիրտս տուեր եմ սատանային կամ  
քը ընելու։ Ո՞յց մին տուեր է ին-  
ձի, որ իր ծառայութեանը մէջ բա-  
նեցընելով բարիք պատրաստեմ ին-  
ձի արքայութեան համար, բայց ես

անհոգ ըլլալով տուեր եմ զիս աշ-  
խարհային բաներու + ազքս, ականջս,  
թերանս, ձեւքս ու այլ ամէն զգայա-  
րանքներս բանեցուցեր եմ իմ ստեղ-  
ծողիս դէմ։ ուստի ես իմ թերնողիս  
կը վկայեմ թէ արժանի եմ դժոխ-  
քին։ Բայց զիտեմ քու անհոն ո-  
ղորմութիւնդ՝ Վատուած իմ, փրկիւ-  
իմ, կեանք իմ Հիսուս Քրիստոս,  
նայէ՛ ողորմելի հոգւցոյ վրայ, որ ըն-  
կեր է քու առջևեդ, որ կ'աղաւէ խո-  
նարհութեամբ քուկին զթութիւդ։  
դուն որ ստեղծեր ես ձեռքովեդ, փըր-  
կեր ես չարչարանքովեդ, պահեր ու  
պաշտպաներ ես քու չնորհքովեդ, մի  
թօղուր որ կօրսուիմ, այլ միջնոր-  
դութեամբ ամէնօրհնեալ մօրդ  
դառնամ իմ մեղքէս, ու չնմարիս  
ապաշխարութեամբ արժանի ըլլամ-  
երկնից արքայութեան։

ՄԵՏԱՍՍՆԵՐՈՐԴԻ ՕՐ

Դաստիպարտելոց համբակեցին վրայ :

Ա. Աքքրդ դարձներ դէպ՚ի վար նայէ գժողովը, ու համբէ թէ մը զաշափ դատապարտուած մարդիկ կան ան տեղը Քրիստոսի աշխարհք գալին առաջ: Ծակ որ մտմբտանք մինակ ծրչեղեղին ատենը, այս բազմութեան գրեթէ ամէնը դատապարտուած են, բաց՚ի քանի մը հոգին, որ՝ Կյանահապետին հետ տապանը մտան, կամ զլջացն : Ուր գնենք Ասդոմայ ու Կամորայ բնակիները, և ուրիշ կասպաշտ աղջերը, որ կային ան ատենները: Վաենոյն իսկ Հրէից աղջեն որ Աստոծոյ ժողովուրդ էին, որչափ հոգիք դատապարտուած կան գժողովին մէջը :

Բ. Ումբտա ան դատապարտուածներուն համբանքն ալ, երբոր Քրիստոս աշխարհին վրայ էր նէ:

Ուշափ անդեղը անհաւատներ, որ չափ խստախրտ փիլսոփաններ, որ չափ հրէաններ որ հալածեցին զէնիսուս: Ուշափ մարդիկ ալ որ Հիսուսին հետը խօսեր են, վարուեր են, ու ազբովին ալ հրաշքները տեսած են: Ենոնց մէջն է Պիղատոս գատաւորը, Կայիսիրա քահանայապէտը, Հերովդէս թագաւորը ու Յուդա Հիսուսին աշակերտը, նաև ձախակողմեան աւազակը, որ Հիսուսին քովը խացնի վրայ մեռուս :

Գ. Ումբտա անոնց համբանքն ալ, որ Հիսուսին գալէն ետքը գատապարտուած են: Ուշափ մարդիկ որ Հիսուսի աւետարանին թշնամի եղան, Հատուծոյ հրաշքները չուղեցին տեսնալ, ու հալածեցին քրիստոնեանները: Ուշափ մեծ մէծ թագաւորներ, զօրապետներ, իշխաններ, փիլսոփաններ, ճարտասաններ, զիտուն բանաստեղծներ, որ աշխարհիս մէջը անուն ձգեցին: Ասոնցին՝ ի զատ՝ ուշափ ուղղափառ քրիստոնեաններ ալ կան, որ ունեին

Հշմարիտ հաւատք, լսեր էին քա-  
րոզներ, առեր էին լուսուծց չնորհ-  
քը մկրտութեամբ և այլ խօրհուրդ-  
ներով: Արչափ քահանաներ, ե-  
պիսակոպոսներ ու կրօնաւորներ: Դի-  
մա ալ որ ես կը մոմիսամ կոր նէ,  
արդեօք մրչափ հոգիք դժոխքը կը  
թափին: Լուսամէնը գիտանով կըր-  
նայ մոքէգ անցնիլ թէ մեզաւորնե-  
րուն ամէնքը զատապարտուելու ըլ-  
լան նէ, արքայութեան համար ինչ  
կը մնայ: Դիմացիր որ մեզաւորնե-  
րուն զատապարտուելին ոչ լուսու-  
ծց, և ոչ արքայութեան պակսու-  
թիւն մը կ'ըլլայ: Ոճէ որ կ'ուզես  
քիչերուն հետ փրկուիլ, նայի՛ որ  
քիչ մարդու հետ վարուիս:

Պատու: Դիր քեզի մասնաւոր  
ջերմեամսդութիւն մը, որ ընես բո-  
լոր կենացդ մէջ՝ ի պատիւ սուրբ  
լուսուածածնայ, որպէս զի ազատէ-  
զքեզ դժոխք երթալու վտանգնե-  
րէն: Դիմացիր որ շատ մարզիկ կըր-  
նային զատապարտելոց համբանիքն  
մէջը ըլլալ: թէ որ սուրբ լուսուա-

ծածնայ բարեխօսութիւնը իրենց  
ջիշամներ նէ: Ուստի ըսէ՛ իրեն բո-  
լորով սուտիւ . . . Միայն օրհնեալ  
սրբուհիդ ՚ի կանացյ . . . բարեխօ-  
սեաւ առ Տէր վասն անձանց մերոց,  
զի փրկեսցէ զմեզ ՚ի սպառնալեաց  
գեհնոցն . . . :

Աղջօթաբ:

Ճշմարտութիւն յաւիտենական  
տէր իմ Յիսուս Քրիստոս, դուն  
որ ըսիր քու անսուտ բերանովդ թէ  
շատ են կանչուածները սուրբ հա-  
ւագին մէջ ու քիչ են աննացմէ  
փրկուածները . զիտեմ որ ես ալ  
ասսուրբ հաւատքովս արքայութիւն  
կանչուածներուն մէջն եմ, բայց չլ-  
տեմ թէ արդեօք արդարներուն  
համբանիքն մէջը պիտի զտնուիմ,  
թէ չէ: Դիտեմ որ շատ են դժոխք  
զացողները, ու քիչ են արքայու-  
թիւն համազները, ուստի տարա-  
կուսեր եմ իմ փրկութեանս վրայ՝  
տեսնելով իմ անհոգութիւնս . որ

Է թէ մինակ սէր չունիմ բարիք  
ընելու, այլ և անդադար մեղաց հետ  
ըլլալով, կը սրգողցընեմ՝ զքեզ փըր-  
կիչ իմ չիսուս + ուստի արժանի  
եմ որ դատապարտելոց համբանքին  
մէջը իս ալ դնես : Ինյաց զիտնալով  
քու անբաւ զթութիւնդ, որ մեղա-  
ւորները գժոխիքէն խալոսելու հա-  
մար եկար աշխարհք, կ'աղաւեմը-  
քեզ տօւր ինծի քուկին չնորհքդ,  
որպէս զի միջնորդութեամբ ամեն-  
օրհնեալ մօրդ շտկեմ իմ վարքս .  
ու ճշմարիս զզջումալ ըրած մեղ-  
քերուս վրայ, արժանի ըլլամըսուր-  
բերուն համբանքին մէջը գտնուիլ,  
ու փառաւորել քու անհուն ողոր-  
մութիւնդ, որ ամենուն փրկութիւ-  
նը կ'ուղես :

### ԵՐԿՈՏԱՍԱԾՆԵՐՈՐԴ ՕՐ

Թրիստոնեին յարուրեանել վրայ :

Ա. Ո՛Վ Պատուած իմ, իս փրկե-  
լու համար ալ ի՞նչ բան կրնայիր ը-  
նել՝ որ չես ըրած : Ո՞ւ որ կը կան-  
չես զիս ողորմութեամբդ, ես կը մե-  
ղանչեմ՝ յուսալով քուկին բարու-  
թեանդ : Ո՞ւ որ կ'իմացրնես ինծի  
քու արդարութիւնդ, կը մեղանչեմ  
յուսահատելով քու ողորմութե-  
նեդ : Ո՞ւ որ կը միիթարես իմ  
սիրաս, կը մեղանչեմ յանդնու-  
թեամբ : Ո՞ւ որ սրգողիս, կը մե-  
ղանչեմ արհամարհութեամբ : Վ'ըլ-  
լայ որ արցունքովս կը թըրէմ խա-  
չելութիւնը, ու քիչ ատենէն ետ-  
քը կը դամնամ իմ մեղքերովս նո-  
րէն չիսուսին վէրքերը բանալու :  
Ի՞նչ մեծ չարտւթիւն է աս իմ չա-  
րտւթիւնս, որ ես ալ չեմ իմանար :  
Բ. Ո՛Վ Պատուած իմ, արդեօք  
բան մնացե՞ր է, որ չես ըրած իմ

փրկութեանս համար : Այբեր ես զիս  
տուրի եկեղեցնայ մէջը , տուեր ես  
ինձի լոյս՝ հանչնալու զքեզ . տուեր  
ես խղճմանք՝ մեղքել զգուշանալու  
համար . տուեր ես չնորհք՝ մեղքի  
դէմ կենալու համար . տուեր ես  
զանազան խորհուրդներ՝ արիանա-  
լու համար . տուեր ես բարի օրի-  
նակներ՝ սիրտ առնելու համար :  
Այեղք ըրած ատենս կրնայիր պա-  
տուհասել զիս , սակայն ողորմու-  
թեամբ թողութիւն տուիր : Ու-  
րիշ մեղաւոներու հետ արդարու-  
թեամբ վարուեցար . իսկ ինձի մի-  
նակ քու ողորմութիւնդ ցցուցիր :  
Ամէն բան ըրիթ ինձի մեղքես զա-  
նալու համար , ու ես անզեղջ մնա-  
ցի իմ մեղքիս վրայ :

Գ . ԱՎ Աստուած իմ , հիմա ինչ  
կրնամ ուզել քեզմէ իմ փրկու-  
թեանս համար : Ունէ որ սուրբ ա-  
րիւնդ ուզելու ըլլամ , ամէնն ալ ին-  
ձի համար թափեցիր : Ունէ որ հո-  
գիդ , զան ալ ինձի համար հօր Աս-  
տուծոյ ընծայեցիր : Ունէ որ մար-

մինդ , ան ալ ինձի համար խաչուե-  
ցաւ , ու անդադար կը պատարագուի  
իմ փրկութեանս համար : Աւստի  
ցնուեմ՝ ինչ բան ուզեմ որ իս մեղ-  
քեն դազրեցնիւ : Օ աս ամէն բա-  
րեր որ ըրեր ես իմ փրկութեանս  
համար , հանչնալով՝ նորէն կը մե-  
զանչեմ : ու անանկ կու գայ ինձի ,  
երբ թէ չնորհք ինձմէ պակաս ըլ-  
լալուն համար մեղքի մէջ կ'ինիմ :  
Ում հասկընար իմ խենցութիւնս ,  
որ պիտի գատապարտուիմ իմին չա-  
րութեանս համար :

Պատուած : Աինսորդ բռնելով սուրբ  
Աստուածածինը՝ չնորհակալ եզիր  
աստուածային բարեբարութեանցը  
որ քեզի ըրեր է , ու թողութիւնն  
իննդիք ապերախտութեան մեղքե-  
րուգ համար : Ազաքէ զինքը ու ըսկէ  
ջերմեանդ սրտով . “ Ա բարեխօ-  
սութիւն փութացիք մէզ սուրբ Աս-  
տուածածին՝ առ ՚ի փրկել զժողո-  
վուրցս ՚ի մեղաց և յասկականու-  
թէնէ , , , ”

ԱՂՅԹԻՔ

Ո՞վ տիրուհի իմ սուրբ Աստուածածին, մատրալով Աստուծոյ ինծի ըրած բարերարութիւնները ու իմն ապերախտութիւններս կը դողամ ու կը սահմբուկիմ, թէ ինչ պատասխան պիտոր տամ իմասեղծողին՝ երբոր երես զարնէ ըրած չարութիւններս իր անքառ բարութեանը դէմ: Կիտեմ ու կը ձանձնամ թէ Աստուած՝ իմ փղը կութեանս համար չէ թողոցեր մէկ ձար մը, որ ըրած ըլլայ իս արքայութիւն տանելու բայց ես իմ կուրութեամբս, իմ անհոգութես, իմն չարութեամբս ամէնն ալ բանեցոցեր եմ զինքը սրդողցընելու ու իմ հօգիս կորմնցնելու ուստի հիմա ձանձնալով իմ խենդութիւնս ու ամբընալով ըրածներուն վրայ, կը դիմեմ խճնարհութեամբ քու գլութեանդ սուրբ Աստուածածին: Կառն որ մեղաւողներուն հա-

մար եղար մայր Աստուծոյ, ցցածեր ինծի քու մայրութիւնդ՝ աղաւելով Յիսուս փրկիչը, որ իմ փրկութեանս համար եկաւ աշխարհը, քարոզեց, չարչարեցաւ, խաչեցաւ, մեռաւ ու յարութիւն առաւ, որ զիս ալ չնորհքով ողջընցընէ: քու կին միջնորդութեամբդ տայ ինծի չնորհք, օրպէս զի գառնամ իմ մեղծերէս, ցաւիմ ու զզջամ ամէնն չարութեանս վրայ, ու վարքս շտկելով ծառայեմ Աստուծոյ: Ո՞ի թողուր զիս մայր ողջընմաւթեան, որ պաղիմ ու հեռանամ քու ջերմեռանդութենէդ քանի որ սէրդ սըրտիս մէջը ըլլայ, գիտեմ որ պաշտամնութիւնդ ալ վրայէս պակաս չափար, ու քու քարեխոսութեամբդ արժանի ալ կ'ըլլամ արքայութեան:

ԵՐԵԲՏԱՍԱԱՆԵՐՈՐԴ ՕՐ

Գայրակղուրեան մեղքին վրայ :

Ա. Գայթմակղութեան մեղքը  
շատ մեծ անիրաւութիւն մըն է :  
Ուտմըտաթէ մէկ հօգի մը ինչ զին  
նստեր է, չիտուսի քրիստոսի : Կի-  
տես թէ ինչ նեղութեամբ, որպի-  
սի նախատինքով, չարչարանքով ու  
խաջով ծախու է առեր, ինչուան  
բոլոր արիւնը թափելով ու իր կեան-  
քը տալով : Իուն որ գայթմակղու-  
թեան մեղքով կ'ուզես գողնալ իր  
մէ զան հօգին, չիտուսին անոր հա-  
մար քաշած չարչարանքը անալիտան  
կ'ընես : Վճն մեծ ցաւ կու տաս չի-  
տուսի սրտին, ու կ'ըլլաս նման սա-  
տանայի, որ միշտ թշնամի է եղեր  
ու սարաննող հօգիներուն, անոր պէս  
դուն ալ մարդասպան կը սեպուիս  
քուկին գէշ խօսքերովդ, գործքե-  
րովդ, նայելովդ ու անկարգ վար-

քովդ, որ անմեղ հօգիները կը մնատ-  
նես մահուան :

Բ. Գայթմակղութեան մեղքը  
խորանկ փառ մըն է անթիւ մեղքե-  
րու : Վճն մեղքը՝ որ մէկին պատճառ  
կ'ըլլաս ընելու, քուկի կը սեպուի,  
ու ան առջի մեղքէն ետքը՝ ինչ մեղք  
ալ որ ընելու ըլլայ նէ, որովհետեւ  
քուկին գայթմակղութեան մեղքէդ  
շարժած ու ըրած կ'ըլլայ, ամենն ալ  
քուկի կը սեպուի : Վակից ՚ի զատ՝  
մեղանչեց մէկը քուկին չար օրինա-  
կովդ, ինքն ալ պատճառ կ'ըլլայ ու-  
րիշի մեղաց . և ասանկ՝ ան մեղքերն  
որ կ'ըլլան, քուկինդ կը սեպուին,  
ինչու որ գուն ես առջի պատճառը,  
ու քեզմէ սորված՝ սկըսան մեղան-  
չել :

Գ. Գայթմակղութեան մեղքը  
ծանր անարգանք է Վատուծոյ : Վս  
մեղքալ Վատուծոյ գէմ կը կուուիս,  
ու սատանային հետ մէկտեղ ըլլա-  
լով՝ քու կողմանէդ կը ջանաս պակ-  
սեցնել Վատուծոյ փառքը ու պա-  
տիւը : Վապարկեշտ նայելովդ, ինը-

տալովդ՝ խօսելովդ եկեղեցնայ մէջ՝  
անպատիւ կ'ընէս Աստուծոյ տունը :  
Աթ յափշտակես Հիսուսին ձեռքէն  
իր անգին արիւնով ծախու առնուած  
հօգինները, ու կը մասնէս սատա-  
նային ձեռքը, զրկելով զանոնք եր-  
կից արբայսով թէնէն . անանկ որ՝  
արբայսով թիւն ալ կը զրկես իր յա-  
ւիտենական փառքէն՝ պակսեցնե-  
լով անկից Աստուծոյ օրհնաբանիչ-  
ները, որ փրկուելով սուրբերուն  
հետ պիտի օրհնէնին զլ Աստուծուած յա-  
ւիտեանս յաւիտենից : Ուսող զան  
ալ որ պատճառ ըլլալով արիշի դա-  
տապարտութեան, կը շատոցնես զլ-  
ժոխքին միջի եղածները, որ պիտի  
անիծեն ու հայհյեն մէկզմէկ :

Առմբուա՛ հիմա՝ թէ մըշափ պարաք  
պիտոր ունենաս Աստուծոյ այսչափ  
տարուան գայթակզութեան մէզ-  
քերուդ համար : Եւ զիտցիր որ Աս-  
տուած իր բարութենը համար կ'ըն-  
դունի քու պաշխարութիւնդ ու  
հերիք կը սեպէէ, թէ որ ասկից եա-  
քը բարի օրինակալք կամ խրատով

վաստըկիս իրեն մէկ հօգի մը փո-  
խանակ այնչափ հօգիններուն, որոնց  
կրտուելու պատճառ ես եղեր, ուս-  
տի ջանա որ քիչ մը բանով հաշ-  
տուիս Աստուծոյ հետ :

Պարուած՝ Կայէ որ մասնաւոր պար-  
կեշտութիւն մը ունենաս եկեղեց-  
նայ մէջ, Ճամբան քալելու ատենդ,  
ու կենցաղավարութեանդ մէջը . որ-  
պէս զի ուրիշի տուած գայթակզու-  
թիւններուդ գեղ մը ըլլայ . ու ըսէ  
առ Աստուած բողոքով սրտիւ՝ միջ-  
նորդ բանելով քեզի սուրբ Աստուա-  
ծածինը . Համենայն ժամ՝ աղա-  
շնկ իմ այս են, ի մեղաց իմոց  
սուրբ արա զիս Տէր, և յօտարէն  
պահեալ զծաւայս քո , :

### ԱԴՅԹԹԻ

Վայ ինձի, որ իմ մեղքերս հե-  
րիք չակելով, ուրիշի ալ պատճառ  
եղեր եմ չար օրինակներովս մեղքի  
մէջ ձգելու : Պարծակից եմ եղեր  
սատանայի՝ Հիսուսին զէմ կռուե-

լու համար . ու իր սոռըր արիւնով  
ծախու առնուած հոգինսերը զսկեր  
եմ արքայութենէն , ու դժոխքի որ  
գի եմ ըրեր : Այստեմ՝ թէ ինչ  
բանով կընամ զեզ ընել աս իմ ը-  
րած վասաներուս , բայց եթէ ինսիլ  
քու առջևեդ սուրբ Աստուածածին ,  
ու աղաչել քսեկին բարեխոսու-  
թիւնդ : Իուն որ մայր ես ողորմու-  
թեան , ողորմէ ինծի անարժան մե-  
զաւորիս , երեցընելով զօրաւոր միջ-  
նորդութիւնդ՝ որպէս զի խալքսիմ  
չէ թէ մինակ իմ մեղքերէս , որ ես  
ինծի զէն տուեր եմ , այլ մանաւանդ  
ան ծանր մեղքերէն , որով ուրիշի  
հոգւոյն սպատճառ եմ եղեր կոր-  
սուելու : Աղաչեմ զբեզ մայր Աս-  
տուածոյ . գուն որ ապաւէն ես մե-  
զաւորաց , միմիթար վշտացելոց ,  
սպաշտպաննէ ու միմիթարնէ իմ վշտա-  
ցեալ հոգիս , որ ճշմարիս զզնումով  
կը ցաւիմ ըրածներուս վրայ , ու  
կ'առաջազրեմ Հիսուսին չնորհքո-  
վը , որ ասկից եաքը բարի օրինակ  
տալով ուրիշի , ջանամ վասարկիլ

գոնէ մէկ հոգի մը , որ գեղ ըլլայ  
անցած զացած մեղքերուս , ու ա-  
սով քու մայրութիւնդ փառաւո-  
րուի իմ վրաս :

---

## ԶՈՐԵՔՏԾԱՍԽԵՐՈՐԴ ՕՐ

Մարդկային նկատման վրայ :

Ա . Վամբուամ թէ ինչ է պատ-  
ճառը , որ կ'ուզես վարդք շտկել , ու-  
շես կրնար : Ուէ որ աղէկ մտմբուա-  
լու ըլլանէ , ուրիշ բան չէ , բայց  
եթէ մարդկային նկատմանքը (սայ-  
ուէ) , որ չիթ-աղուը քեզի ձեռք զար-  
նել : Ուէ որ չերթամ կ'ըսես ան  
տանը կամ ան տեղը , պիտի զրո-  
ցեն մարդիկ թէ խոստովանահայրը  
արդելքը է որ չերթայ : Ուէ որ չե-  
ռանամ իմ գէշ ընկերներէս , պի-  
տի ըսեն որ ճշնաւոր կ'ուզէ ըլլալ :  
Ուէ որ գաղրիմ ծաղրածութիւն  
ընկելէն , պիտի ըսեն թէ տաքարիւն

մարդ է : Այժմ է պարկեցած նայուածք  
ունենամ՝ ու փախցիմ՝ խաղալէն ,  
խնտալէն ու զբօսանք երթալէն , պի-  
տի խնտան վրա ու բան՝ թէ խըղ-  
ձահար մարդ մըն է : Խնչ մեծ խեն-  
դութիւն է դատապարտուիլ մարդ-  
կային նկատմանը համար :

Բ . Փափաք կ'երեց ցընես սուրբ  
ըլլալու , սակայն ամենեին ետեւէն  
չես իշնիր : Խնչ է պատճառը , եթէ  
ոչ մարդկային նկատմանը : Ուշ որ  
ժողում կ'ըսես մարդկանց չետ վա-  
րուիլ , զբօսանք երթալը , պիտի ը-  
սէն խնդի համար՝ թէ լեռնցի է ու  
մարդկութիւն չունի : Ուշ որ զար-  
գարանքներս ու աղուոր հագուստս  
մէկդի ճգեմ , պիտի ըսէն թէ գե-  
ղացի մըն է , աղուոր բաներէն չե-  
հասկընար : Այժէ տեսնան որ սուրբ  
աեղուանք կը պտըտիմ , կամ ժա-  
մերը , կամ հիւանդանոցները ու  
ջերմեռանդութեան չետ կ'ըլլամ ,  
պիտի ըսէն թէ կեղծաւոր մարդ մի  
է : Չես գիտեր որ ասանկ սուս մըտ-  
մըտուքներով կը կարմնցընես պրօւ-

թեան փառքը , թէ հոս և թէ ան-  
դին արքայութեան մէջ :

Գ . Ուշ որ քեզի ամօթ կը սեպես  
Յիսուսին խաչելութիւնը , Յիսուս  
ալ քեզ պիտի ամըցցնէ հրեշտակ-  
ներուն առնելը , ինըպէս որ կը զու-  
ցէ ինքը աւետարանին մէջը ( Կուկ .  
թ . 26 ) : Դատաստանին օրը երբոր  
ըսելու ըլլաս իրեն , թէ Տէր՝ չես  
ձանչնար զիս որ քրիստոնեայ եմ ,  
Յիսուս պիտի զուցէ քեզի՝ թէ  
չեմ ձանչնար . ինչու որ ամըցցար  
իմ նշանս քու վրադ կը ելու , չուզե-  
ցիր չերմեռանդ երկնալ բարի գործ-  
քեր ընել , երկիւզած ըլլալ . ուստի  
չեմ ձանչնար զքեզ՝ թէ իմ աշ-  
կերտս ես : Վնամ քու չար ընկերնե-  
րուդ չետ սատանային քովը , որ ըզ-  
քեզ կը ձանչնար . վասն զի ես քեզ  
չեմ ձանչնար :

Պ . Պրոռդ : Ուր որ տեսնեսնէ սուրբ  
Կատուածածնայ պատկեր մը , ըրմէ  
իրեն քու յարգութիւնդ առանց ա-  
մընալու . զիտացիր որ մինակ անոր  
բարեխօսութեամբը կը հնաս պազպե-

թես ելլել Յիսուսին առջել, ու ը-  
սէ իրեն բոլորվ սրտիւ . “ Արքու-  
հի Արքիամ մայր Աստուծոյ, բա-  
րեխօսեա վասն մեր մեղաւորաց ” :

ԱՂՅԹԻ

Ո՞վ Աստուծ իմ Յիսուս՝ կա-  
մընամ ու կը պատկառիմ մատը-  
առաջ իմ խենդութիւնս, որ մաս-  
նարով քու մեծութիւնդ՝ ծառայեր  
եմ աշխարհիս ունայնութեանը : Ա-  
ւելի ու զեր եմ մարդկանց հաճոյ  
ըլլալ՝ քան թէ քեզի փրկիչ իմ Յի-  
սուս : Ա ախցեր եմ մարդկանց խօս-  
քերէն, ու չեմ վախցեր քուկին ար-  
դարութենէգ : Ի՞նչոդ եմ եղեր  
պատուիրանքը պահելու, աշխարհիս  
դէշութեան հետևելու համար : Ա-  
մօթ սեպեր եմ ինձի քու խաչդ,  
ու փախեր եմ անկից առանց մատը-  
տալս՝ թէ սուրբ խաչը պիտի ըլ-  
լայ ինձի պարձանք արքայութեան  
մէջ : Ամըցեր եմ բարի քրիստո-  
նեայ երենալու, ու չեմ ամըցեր

սատանային ծառայելու, ու մեղքե-  
րով իմ հոգիս սեցընելու : Ա այ ին-  
ձի երբոր ելլեմ քու առջեղ, երբոր  
մեղքերս երեսս տաս, երբոր ցըցը-  
նես ինձի քուկին բարկութիւնդ ու  
վունտես զիս քու տեսութենէգ : Աը-  
ցաւիմ որ ինչուան հիմա ասանկ գէշ  
վարք ունենալով անարգերեմ քրիս-  
տոնէութեան անունս, ու նախա-  
տինք եղեր եմ իմ փրկչիս . ուստի  
վախնալով ու ամընալով ըրածնե-  
րէս՝ կը գիտեմ քեզի սուրբ Աս-  
տուծածին . գիտեմ որ մինակ քու  
բարեխօսութեամբդ կընամ շակել  
իմ վարքս, կընամ պարզերես ել-  
լել Յիսուսին առջել . անոր համար  
կ'աղաքեմ զքեզմայր ողորմութեան՝  
ինամեկ զիս մայրական սիրովդ, վա-  
ռէ իմ սիրաս Յիսուսին սէրը, որ  
ասկից եաքը քուկին միջնորդու-  
թեամբդ ըլլամ Շմարիտ ծառայ  
Աստուծոյ, ու իմ բոլոր կեանքսնուի-  
րեմ իր սիրոյն, որ արժանի է ամէն  
ծառայութեան :

ՀՆԳԵՏՍ.ՍՍ.ՆԵՐՈՒԴԻ ՕՐ

Արքայուրեան վրայ:

Ա. Մտմրտան թէ ինչ բան կը  
սիրես աշխըզիս մէջը: Ճաէ որ ա-  
զատութիւն ու համարձակութիւն  
կ'ուզես, զիտցիր որ արքայութիւն  
երթան նէ կրնաս ու զածիդ պէս հա-  
մարձակ քայլել օգոյն մէջը, զէպ 'ի  
երկինքը երթալ' արեւուն, լուսըն-  
կային ու աստղերուն քովը: Կրնաս  
քիչ ատենի մէջ երկինքէն վար իջ-  
նիլ, ու աշխըզէս երկինքը ելլել:  
Կրնաս համարձակ առանց արգելքի  
մանալ ելլել ուր որ ուզենաս նէ:  
Ճաէ որ կը փափաքիս անուշ ձայներ  
լսել, գնան արքայութիւն, ուր լսես  
հրեշտակներուն ու սուրբերուն ա-  
նուշ երգերը: Ի բայցութեան մէկ  
նուագարանին ձայնը քիչ մը ատեն  
լսելով սուրբ Քրանչիսկոս, բոլորո-  
վին յափշտակուելով մառցաւ զինքը  
ու իր ամէն զգայութիւնը:

Բ. Ճաէ որ կը փափաքիս աղուոր  
ըլլալու, զիտցիր որ արքայութիւն  
երթաս նէ՝ աչուըներդ պիտի նմա-  
նին մէյմէկ աստղերուն, բորբ ե-  
րեսդ պիտի փայլի արեգական պէս  
պայծառ և գեղեցիկ: ճեռուըներդ  
պիտի զարդարուի աննման զարդե-  
րով, ու բօվանդակ մարմինդ փառա-  
ւոր և անպատմելի լրւոսվ պայծա-  
ռանայ: Ճաէ որ կ'ուզես իմաստուն  
ու խելացի ըլլալ, գնան արքայու-  
թիւն, ուր մէկին 'ի մէկ կ'ըլլաս ի-  
մաստուն քան զիօղոմնն, խելացի  
քան զամէն փիլիսոփաները, առանց  
աշխատանքիկունենաս ամենէն քա-  
րակ ու խորունկ զիտութիւնները,  
ու անսնցմով զմայլելով՝ ամենենին  
չես ձանձրանար:

Գ. Ճաէ որ կը փափաքիս վայել  
աշխըզիս մէջի եղած բաներուն ա-  
զուորութիւնը, զիտցիր որ քան զա-  
նանք շատ աղուոր է իրենց ստեղծո-  
վը, զոր երես երեսուով պիտի տեսնաս  
արքայութեան մէջը, ու մօտանց պի-  
տոր զմայլիս ու ըլլաս երանելի: Ճամդ

զան ուրախութիւններն ալ որ պիտի ունենաս՝ տէսնալով հրեշտակներուն բազմութիւնը, սուրբ նահապետները, առաքեալները, մարտիրոսները, քու պաշտպան սուրբերդ. և մանաւանդ զուրբն սրբոց Յիսուս փրկիչը, ու սուրբ կոյս Աստուածածինը : Ճէ որ կը փափաքիս մեծութիւն ու ապրանք վաստրկելու, գնաւ արքայութիւն՝ ուր կը ժառանգեն զլութեամ, որ տէրն է ամեն մեծութեան ու աշխարքիս հարստութեանը : Ինքը բոլոր քուկդպիտի ըլլայ, ու բնաւ մէկը չիկրնար զանի քերպէց գողնալ. ու գուն ալչես կրնար զինքը կորսնցընել. ուստի պիտի վայլես զինքը յաւիտեանս յաւիտենից : Խենդ ես, թէ որ մէկովնէ բանի մը համար կորսնցընես ասանկ մեծ բարկը արքայութեան :

Պառադ: Ծննտը ունեցածներուդ մէջը, թէ որ անանկ բան մը կը զըտնուի, որ անվայել է քեզի կամ պարկեշտութեան, դուրս ձգէ ու չեռացը քեզմէ սուրբ Աստուածածնայ

միրոյն համար : Դիմոցիր որ շատ մեղադրներ աս բանավս արժանի եղեր են արքայութեան, ու ըսէ իրեն բոլորով սրտիւ . “ Աստուածածին ապաւէն մեր և յոյս, բարեխօսեամ առ որդիդ քո միածին, զի փըրկեսցէ զմեզ ՚ի հրօյն տանջանաց, և պարգևեսցէ մեզ զերկնից արքայութիւն ” :

Ա. Ո. Թ. Բ.

Ո՛վ Աստուած իմ, թէ որ աշխարքիս մէջը իմ ողորմելի մարմայս համար այսչափ բարիք ստեղծեր ես, հապա որչափ աւելի ըրած սիտոր ըլլաս հոգւոյս համար արքայութեան մէջ. բայց ես կուրցած ըլլալով իմ մեղքերովա՝ անհոգ եմ, չեմ մատրատ ու չեմ փափաքիր յաւիտենական կենացը, որ զիս երանելի պիտոր ընէ : Աը հաւատամ, Աստուած իմ, թէ ամեն բարիքներին ՚ի զատ որ սատրատեր ես ինձի արքայութեան մէջ, ամենէն մե-

ծը ու փափաքելին անէ, որ զքեզ  
պիտոր տեսնամ, զքեզ ժառանգեմ,  
քեզմով միտիթ արուիմ, ու քեզմով  
պիտի զմայիմ յաւիտեանս յաւի-  
տենից: || Այ ինձի որ չճանճալով  
այսպիսի մեծ բարիքը՝ ինչուան հի-  
մա իմ սիրատ աշխըքիս ունայնու-  
թեանը տուեր եմ, ու մանալով  
յաւիտենական կեանքը, անցաւոր  
բաներու հետ եղեր եմ: || Վկ Իս-  
տուած իմ ջիսուս, դուն որ Ճա-  
նապարհ, Ճմարտութիւն ու կեանք  
ես, լուսաւորէ իմ խաւարեալ միտ-  
քըս, որ Ճանճանամ ինձի համար  
պատրաստուած բարիքը, վառէ իմ  
սիրատ արքայութեան սիրովը, որ-  
պէս զի աշխըքիս բաները ինձիզար-  
շելի ըլլան, ու ես ալ արքայութեան  
փափաքովը զքեզ սիրեմ, զքեզ պոշ-  
տեմ ու քուկին սիրովզ տուզուիմ:  
Ալ ինզբեմ քեզմէ ալ մայր Իս-  
տուծոյ, որ ըլլաս ինձի բարեխօս  
քաղցր զաւկիդ առջեւը, ու քու միջ-  
նորդութեամբդ իմ վարքս շտկե-  
լով, արժանի ըլլան արքայութեան

մէջ սուրբերուն կարդը մանալու, ու  
հնան փառաւորելու քուկին ինձի ը-  
րած պաշտպանութիւնդ ու մայրա-  
կան գթութիւնդ:

### ՎԵՇՏՈՍՊԱՆԵՐՈՐԴ ՕՐ

Այրայուրեան ձամբուն վրայ :

Ա. Ազբայութիւն երթալու՝ մի-  
նակ երկու Ճամբայ կայ. այսինքն  
անմեղութիւն, ու ապաշխարու-  
թիւն: Ինմեղութեանս համար կըր-  
նամ ըսել թէ կորսնցուցեր եմ  
նախ քան զճանճալս. այսինքն՝ ա-  
ռանց գիտնալու՝ թէ ինչ ազնիւ բան  
է անմեղութիւնը, առանց ցաւելու  
և լալու անոր կորսուելուն վրայ: || Վկ  
զիտէ, որ չէ թէ մինակ իմ անմե-  
ղութիւնս կորսընցուցեր եմ, այլ եւ  
ուրիշի անմեղութեանն ալ կորսուե-  
լու պատճառ եմ եղեր: || Վեղը ան  
ազնիւ անմեղութեան, որ ասանկ  
շուտով ու քիչ մը բանով կորսուեր

է ,ու կարելի ալ չէ նորէն վաստը  
կուելու :

բ . Կրնաս ըսել թէ անմեղու  
թիւնս թէպէտ կորսընցուցի , բայց  
յուսամ՝ որ մեղաց վրայ ապաշխա-  
րեցի : Աակայն ով զիտէ թէ ինչ  
պէս ապաշխարեր ես , ցիտէմ թէ ար-  
գեքը պէտք եղածին պէս խոստովա-  
նելո ես մեղքերդ՝ թէ չէ . արգեքը  
ան ապաշխարանքները , որ դրուած  
էին մեղքերուդ համար , սիրով ըն-  
դունելո ու կատարելո ես , թէ ծանր  
ու անտանելի երևցեր են քեզի :

Դ' զուութիւն ընելու տեղը , դուն  
քեզ ժողվելու , պաք ու ծոմ պա-  
հելու տեղ , տուեր ես զբեզ հան-  
դըստեան , ու քու կամքդ կատա-  
րելու :

գ . Կ'ուզէմ՝ արքայութիւն եր-  
թալ , բայց թէ ինչ ձամբով չեմ  
զիտէր : Պէտք է երկու ձամբուն  
մէկովը երթալ . կամ՝ անմեղու-  
թեամբ , և կամապաշխարութեամբ :  
Ինմեզութեամբ չեմ կրնար երթալ  
ինըու որ կորալնցուցեր եմ . իսկ ա-

պաշխարութեամբ չեմ ուզեր , վասն  
զի դժար կու զայ ինծի . հապա ինչն-  
պէս պիտոր համնիմ փրկութեան :  
Ուրեմն պէտք է որ առաջադրեմ  
այսպէս : Ուշ որ ինըուան հիմա չեմ  
ըրած ապաշխարութիւն , գոնի հի-  
մա ընեմ : Ունամ՝ արքայութեան  
ձամբան՝ քանի որ ժամանակ ունիմ ,  
ով գիտէ թէ մըշափ պիտօր ապրիմ :  
Կարելի է որ քիչ մնացեր է իմ կեան-  
քէս , ու աս քիչ ատենին մէջը քիչ  
ապաշխարութեամբ ալ կրնամ՝ վաս-  
տրկիլ արքայութիւնը . հապա ինչո՞ւ  
չեմ ապաշխարեր :

Պիտու : Ու որ կորմնցընէ սուրբ  
Վասուածածնայցերմեռանդութիւ-  
նը , կը կորմնցնէ արքայութեան  
ձամբան . ուստի՝ թէ որ պաղեր ես  
սուրբ Վասուածածնայցերմեռան-  
դութենէն , ջանաւ որ նորէն վառես  
զբեզ իր սիրովը , որպէս զի փրկու-  
թեան համնիս , ու բայց իրեն բոլո-  
րով սրտիւ . “ Զգեա զիս զէտք քո ,  
ի հոս իւղոց քաց ընթացաք . . . և  
թէ ” Օ քեզ դուն երկնից և ձա-

նասլարչ արքայութեան, բարձող  
անիծից և սրովլու հաղեղէն մեծա-  
ցուցանեմք , :

ԱՂՅԹԻՔ

Ո՞վ ամենօրհնեալ կօյս տիրու-  
հի սուրբ Աստուածածին, կ'իշնիմ  
խօնարհութեամբ քու ոտքդ, ու ա-  
պաւինելով մայրական գթութեդ,  
կ'աղաքէմ զբեզմ մայրողորմութեան.  
Կորսնցուցեր եմարքայութեան ձաւ-  
քան, ու ջիտեմ ինչ ընելիքս . չու-  
նիմ մլրտութեան անմեղութիւնը,  
որ իմ մեղքերով կորսուեր է . չու-  
նիմ հիմա ալ հոգի ապաշխարու-  
թեան, ինչու որ մեղքով սիրոս քա-  
րայեր է : Դաւն որ մայր գթած ես,  
կրնաս կակուղցընել իմ սիրոս . կըր-  
նասնորոգել իմ հոգիս . կրնաս գար-  
ձնել զիս արքայութեան ձամբան .  
կրնաս քու միջնորդութեամբդ փըր-  
կել իմ հոգիս : Գիտեմ մայր ողոր-  
մութեան՝ որ քեզի Ձերմեռանդ ե-  
զողներուն պաշտպանն ես, ու ան-

կարելի է անոնց դատապարտութիւ-  
նը, ոյք որ քու մայրական խնամքիդ  
տակն են . ուստի կ'աղաքէմ զբեզ-  
մայր Աստուծոյ զիս ալ ընդունէ քե-  
զի ծառայ մշննջենաւոր : Տնիր ին-  
ծի շնորհը հաստատուն մնալու քու-  
կին Ձերմեռանդութեանդ մէջը . ու  
բարի գործքերով արժանի ըլլալու  
որ իմ հոգիս քու ձեռքդ տամի, ու  
արքայութիւն հանելով փառաւո-  
րեմ քու անուշ գթութիւնդ :

ԵՕԹՆԵՒՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՕՐ

Սուրբ Աստուածածին չերմեռանդուն  
վրայ :

Ա. Սուրբ Աստուածածինը Աս-  
տուծոյ մայր ըլլալուն համար, իրեն  
եղած Ձերմեռանդութիւնը շատ մեծ  
ու զօրաւոր է . ինչու որ ինքն ըլլալով  
մայր Աստուծոյ, կրնանք ըսել՝ թէ  
զաւկին ամենակարողութեան, ը-  
նորհքներուն ու ողորմութեան գոն-

ձը իր ձեռքնէ : || Վ՛լ կրնայ ըսել թէ  
Յիսուս իր սուրբ մօրը խնդիրքնէրը  
մտիկ ընէ . անանկ մօրը , որ զնոքը  
կուսական կամ ով սնուցեր , մեծ  
ցուցեր , ինամեր՝ պահէր է . իրմէն  
չէ զատուեր ինցուան խաչելութեան  
ու թաղման ատեննա ալ : || Սուրբ Վ՞  
տուածածին որ սիրեց զի Յիսուս ա-  
մէն բանէն վեր , ինչպէս Յիսուս  
ալ չսիրէ իր մայրը ամեննէն աւելի :

Բ. Սուրբ Վստուածածին մեր մայ-  
րը ըլլալով , իրեն ջերմեռանդութիւն  
ընելը շատ անուշ բան է : Խմ մայրս  
սուրբ Վստուածածինն է , կ'ըսէր  
մէկ սուրբ կրօնաւոր մը . իսկ մէկալ  
բնական մայրն որ անմիմ , իմին կախէ-  
մայրս է : Խ՞նչ անուշ բան է ըսե-  
լը , թէ Յիսուսին մայրը՝ իմ մայրս  
է . և թէ իմ մայրս՝ Յիսուսին մայ-  
րըն է . երկուքս ալ մէկ մօր զաւակ  
ենք : Աւսաի սուրբ Վստուածա-  
ծինը միշտ հետերնիս է իր շնորհը-  
ներով ու իր մայրական սիրովը . չէ  
թէ մինակ կը լսէ մեզի , այլ և կը  
խօսի ու կը շարժէ մեր սիրով հո-

գեար բաներով , ու աչքերնիս կը  
լցունէ անուշ արցունքով :

Գ. Սուրբ Վստուածածինն ըլլա-  
լով մայր ու բարեխոս մեղաւորաց ,  
իր ջերմեռանդութիւնը շատ փա-  
փաքելի բան է ; || Եղաւորները թէ-  
պէտ իրենց մեղքովը կը խաչեն զի՞ն-  
ուուս , սակայն սուրբ Վստուածածի-  
նը չիթողուր զանոնք ձեռքէ , իր սէ-  
րը կը շարժէ որ ջանայ զանոնք նո-  
րանց հաշտեցրնէլ Յիսուսին հէտ .  
իր մայրական գութը չիթողուր որ  
տեմնէ երկու եղբարբը մէկմէկու  
հէտ թշնամի . Ճար կ'ուզէ ընել որ  
Յիսուս մեղաւորին հէտը հաշտ ըլ-  
լայ : Ժիէ որ մեղաւոր ես , կրնաս  
սուրբ Վստուածածնայ հաճոյական  
բան մը ընել . եթէ իշնելով իրեն  
սուրբ յայտնես քու մեղքգ , որով  
սրգոցաւցեր ես զի՞նսուս . յանձնե-  
լով զքէզ իր գթութեանը ու զզջա-  
լով ըրածիդ վրայ : Իսէ իրեն բոյ-  
րով սրտիւ . Դյունք խոնարհէցն  
առ իմ հաշտութիւն՝ ծնօքդ Վս-  
տուածոյ . . . ձեռն սուրբ անկեցյու՝ տա-  
ճար երկնային :

Պատուիլ Ո՞ի կարծեր որ աղէկջեր  
մեռանդ ես սուրբ Աստուածածնայ,  
թէ որ մեղքիդ մէջը անդարձ կե-  
ցած ես : Ծանա ամէն օր ըսել Աս-  
տուածածնայ վարդարանը . ու նայէ  
որ ուրին ալ յորդորես ըսելու .  
խնդրելով սուրբ Աստուածածնէն .  
“Հոյս մեր և ապաւէն մայր Տէառն  
և կոյս սուրբ . . . բարեխօսեաւ առ  
Տէր վասն մերոյ փրկութեան , :

ԱՊՅԹԲՔ

Ո՞վ տիրամայր կոյս սուրբ Աս-  
տուածածնն, դշխց երկնից և թա-  
գաւհի հրեշտակաց, կ'ուրախանամ  
մեծութեանդ վրայ որ ասանկ ան-  
զին չնորհքներու ես հասեր . կը  
ցնծամ փառացգ վրայ՝ որ ասանկ  
անհուն երանութեան ես հասեր :  
Դիտեմ մայր Աստուածոյ՝ որ ամէն  
բանի կարօղ ես, ու անով կ'երե-  
ցնես քուկին մեծութիւնդ ու  
փառքդ . ուստի կ'աղաջեմ զքեզ  
ցըցնը քու զթութիւնդ՝ ողբամե-

լով ինձ մեղաւորիս . երեցներ քու  
քաղցրութիւնդ՝ անսուցընելով իմ  
սրտիս լեզութիւնը . ցըցուր քու զօ-  
րսւոր պաշտպանութիւնդ իմ յու-  
սահատ կենաց վրայ, որ շատ պար-  
տըկան եմ Աստուածոյ . երեցուր քու  
աստուածային ընտանութիւնդ՝ մօ-  
տեցնելով իմ հոգիս առ Աստուած.  
ցըցնը քուկին պայծառութիւնդ՝  
լուսաւորելով իմ խաւարած միտքս.  
երեցնը քու ցնծութիւնդ՝ միմիթա-  
րելով իմ սգաւոր սիրաս : Հերիք է  
ինձի մէկ անուշ սիրովնայուածքդ,  
որ զիս մէկէն ողջընցընէ, հերիք է  
որ հեղ մը ինձի համար ըսես Ծե-  
սուսին, թէ Ծէր գուն ողորմէ աս  
խեղճ մեղաւորին, զիտեմ անտա-  
րակյս որ պիտի ըսէ քեզի, թէ  
“Խզիցի քեղ որպէս և կամիս , :  
թէ որ մէյ մը քու մայրական խը-  
նամբիդ տակը ինսիմ, մէկէն կ'ը-  
սընտնամ, մէկէն կը լուացուիմ, մէ-  
կէն կը սրբուիմ, մէկէն սիրելի կ'ը-  
լամ Աստուածոյ, ու արժանի երկնից  
արթայութեան : Վաղաչեմ մայր Աս-

տուծյ, փառաւորել քու անունդիմ  
վրաս, որպէս զի իմ հողւոյս փըր-  
կութեամբը մեծնայ ու քարոզուի  
մայրական դժութիւնդ, որ մեղա-  
ւորներուն վրայ կ'երեւնայ:

ՈՒԹԵԽՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՕՐ

Աստուծոյ ներկայուրեան վրայ:

Ա. Գիտես թէ որուն քովն ես  
հիմա: Աստուծոյ հետն ես: Վա-  
լելու ատենդ, կարգալու ատենդ,  
պառկելու ելլելու ատենդ, խօսելու  
և ուտելու ատենդ գիտես որուն  
հետն ես: Աստուծոյ հետ ես: Հա-  
սա երթոր մեղանչելու ըլլաս նէ,  
զիտես որուն հետն ես: Աստուծոյ  
հետ ես: Աստուած քու առջեղ է,  
քու քովդ է, չորս զիիդ է: Կը տես-  
նայ քու ամէն դործքդ, կը լսէ ա-  
մէն խօսքդ, կը քննէ ամէն փափաքդ,  
կը չափէ ամէն մատըտուքդ. վրադ  
կը նոյի զիշեր ցորեկ, թէ մինաւու-

թիկ ես եղեր, և թէ ուրիշի հետ.  
ամէն տեղ ու ամէն ատեն: Աւստի  
մ' ըսեր ամեննեխն, թէ կրնամ մե-  
զանչել առանց ամըշնալու, ինչու որ  
զիս մարդ չիտեսնար: Գիտոյիթ որ  
Աստուած քեզ միշտ կը տեսնայ:

Բ. Խնչ մեծ յանդկնութիւն ու  
նախատինք է մեղանչել Աստուծոյ  
առջելը, որ ամեննեխն սրբութիւն է  
ու ամեննակարող: Ո՛չափի ծանր բան  
է մեղանչելը անոր աշքին առջելը,  
որ է քու փիկիչդ, քու հայրդ, քու  
տէրդ, ու քու կին դատաւորդ: Վա-  
մընաս մեղանչել մարդու մը առջել,  
ու չես ամըշնար Աստուծոյ առջելը:  
Գիտես որ բոլոր մեղեքերդ զրուած  
է իր մոքին մէջը, կը կարդայ, կը  
մտմըտայ ու կը շարժի 'ի բարկու-  
թիւն: Վասն զի իր աշքին առջելը  
եղեր է քու ամէն անկարողութիւնդ:

Գ. Եշըոր երթաս Աստուծոյ առ-  
ջելը դատաւելու համար, ոչ վկայ  
պէտք է և ոչ ամբաստանող. ինքն  
Աստուած պիտի ըսէ քեզի, թէ ես  
եմ քու դատաւորդ ու վկադ: Խնչ

մեծ ամօթ ու նեղաւթիւն պիտոր  
ըլլայ քեզի տեսնելը լոտուծոյ սըր-  
դողած դէմքը քու վրադ. ու միտքդ  
զալը՝ թէ ան աստուածային ազքե-  
րը տեսներ են քու դէշ ու ամօթա-  
լի գործքերդ : Ո՞եծ կուրութիւն է  
քրիստոնէի մը, որ կը մեղանչէ իր  
թշնամոյն սատանային առջել, որ  
պիտի ըլլայ չարախօս իր ըրածնե-  
րուն : Լոկից 'ի զատ ի՞նչ կուրու-  
թիւն է մեղք ընելը պահապան  
հրեշտակին առջելը, որ չիկնար  
պաշտապանել դատաստանին ատե-  
նը : Հապա ի՞նչ սոսկալի խենդու-  
թիւն է մեղանչէլ լոտուծոյ առ-  
ջելը, որ պիտի ըլլայ դատաւոր մար-  
դուս ամէն գործքերուն :

**Պիտուալ :** Ո՞ե՞ որ կուզես առանց  
մեղաց ապրիլ, չէ թէ մինակ պէտք  
է որ յիշես լոտուծոյ ներկայու-  
թիւնը, այլ և սուրբ լոտուածա-  
ծնայ. մանաւանդ ան ատենը, երբոր  
իրեն սիրոյն համար մէկ գործք մը  
ընելու ըլլաս նէ . և որպէս զի կա-  
րենաս ամէն գործքդ աղէկ ընել,

ձեռք չիղարկած միտքդ բեր, թէ  
լոտուած իս կը տեսնայ, ինձի կը  
նայի . ու ըսէ բոլորով սրտիւ առ-  
սուրբ լոտուածածինը . “ Հայցեմք  
դնորոգութիւն կենաց, և պաշտպան  
դտիրամօրդ ձեռնտուութիւն ” :

ԱՂՅԹԻՔ

Ճանճնալով իմ յանդգնութիւնս,  
որ առանց վախնալու և ամընալու  
մեղանչեր եմ լոտուծոյ առջելը, իր  
մեծութիւնը բանի տեղ չիղնելով,  
անուշ սէրը ոտքի տակ եմ առեր .  
ու հիմա երես չունենալով իր առ-  
ջել երենալու, քեզի կը դիմեմ  
սուրբ լոտուածածին : Դուն որ  
մայր գթած ես ու բարեխօս մեղա-  
ւորներու, միջնորդ եղիր իմ հաշ-  
տութեանս : Կը ցաւիմ ու կը զող-  
ջամ որ առանց մտմըսալու մեղան-  
չեր եմ իմ ստեղծողիս աշքին առ-  
ջելը, սրդողցուցեր եմ իմ փրկիչս,  
իմ հայրս, իմ դատաւորս Անմկը-  
նար զոցէլ ըրածներս, որ ամէնն ալ-

յայտնի են իրեն . չեմ կրնար ար-  
դարանալ , ինչու որ ինքն է վկայ ը-  
րածներուս . չեմ կրնար քան մը ը-  
սէլ , վասն զի գիտեմ իմ շարու թիւն-  
ներս . ուստի ես ինձի ամբընալով  
կը խռատվանիմ մեղքերս Վատու-  
ծոյ առջելը , ու կ'ըսեմ Դաւիթ  
մարգարեին հետ . “ Քեզ միայն  
մեղայ Տէր , և զար առաջի քո ա-  
րարի . ” Վապաւինիմ քու միջնոր-  
դութեանդ մայր օղօրմութեան , որ  
իմ մեղքերուս թաղութիւնը ընդու-  
նիս ու տաս ինձի շնորհը , որպէս զի  
ասկից ետքը Վատուծոյ վախը աչ-  
քիս առջելը ըլլարով , սրբութեամբ  
անցրնեմ իմ կեանդս , ու արժանի  
ըլլամ երկնից արքայութեան :

## ԵՎԱԼԵՏԱՐԱՆՆԵՐԸ ՕՐ

**Աստուծոյ ոչ ապահովիկ ծառայութեանը**  
**վրայ :**

Ա. Աղեկ մտմբառա [թէ որըն կ'ու-  
զես ծառայել։ Ի ստուծոյ՝ [թէ սա-  
տանային։ Ենցու որ երկուքին մէկ-  
տեղ ծառայել ըլլար։ Ի ստուած  
ու սատանայ անհաշտ [թշնամի են  
մէկմէկու, ուստի երկուքին մէկտեղ  
ծառայել ու հաճոյ ըլլալ անկարելլ  
բան է։ (Օր մը ապաշխարող ըլլալ  
Հիսուսին ձեռաց ներքեը, ու մէ-  
կալ օր մեզաւոր դառնալ սատա-  
նային տակը, օր մը Ձերմեռանդ՝ ա-  
զօթ ասէր ու պահեցող ըլլալ, և օր  
մը մեղքի ու անկարգութեան հետ,  
ըսել է [թէ սատանային բարեկամ-  
եմ, ու կ'ուզեմ խաբել զլ ստուած։

Բ. Ժնէ, որ կ'ուզես Ի ստուծոյ ծա-  
ռայել, նեղութիւն քաշելը քիչ ա-  
տեն է։ Խակ ուրախութիւնը պիտի  
ըլլայ յաւիտենական։ Քանի մը

տարի է ապաշխարհնքդ , իսկ միսի թարութիւնը յաւիտենական . թող որ Վատուած քաղցր տէր ըլլալով , գիտէ օգնել , սիրտ տալ , ու միսի թարել զբեկ աս կենաց մէջն ալ : Ծակ որ Վատուծոյ ծառայելու համար խաչ պիտի քաշես , մի վախնար , քու խաչդ ըրլար անանկ ծանր , ինչպէս որ եղաւ անմեղ Հիսուսինը :

Գ . Եթէ կ'ուզես սատանային ծառայել , ուրախութիւնդ քիչ կ'ըւլայ , իսկ նեղութիւնդ յաւիտենական : Վատուած մէջ մը անհաւատ ու անօրէն մեռած թագաւորները , որ ասօրուան օրս գժոյիքն են , ու յաւիտեանս պիտի մնան ան տեղու : Ծանդ որ սատանան չիկրնար ամենւնեին աս աշխարքիս մէջն ալ միսի թարել իր ծառաները . վասն զի ամէն մեզք ունի հետու իր նեղութիւնը . ինչպէս որ համը առած կ'ըլլաս մեղանեշլալիլ ու սատանային կամքը կատարելով : Վաճէկ գիտցիր աս ալ , որ սատանան անանկ կ'ատէ զբեկ , որ մէկ ուրիշ թշնամի մը չիկրնար

անանկ ատել . ուստի ինչ բարու թիւն կրնաս յուսալ իրմէ : Պատուած ինէ որ կ'ուզես խալըսիլ սատանային ձեռքէն , ինկիր սուրբ Վատուածածնայ սոտքը , ու խնդրել լով իր զօրաւոր միջնորդութիւնը քեզի համար , ըսէ Հիսուսին . Տուր զօրութիւն ծառայի քո , կեցն զօրզի աղախնոյ քո , և արաւ առ խոնը շան բարութեան : Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն . զի դու Տէր օշնեցեր ինձ և միսիթարեցեր զիս :

ԱՂՅԹԻՔ

Տարակուսեալ հոգւովլ կը դիմեմ քեզի սուրբ Վատուածածին , գուն որ քուկին սրբութեամբդ կոխեցիր սատանային զլուխը , ու եղար մեղքե միջնորդ փրկութեան ու աղասութեան անոր ձեռքէն , մի թողուր որ նորէն մասնուիմ սատանային ձեռքը . քու զօրաւոր պաշտպանութեղդ խորտակէ իր զօրութիւնը . լուսաւորէ իմ միտքս որ ձանցնամ անոր

խարեւութիւննեղը ու փախչեմ հեւ  
անսամ որոգայթներէն, օրով կ'ու  
զէ հեռացընել զիս իմ առեղծողէս :  
Տնոր ինձի չնորհք՝ որ ծառայեմ  
մինակ Աստուծոյ իմ ստեղծողիս,  
իմ փրկիս, իմ բարեբարիս, որ ար-  
ժանի է ամեն սիրոյ ու ծառայու-  
թեան : Աը յաս իմ որ այօշափ ատեն  
Աստուծոյ ծառայելու տեղ, ստա-  
նային մանկի ընկելով՝ չար կամքս պաշ-  
տեր եմ, ու անկարդ յօժարութիւն-  
նելս կատարեր եմ. չեմ մոտինա-  
ցեր թէ մէկ օր մը պիտոր պատա-  
խանտամ Աստուծոյ, պիտի քննուիմ  
ու դատուիմ իր առջևը : Ա այ կու-  
րութեանս, որ ամեննե ին չեմ՝ ձանչ-  
ցեր իմ պարտքս, ու անհոգ եմ ե-  
զեր ընկելու. ուստի կ'ինիմքու ոսորդ  
սուրբ Աստուածածին. գուն որ այս-  
չափ հրաշք ըրեր ես մեղաւորաց  
գառնալուն համար, ցըցուր իմ վրաս  
ալ քու ողբանութիւնդ, որպէս զի  
ես ալ արգարանալով իմ մեղեր-  
քէս, փառաւորեմքու գլութ ու թիւնդ,  
որ ամենուն կ'ու զես մայրութիւն  
ընկել :

### ՔՍԱՆԵՐՈՐԴ ՕԲ

Ապաշխարութիւնը ոչացընելուն վրայ :

Ա. Կ'ուզես մեղքէն ետ կենալ,  
Կ'ուզես մէկ օր մը զբեզ Աստուծոյ  
տալ : Գիտեմ որ կ'ուզես անտարա-  
կցոյ : Բայց թէ Երբ, յայտնի չէ :  
Ասյօր ըլլար կ'ըսես. ինչու որ՝ ըս-  
տըկելու բաներ ունիմ. մէկ քանի  
մտմըտալիք ունիմ. սիրոս քանի մը  
բան կայ՝ լմընցընեմ ու ետքը : Աա-  
կայն էթէ այսօր գժարութիւն կ'ի-  
մանաս ապաշխարելու՝ Վարքդ ըստ-  
կելու, գիտցիր օր նոյն գժարութիւ-  
նը պիտի ունենաս ամէն օր : Հապա-  
երը պիտօր գառնաս առ Աստուած :  
Աըսես թէ կը նայիմ օր աս ար-  
գելքս վերնայ. սրտիս խռովութիւ-  
նը գաղթիք . Երիտասարդութիւնս  
անցնի, ու ետքը անտարակցոյ պիտի  
ձեռք զանեմ զիս շտկելու : Վանի  
ատեն է օր միտքդ զբեր ես ու կը

զբուցես զատիկայ. բայց ամենեւն ճն  
ձեռք չես զարներ:

Բ. Դուն որ կ'ուշացընես ապաշ  
խարելք, ու կը նայիս ատենի, ի՞նչ  
գիտես՝ Ի՞ստուած ալ քեզի կը սպա  
սէ մի: Անչու համար ասանկ անհիմն  
բաներով քու հոգւող փրկութեան  
գործքը ձեւաքէ, կը թ ողուս: Այս վախ  
նամ որ ատ բանիդ համար Ի՞ստուած  
ալ չի համբերէ քեզի. ձանձրանայ  
քու սուտ խոստմններէդ ու քու  
կին անհաւատարմնեթենէդ: Իրաւ  
որ Ի՞ստուած ամենաբարի է. սա  
կայն գիտցիր որ իր բարութիւնը չա  
փէն աւելի ցրցուցեր է քեզի. ոյլ  
գիտէ՝ թէ ասկից եաքը պիտոր սկը-  
սի դատաւորի պէս վարուիլ քու  
հետզ: Ոյէ որ ուզենայ իր բարու-  
թեանը համար քիչ մը ատեն ալ  
անուշ վարուիլ հետզ, արժան է որ  
դուն ալ ասկից եաքը սրգողցնես  
զինքը քու մեղքովդ: Ո՞տմրաս ի՞նչ  
ծանր ատելրախտութիւն է ըրածդ:

Գ. Ի՞ն քրիստոնեաներն որ կան  
գողիքին մէջը, կրնանք ըսել թէ

ամէնքն ալ դատավարտուած են՝ ա  
պաշնարութիւնը օրէ օր ձգելով ու  
ուշացընելով: Չիկայ անանկ ինենդ  
մը, որ ըսէ թէ չեմ ուզեր դառ-  
նալ վարքս տակել, բայց քիչ կը զըս-  
նուին խելայիք որ ըսեն. հիմա աս  
ատենս կ'ուզեմ դառնալ ու ապաշ  
խարել: Ո՞աչն որ հասնի նէ, ան  
ատենն ալ կը նային ուշացընել յու-  
սալով որ չեն մեռնիր ան հիւան-  
դութեան մէջը, ան օրը ու ան ա-  
տենը: Ո՞էկն որ աղէկ ատենին մէ-  
ջը չէ ապաշխարած, ի՞նչպէս կրնայ  
ընել անանկ ժամանակ մը, որ Ի՞ս-  
տուած իրեն չէ յայտնած, ու ի՞նքն  
ալ բոլոր կենացը մէջ ուզեր է զի՞-  
տուած խարել: Ի՞զէկ մոմբառա զա-  
միկայ. թէ որ դուն հիմա չես ջա-  
նար վարքդ փոխել, վախցիք որ չե-  
կարենաս ան ատենն ալ շտկել, եր-  
բոր կ'ուզես նէ:

Պատու: Ի՞նոնդ որ վարքերնին շրտ-  
կեր են նէ, այսու ամենայնիւ շատ պի-  
տի վախնան մե պնէլու ատենը. հա-  
պա ի՞նչ սոսկալի վախ պիտոր քաշէն

անսնք՝ որ ամեննեին անհոգ են եղեր :  
Ուշ որ մահացու մեղքը ունիս , ջանա  
որ շուտով երթաս խոստովանիս +  
իսկ եթէ լոտուծոյ չնորհացը մէջն  
ես , մտմիտա թէ ինչ բան է որ չի-  
թողուր քեզի բոլորովին լոտուծոյ  
ըլլալու , ու նայէ որ յաղթես անոր :  
Բարեխօս բռնելով քեզի սուրբ լո-  
տուածածինը , ըսէ իրեն . “ լու քեզ  
ապաւինիմք ամենասրբու հի զերա-  
գցն և հրաշալի և բաշխող բարու-  
թեանց , աղթիւր ես ծարաւեաց և  
հանդիստ աշխատելոց . . . ”

### ԱՂՅԹԻՔ

Տէր իմ Յիսուս Քրիստոս , զուն  
որ չես ուզեր մեղաւորին մահը , հա-  
պա մեղքին դառնալու ապաշխա-  
րելը , ես մեղաւորս բռնուած ըլլա-  
լով սատանային որոգայթներուն մէ-  
ջը , թէպէտ իր ձանձնամ մեղքե-  
րուս շատութիւնը , ու քուիին ան-  
բաւ ողօրմութիւնդ , որ պատրաստ  
է թողութիւն տալու , և իմ հողիս

մաքրելու . սակայն անհոգութեամբս  
օրէ օր կը ձգեմ իմ գառնալու ու ա-  
պաշխարելու : Ալխոստանամ ու կ'ա-  
ռաջազրեմ վարքս շտկելու . սակայն  
չունիմսրտիսմէջը հաստատութիւն  
աւաջազրութեանս վրայ ամուր կե-  
նալու ։ Ի՞ու կին քաղցր երկայնմուռ  
թիւնդ աւեր եմ ինձի պատճառ ան-  
հոգ ըլլալու . որչափ որ կ'ողօրմիս ին-  
ձի ու կը համերես , այնչափ աւե-  
լի գէշ կ'ըլլամ ու քեզ կը սրգողը-  
նեմ : Կ'աղաշեմ բարերամի Յիսուս ,  
ցըցնութիւնի քու բարկութիւնդ աշ-  
խարքիս մէջ . որպէս զի արթըննա-  
լով իմ թմրածութենէս , ձնմէնամ  
քու մեծութիւնդ , քու իշխանու-  
թիւնդ , քու սէրդ որ ունիս իմհո-  
գիս փրկելու , և զգաստութեամբ  
ջանամ ասկից ետքը իմ օրերս քու  
ծառայութեանդ մէջը անցընելու :  
Ալխողբեմ քեզմէ փրկիչ իմ Յի-  
սուս՝ միջնորդութեամբ ամէնօր-  
հնեալ սուրբ մօրդ , մի ինսայէր մար-  
մոյս , որպէս զի հոգիս ազատի յա-  
ւիտենական տանջանկեն :

ՔՍԱՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ ՕՐ

Խոստովաճուրեան վրայ :

Ա. Կը մեղանչես, ու չես ուղեր շուտով երթալ խոստովանքը ըլլալ : Ունէ որ հիւրնադնաս, մէկն բըժքին կը վազես, որով կը ցըցընես թէ մարդնացդ առողջութիւնը աւելի մեծ դրեր ես քան գհուցդ, Գիտ ցիր որ եթէ առանց խոստովանքի մեղիդ մէջը մեռնիս նէ, խեղչպետոր ըլլաս յաւիտեանս յաւիտենից Արքափ ուշացընես խոստովանքը, այնառի մեղքը կը հաստատի հօգուցդ մէջը, կ'ըլլայ քեզի ոսովուութիւն ու բնութիւն : Արնայիս որ մէկ մեծ տօնի մը, կամ զատկէ ՚ի զատիկ ձգես խոստովանքը ըլլալդ . ուրեմն ձեռքդ ըլլար նէ՝ կ'ուզէիր որ զատկին և կամ խոստովանքը եղած օրդ մեռնիս, սակայն ցիտես երբ կը մեռնիս :

Բ. Արնաս ըսել թէ մահացու

մեղք չեմ ըրած, ուստի չեմ ալ խոստովանիր : Ի՞այց դիտոցիր որ ներելի մեղքերէն ազատ չես, ու ամէն օր կ'ընես . ինչ ծանր պատիժներ պիտի քաշես քաւարանին մէջը ներելի մեղքերուդ համար : Արնաս հիմակունի թեթեցընել զան պատիժները շուտ շուտ խոստովանքը ըլլալով . ննջոն համար ատանկ անհոգ ես հոգեռոր օգտիդ վրայ : Ունէ որ երեսդ մէկ աղոտ մը ըլլայ, չես ուղեր երեւնալ մարդկանց մէջ ինչուան որ չիտուացուիս . հապա հոգւցդ աղտերովը ինտոր առանց ամրշնայուկ' երեւնաս ու կը պարտիս Ռատուծոյ ու հրեշտակներուն առջեւը :

Գ. Արնաս ըսել թէ շատ հեղի խոստովանքը եղայ ու օգուտ մը չիտեսայ . բայց մոնթաւ թէ արդեօք աղէկի խոստովանքը եղեր ես մի : Իսկից ՚ի զատ՝ թէ որ աղէկ քննելով քու մեղքդ, ցաւելով, առաջազրելով, խոստովանքը ըլլալով, նորէն կ'իննիս . հապա հիմա որ ամեննեմն անհոգ ես, ինչ օգուտ

կրնաս տեմնալ, Ո՞շափ մեծ բան  
կ'ըլլար մէկ դատապարտուած մե-  
ղաւորի մը, թէ որ ունենար ան ա-  
տենը ու չնորհքը խոստովանանք ըլ-  
լալու՝ ինչ որ դուն ունիս նէ հիմա,  
սակայն կու զայ ժամանակ, որ դուն  
ալ պիտի փափաքիս ունենալու առ  
հիմակուան ատենս, ու պիտոր չու-  
նենաս :

**Պատուղ:** Եթէ աղէկ մտմբտաս  
որ Աստուած կրնայ պատժել զքեզ  
մեղիր մէջը, անսարակոյս չես  
ուշացներ քու խոստովանանքդ :  
Վիննէ առջի ըրած խոստովանանք-  
ներդ, ու անոնց միջի եղած պակ-  
սութիւնները ջանա որ շուտով շրտ-  
կես, միջնորդ բռնելով քեզի սուրբ  
Աստուածածինը, ու ըսէ իրեն բո-  
լոր սրտով . “ Ազաշեալ վասն մեր  
զառ ’ի քէն զմարմնացեալն Աս-  
տուած, նէրել մէզ՝ անտես առնել  
զրանցանս մէր ” :

ԱՂՅԹՔ

Աս ինչ մեծ ողորմութիւն է որ  
ինձի ըրեր ես փրկելու իմ Հիսուս,  
տալով իմ ցաւերուս համար մէկ զօ-  
րաւոր գեղ մը Տշմարիտ ապաշխա-  
րութիւնը . որ անով մէկէն բժըշ-  
կուիմ՝ իմ հօգեւոր հիւանդութե-  
նէս . սակայն ես չիպիտնալով, մա-  
նաւանդ թէ բանի տեղ չիդնելով  
անոր մեծ օգուտը, չչ թէ մինակ  
անհոգ եմ եղեր բանեցընելու, այլ  
և վնասուեր եմ ամսից՝ չարաշար  
գործածելովս : Այ ինձի, ո՞շափ  
անշահ խոստովանանքներ եմ ըրեր,  
առանց քննութեան, առանց զղջու-  
մի, առանց առաջադրութեան, ու  
առանց ըսելու ամէն մեղքս քահա-  
նային . ուստի աւելի վնասուեր եմ  
խոստովանանքնեն, քան թէ օգուտ  
եմ տեսեր : Ասոր համար կը ցափիմ  
ու կը զղջամ Աստուած իմ Յի-  
սուս, որ ինձի ըրած բարեբարու-  
թիւնդ չիմաննալով, սրբողցուցեր

Եմ զքեղ՝ իմ աէրս , իմ փրկիչս ,  
իմ բժիշխս , իմ կեանքս . ուստի հի-  
մա հիւանդ ըլլալով հոգիս , կը դի-  
մեմ քեղի՝ ու խսնարհութեամբ  
սրտի կ'իշնիմ քու սոքդ , ու անդա-  
գար կ'աղաջեմ աւետարանին միջի  
զրուած բորոտին հետ . “ Տէր , ե-  
թէ կամիս , կարող ես զիս սրբել , ”  
ինչուան որ երկնցընես քու սուրբ  
ձեռքդ իմ հոգւոյս վրայ , ու ըսեա .  
“ Կամիմ սրբեաց , ” որպէս զի ող-  
ջննալով իմ հիւանդութենէս , կա-  
րենամ քու ետելէդ երթալ ու փա-  
ռաւորելամենակարսզ զօրութիւնդ ,  
որ ամենուն բարին ու փրկութիւնը  
կ'ուզես :

ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ ՕՐ

Սուրբ հարորդութեան վրայ :

Ա . Ի՞նչ մեծ պատիւ է՝ որ Հի-  
սուսըրերէ քեղիաս բանովս : Առըն  
հաղորդութեամբ Հիսուս կ'ըլլայ

մեզի բարեկամ , կ'ըլլայ ընտանի ու  
կ'ըլլայ իմ աէրս : Վլ կերակրէ զիս  
իր սուրբ մարմնովլը ու անդին արիւ-  
նով . և զիս բարօրովլին իրեն կը նը-  
մանցընէ : Իմ սիրսոս ան ատենը կ'ըլ-  
լայ սուրբ ու մաքուր քան զժամե-  
րը , քան վարանները , քան զսկի-  
նը ու քան զայլ ամէն սուրբ զոր-  
ծիքները : Իմ հոգիս իրնայ ան ա-  
տենը ըսուսիլաբայութիւն . ինչու որ  
հոննստածէ Քրիստոս փառաց թա-  
դաւորը :

Բ . Վրչափ մեծ նախատինք կ'ը-  
նեմ Հիսուսին , երբոր առանց ջեր-  
մեռանդութեան երթամ ընդունիլ  
զինքը . շուտով հեռանամ իրմէ ա-  
ռանց չնորհակալութեան , փախչիմ  
իր տեսութենէն , չերթամ իր սոքը  
ազօթք ընելու , չսմբչնամ իր ներ-  
կայութենէն՝ որ նստածէ խօրանին  
վրայ : Ասանկ նախատինքներ՝ մա-  
նաւանդ թէ քան զամանք շատ ա-  
ւելի , որչափ տուեր եմ Հիսուսին .  
մեղքի մէջ ըլլալով ընդուներ եմ  
զինքը . աղտոտ բերնով Հուզային

պէս Ճաշակեր եմ իր ամենասուրբ  
մարմինը . ու դժոխքի պէս սատա-  
նաներով լեցուած հոգիս ուզեր եմ  
ներս առնել իմ փրկիչս :

Գ. Դիտե՞ս ինչ չնորհքներ կու-  
տայ քեզի Յիսուս աս սուրբ հա-  
զօրդութեամբս : Ալ զօրացընէ ըլ-  
քեզ՝ չար սովորութիւններդ յաղ-  
թերու , սատանային դէմ դնելու ,  
աշխարհքիս խարեւութիւններէն հե-  
ռանալու : Ի՞ց սուրբ Կերակուրը ա-  
րիւութիւն տուաւ մարտիրոսներուն ,  
սիրտ տուաւ կուսանքներուն , ու զա-  
նոնք սրբութեան հասուց : Ը ատ  
մեծ խենդութիւն կ'ընեմ , թէ որ  
անհոգ ըլլամ վաստրկելու զաս շր-  
նորհքներս : Ուսի՞ց է որ միշտ տկար  
եմ փորձութիւններու դէմ , ու ա-  
մենեին առաջ չեմ երթար առա-  
քինութեանց մէջը . վասն զի պատ-  
կառանքով չեմ մօտենար Յիսուսին  
քովը . բանի տեղ չեմ դներ Յի-  
սուսին ներկայութիւնը , չեմ մօմը-  
տար արժանաւոր պատուով ընդու-  
նիլ զինքը իմ սիրոս : Ինչո՞ւ համար

փոյթ չունիմ բարի վարքավ զիս ի-  
րեն սիրելի ընելու :

Պատող : Հյթէ ամէն օր չես կըր-  
նար սրբութիւն առնել , ջանա որ  
գանէ հոգեւորապէս բազմանքով հա-  
զարդուիս , բարեխօս բռնելով սուրբ  
Առառածածինը : Յիսոյիր որ՝ եթէ  
սուրբ Առառածածինը մէկի մը վրայ  
մասնաւոր խնամք ունենայ նէ , անի-  
կայ առանց հաղորդութեան ցիմեռ-  
նիր : Ուստի պատուելով իր քաղցր  
մայրութիւնը , ըսկէ . “ Որբուհի Ուա-  
րիամսափոր ոսկի և տապանակ կտա-  
կարանաց , որ զի վերուսա զհացն  
կենաց պարզեցեր քաղցեալ բնու-  
թեանս . առ նա միշտ բարեխօսեան  
վասն քաւութեան մեղաց մերոց ” :

### ԱՂՅԹԻ

Յիսեմ թէ ինչ բանով չնոր-  
հակարութիւն ընեմ քեզի փրկիչը  
իմ Յիսուս , քու անհուն սիրոյդ  
համար որ ցըսուցեր ես ինծի ամե-  
նաստը հազորդութեան խորհըր-

գովլը , որով տուեր ես զքեզ ինձի  
կերակուր ու ըմպելի . ուզեր ես ա-  
ռանց բաժնուելու կենալ իմ հետոս ,  
ըլլալ ինձի բարեկամ , ընտանի ու  
սիրելի : || այ ինձի , որչափ անար-  
ժանութեամբ ընդուներ եմ զքեզ  
իմ օիրոս , որչափ անսպատիւ ըրեր  
եմ քուկին մեծութիւնդ , որչափ  
սրգողցուցեր եմ քուկին սէրդ՝ ա-  
ռանց պատրաստութեան ու առանց  
ջէրմեռանդութեան ընդունելով  
զքեզ իմ հոգիս : || նոր համար զըր-  
կուեր եմ քու չնորհքէդ , պաղեր  
եմ քու սիրոցդ , չեմ առեր քուկին  
անուշութիւնդ , ուստի անհաստատ  
եմ եղեր ասաքինութեան վրայ , ու  
հոգիս ալ տկար մնալով , խարուեր  
է սատանային ու հեռացեր է քեզմէ :

Հիմա Զանցնալով իմպակտութիւնս ,  
կը ցաւիմ ապերախտութեանս վր-  
այ , որ այսպիսի անհուն պարզեդ  
մասցեր եմ , ու կ'աղաքեմ զքեզ փըր-  
կիչ իմ Յիսուս , թօղութիւն տա-  
լով ըրած մեղքերուս , սրբէ ու նո-  
րոգէ իմ հոգիս , որ ասկից ետքը ար-

ժանապէս ընդունիմ զքեզ . վառէ  
իմ սիրոս աստուածային սիրովդ ,  
որ ես ալ ըլլալ քեզի պատարագ սի-  
րոյ , նուիրելով իմ բոլոր կեանքա  
քու ծառայութեանդ :

---

### ԳՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԲՈՐԴ ՕՐ

Ասունակ ծածոկ շնորհքենյուն վրայ :

Ա . Գրիտես թէ Ասուուած ինչ  
Ճամքաներով մեզ կանչեր է ու կը  
կանչէ իրեն . երբեմն սրտերնիս շար-  
ժելով ու մոքերնիս լուսաւորելով .  
երբեմն ծածոկ մէկ բարեկամի մը ,  
կամ խոստովանահօր բերնով . եր-  
բեմն յայտնի պատիժ մը խրկելով ,  
կամ մէկ քարոզ մը լսել տալով , կամ  
հոգեոր զըբեր կարգալ տալով : || Ե-  
ղաւոր մը երբոր դասնալու ըլլայ իր  
մեղքէն , կարծես թէ Ասուուած կ'ը-  
սէ անոր սրտին մէջը , թէ փոխէ քու  
վարդդ : Հանկարծակի մահ մը թէ  
որ հանդիպի մէկին , ամենաւն քա-

բող կ'ըլլայ, թէ խոստովանանք եւ զեք մեղքելնիդ . ու պատրաստ կեցէք: Հեւանդութիւնները ու աշխըզքիս նեղութիւնները անդադար քարոզ կու տան, թէ մեղքեն փախեք ու հեռացէք: Հանդիսար ու ուրախութիւնը կը շարժէ սրտերնուս փափաքը, թէ որքափ անուշէ Ա. Մատուցյած ծառայէլը:

Բ. Մատուած թէպէտ և կը կանչ զմեզ, ասկայն մեզի կ'իննի հնագանդիւլ իրեն: Հոգին սուրբ իրաւոյս է՝ որ կը լուսաւորէ, կ'արթնցընէ ու կը պտղաքերէ . բժիշկ է՝ որ կ'առողջացընէ, բայց անսնց մինակ կու տայ առողջութիւն, որոնք որ կ'ուղեն ու կը փափաքին նէ. ան սըրտերը մինակ շէն կը պահէ ու կը զարդարէ, որոնք որ իր առջել զիրենք կը բանան . ան հոգինները կը լուսաւորէ, որոնք որ իրենց ուրախութանք զնն դոցեր արեւուն դէմ: Ա. Մատուած չնորհք կու տայ մեզի, կ'ուղէ որ փրկութեան համնինք . բայց չուղեր որ առանց աշխատանքի փրկութնք.

կ'ուղէ որ սուրբ ըլլանք, բայց չուղեր որ բանութեամբ ըլլանք: Ի՞նչ մեծ անկարպութիւն է փախչիւլ քարոզէն, թօղուլ խոստովանահայրը, չիկարդալ հոգեկոր գիրք մը, որ մարդուն սիրաը կը շարժէ, ու մեղքը երեսը կու տայ: Իս փախչիւլ չէ թէ մինակ անհնազանդութիւն է, հապա ապստամբութիւն ալ կը սեպուի Հոգւցյն սրբոյ դէմ:

Գ. Մատուած կը կանչէ զմեզ, սակայն վայ մեզի՝ թէ որ շուտով մատիկ չընենք իրեն: Առուրբ Ա. Մատթէոս Յիսուսին ձայնը լսածին պէս՝ թողուց իր ամէն բանը, ու զնաց Յիսուսին ետեւէն . ուստի մաքսաւոր ըլլալովը եղաւ առաքեալ ու աւետարանիչ: Առուրբ Պիետրոս Յիսուսին մէկ նայելովը զգաստացաւ իր մեղքէն, ու ապաշխարութեան արցունքով լեցուեցան իր աչքերը. զրդաց ու եղաւ սուրբ և զլուխ առաքելոց: Յուդա մատիկ ըրաւ Յիսուսին խրաներուն ու իր խղճմանքին զրգելուն, անոր համար յու-

սահատեցաւ ու դատապարտուեցաւ : Ովկիտէ թէ ան ծածուկ շնորհքն որ հիմն սրտիդ մէջը կիմանաս , ըլլայ ետքի շնորհքը որ Աստուած կու տայ կոր քեզի . Եթէ մըտիկ ըրեիր , փրկութեան կը հասնիս . Թէ չէ , կը դատապարտուիս : Ունէ որ Աստուած կը կանչէ զբեզ մէկ առլէկ կենաց մը ձեռք զարնելու , ու գուն ալ շաւուով չես հասզանդիր իրեն , կարելի է որ սրդողի ու մէյ մ'ալ չիկանչէ , գուն ալ քու զըլխուդ գէշ համբայ մը բանես . նայէ՞ որ ան ատենը ինչ սիթի ըլլայ քեզի :

**Պատուա:** “ Կիր թէ հոգեվլարութեան մէջ էս + ու մամշտա թէ ինչ բանի վրայ խոճմանանքդ աւելի կը բնայ զարնել , հիմակու ընէ ջանա՞ որ դեղ ընես , ինզ գրելով սուրբ Աստուածանայ միջնորդութիւնը , ու ըսէ իրեն բոլորով սրտիւ . ” Կ քեզ եմք ապաւ ինչալ Վրիստոսի մայր Աստուածոյ մերոյ . . . մի դարդարիք բարեխօսել վասն մեր՝ Վրիստոսի մայր Աստուածոյ մերոյ . . .

Ա. Յ. Թ. Ք.

Վայ իմ խաւարած մոքիս , չեմ տեսներ Աստուածոյ ինձի տուած ծածուկ շնորհքները . վայ իմ քարաց ցեալ սրտիս , որ չեմ շարժեր Աստուածոյ շնորհքներովը : Որչափի կանչը է զիս Աստուած իր ողջոմնւթեամբը յորդորելով իմ հոգիս . իր արդարութեամբը պատժելով իմ մարմնս ու ունեցած բարիքս . սակայն ես ոչ ողջոմնւթենէն շարժեր եմ , և ոչ արդարութենէն վախցեր եմ : Որչափ շնորհքներ կորսնցուցեր եմ , որով կինայի գառնալ իմ մեղքէս , կինայի բարիք ընել , կինայի համց ըլլալ Աստուածոյ , ու կինայի փրկութեան համնիլ : Հիմն որ զըրկուած եմ ամենէն , շնուեմ ընելլքս . բայց եթէ ապաւ ինիլ քու բարեիխօսութեանդ սուրբ Աստուածածին . ով զիտէ՝ թէ աս ալ մասնաւոր շնորհք մին է ինձի , որ կը շարժէ զիս քուկին մայրութեանդ զի-

մել, քու միջնորդութեանդ իյնիլ։  
Գիտեմմայր Վստուծոյ, որ շատ մեց-  
զաւորներ քուկին զօրաւոր պաշտ-  
պանութեամբդ արդարացեր են, ու  
իրենց հոգին փրկութեան է հասեր-  
ես ալ մէկն եմ անսնացմէ, ուստի  
կ'աղաւչեմ խոնարդութեամբ սրտի,  
որ ինձի ալ ողարմիս ու տաս ննորդը  
ճշմարիս խոստովանութեան և ա-  
պաշտառութեան, որով ըլլամ հա-  
ճոյ Վստուծոյ, ու քու մայրութիւնդ  
իմ հոգւոյս փրկութեամբը փառա-  
ւորուի։

ՔՍԱՆԵՐՈՐԴ ԶՈՐՅՈՐԴ ՕՐ

Ներելի մեղաց վրայ։

Ա. Շատ անգամ կ'ըսուի թէ  
ներելի մեղքը պղտի բան մըն է . սա-  
կայն զիտցիր որ զի ստուած սրդաղ-  
ցընելը պղտիկ բան չէ։ Վստուած  
որ մեծ է, մեր բարի հայրն է, մեր  
տէրն է, մեր գթած փրկին է, շատ

ծանր յանդպնութիւն ու ապերախ-  
տութիւն է զինքը սրդաղցընելը . ա-  
նանկ որ պղտիկ բան մը սեպելու է  
անոր քովը բոլոր աշխարհիս փլչիլը  
ու կորսութիլը։ Մէկ պղտիկ ներելի  
մեղք մը՝ որ Վստուծոյ դէմ կ'ըլ-  
լայ, շատ աւելի վնաս է՝ քան երկնի  
ու երկրիս օշնչանալը։

Բ. Ու թէ որ մէկը զիսուածով կամ  
առանց զիտնալու մեղանչէ, արժա-  
նի է թողութեան . բայց զիտնա-  
լով թէ ան սուտը, կամ աս անհնա-  
զանդութիւնը ներելի մեղք է, ու  
անհոգ ըլլալով մեղանչէ, ըսել է՝  
թէ կ'ուզեմ իմ կամբծ կատարել,  
ու հոգսչէ Վստուծոյ սրդաղցիլը։ Առ-  
կայն զիտցիր որ սովորութիւն ընե-  
լով զի ստուած սրդաղցընելը, ու բա-  
նի տեղ չիգնել Վստուծոյ կամբին  
անհնազանդ ըլլալը, թէպէտև մանր  
ու ոչնչ բաներու մէջ ըլլայ, ծանր  
կու գայ իր հայրական սրտին . տես-  
նելով որ զաւկըները անհոգ են ու  
բանի տեղ չեն սեպեր իրենց հօրը  
սրդողիլը։

Ք. իմէ որ ասանկ անհօդ ըլլաւ-  
լովներելի մեղքերուն վրայ կեանքդ  
անցընես, գիտոցիթ որ մէկ օր մը ան-  
տարակոյս կ'ընսիս մահացու մեղքի  
մէջ. ինչու որ Աստուած շատ չիկըր-  
նար կենալ ան մարդուն հետ, որ  
զինքը անդադար կը սրդողընէ : Առ-  
կից ՚ի զատ՝ չես մտմտար որ մանր  
մեղքերով կամաց կամաց հօգևոյդ  
ուժը կը պակսի, մահը ու դժոխքը  
քեզ չեն վախցըներ, ու Աստուած  
ալ քիչ քիչ կը հէռանայ քեզմէ :  
Կ ատ անդամ մահացու մեղքերուն  
քովը կը պտըտիս, ու չես իմանար.  
ով զիտէ թէ չես ալ ինինար : Առ-  
զեմ կ'ըսես փրկութեան համնիլ,  
ու միշտ վատանդներու մէջ կը պտը-  
տիս :

**Պատող:** ՞ անա որ պատարագ  
տեսնալու ատենդ՝ մասնաւոր պատ-  
կառանք մը ունենաս, ու պարկեշ-  
տութեամբ աղօթք ընես. գիտօցիթ  
որ շատ պակտութիւններ թեթև ու  
ովինչ բան մը կ'երենան, բայց ան-  
հաճոյ են Աստուածոյ ու սուրբ Աս-

տուածածնայ, ու սուրբի խնդրելով քե-  
զի օգնութիւն, ըստ առ սուրբ տի-  
րամացըր . “ Վ քեզ եմք ապաւինեալ,  
ամէնորհնեալ սրբուհի . լեռ բարե-  
խոս անդադար վասն մերոյ փրկու-  
թեան , :

### ԱԴՅԹԻՔ

Ո՛վ անարատ կոյս սուրբ Առ-  
տուածածին, որ սրբութեան օրի-  
նակն ես ու անմեղութեան հայիլ,  
կ'աղաչեմ քու անարատ մաքրու-  
թեանդ համար լուա ու սրբէ իմ  
սիրոս ու հօգիս ամէն աղտոտու-  
թենէ : Պատու որ աղբիւր ես Աս-  
տուածոյ շնորհըներուն, ու քեզմանվ  
կ'ընդունինք մեր կենդանութեան  
ջուրը, արժանի ըրէ իմ ծարուած  
հսկիս՝ որ թուցեր ու տկարացեր է  
զանազան մեղքով, որպէս զի առ-  
նում զօրութիւն ու արիանամ ա-  
մէն տեսակ մեղքերու դէմ. մանա-  
ւանդ ան մեղքերուն, որ առանց  
զիմնալու, առանց ձանձնալու, ու ա-

ռանց մտածելու օրէ օր անդադար  
կյսելով՝ կը սրգողցնեմ իմ քաղցր  
փրկիչս, իմ ահաւոր տէրս, ու իմ  
գթած հյորս։ Պիտեմ մայր Աս-  
տուծոյ, որ քեզի հանց է աս խըն-  
զիքս. ուստի անտարակոյս եմ թէ  
կու տաս ինձի անանկ չնորհք մը,  
որ կարենամ իմ կեանքս սուբը ու  
անարատ անցընելով փառաւորել  
իմ փրկիչ Քիսուս, ու արժանի ըլ-  
լալ արքայութեան։

---

ՔՍԱՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՕՐ

Քաւարանին վրայ։

Ա. Ամբուամ թէ ինչ բան է քա-  
ւարանը։ Անկ բանա մըն է լեցուն  
կրակով, զոր վառեր է աստուածայ-  
ն արդարութիւնը։ Անանկ տեղ  
մըն է, ուր մարզը թէպէտ և կը սի-  
րէ զիստուած, սակայն կը քաշէ Աս-  
տուծոյ պատիժն ալ։ կը փափաքի  
տեմնալ իր ստեղծողը, ու չիկնար։

Կը սպասէ մէկ ատենի մը՝ որ երթայ  
արքայութիւն, ու չիտէ թէ երբ կը  
հանի։ Ալ չարչարուի անանկ ծանր  
տանջանքներով, որ չիգտուիր աշ-  
խըրքիս մէջը։ սակայն պէտք է որ  
քաշէ առանց վարձքի, առջի ըրած  
թէթև մեղքերուն համար, ու թո-  
ղուած մեղքերուն ալ ապաշխարան-  
քը ընկելուն համար։ Անանկ տեղ  
մըն է, որ մինակ մորմթալը մար-  
դուն սիրտը դող կը ճգէ։ սակայն  
դուն ամեննեն բանի մը տեղ չես  
դներ զանիիայ։

Բ. Ամբուամ թէ ինչու համար  
կ'երթըցուի քաւարանը։ Անկ թե-  
թե բանի մը համար, որ մարզիկ  
մեղքի տեղ ալ չեն դներ։ Պիտիկ  
անհոգութիւն մը ազօթքի մէջ։ պըզ-  
տի խօսակցութիւն մը եկեղեցնայ  
մէջ։ ոչինչ փափաք մը կամ մնամը-  
տուք մը աշխըրքիս ունայն բանե-  
րուն։ աւելորդ ծիծաղ մը։ և այլ  
ուրիշ մանր բաներ, ինչպէս որ Աս-  
տուած շատ անգամ յայտներ է  
սուրբերուն։ Ասոնցմէ իմացիր թէ

ինչ պիտոր ըլլայ քեզի այդշափ բար-  
կութիւններուդ համար, սուտ խօ-  
սիններուդ, անհնազանդութիւննե-  
րուդ, եկեղեցնայ մէջ ըրած անկար-  
գութիւններուդ, պարտքերուդ վը-  
րայ անհոգ ըլլալուդ, դատարկ խօս-  
քերուդ, աւելորդ զարդարանքնե-  
րուդ, ու այլ անհամար պակու-  
թիւններուդ համար որ ըրեր ես ու-  
րիշի գեմ, ու չես մոտըտար գեղ մը  
ընելու :

Գ. Ա տուրտա թէ հըչափ ատեն  
պիտի կենաս քաւարանին մէջը : Ի՞ս-  
տուած ամէն մէկին իր մեղայը յար-  
մար կը չափէ պատիժը . որչափ շատ  
է ներելի մեղքդ կամ թողուած մա-  
հուչափ մեղքերուդ քաշելու պա-  
տիժը, այնչափ աւելի պէտք է որ  
զրկուած կենաս լցուոծց ցանկալի  
տեսութենէն : Ի՞ն ծաստիկ փափաքն  
որ ունի մեր հոգին մեռնելին ետքը  
շուտով տեսնալու զլցուուած, որ-  
շափ քիչ ատեն ալ զրկուած մնայ  
անկից, միշտ մեծ տանջանք է ու  
շատ կերևնայ իրեն, որովհետեւ չէ

հասած իր փափաքսանայը ու ետքի  
վախճանին + ուսաի մէկ օրը ամիս-  
ներ կըլլայ իրեն, և ամիսը հարիւ-  
րաւոր տարիների՝ լայէ թէ ինչ գնով  
ծախու կանես մէկ թեթև ու նե-  
րելի մեղքը մը :

Պատուած ամսաւոր ջերմեռան-  
գութիւն ընելով ըսկէ Ա խորց հար-  
դացի սաղմանը քաւարանը եղած  
ան հոգիին համար, որ իր կենսայը  
մէջ աւելի ջերմեռանդ է եղեր սուրբ  
Աստուածածնայ . աղաւելով զախ-  
րամայը, որ զբեզ ալ ազատէ քա-  
ւարանին տանջանքէն + ուսաի ըսկէ  
իրեն բոլորով սրտիւ . Ա Արց ան-  
մահ փեսային եղեր զու մայր Աա-  
րիամ, բարեխօսեալ վասն մեր ՚ի  
յայնմ աւուր աչեղին , :

### ԱԴՐԹԻՔ

Ո՞ւ սրբութիւն սրբոց և անբա-  
ւելի բարութիւն Աստուած իմ Հի-  
սուս, որ ուղենալով իմ փրկու-  
թիւնս՝ զրեր ես ամէն ձամբան մաք.

բուելու, սրբուելու ու անարատութեամբ քու քովդ հասնելու արքայութեան մէջ։ Պիտեմ տէր, որ հողեղեն ըլլալով չեմ կրնար աշխըզքիս մէջը ազատ ըլլալ ամէն մեղքէ, չեմ կրնար անանկ սրբուիլ, որ ըլլամ կարօտ քաւարանին մաքրութեանը. սակայն ապաւինելով քու ողորմութեանդ՝ կ'ազաւեմ փրկիչ իմ Յիսուս, տուր ինծի որ աս աշխըզքիս մէջը քաշեմ իմ ասլաշխարանքս, հոս նեղուիմ, հոս տան ջուիմ, հոս խաջուիմու մեռնիմ քեզի չետ, որպէս զի լուացուելով իմ ամէն աղտոտութենէս՝ առանց տան ջանաց քաւարանին արժանի ըլլամ ամենաօսութ երեսդ տեմնալու։ Ալ ինդքեմ քեզմէ ալ մայր ողորմութեան. քու մայրական ինամբդ ցըցքնելով իմ լրաս, միջնորդ եղիր առ Ուրդիդ քո միածին առ իմ ինդիքս կատարելու, որպէս զի մաքուր և անըիծ հոգւով աղեկ ծառայեմ Աստուծոյ, ու քու սաշտպանութեղդ առանց քաւարանի հանիմ արքայ-

ութիւն, և հօն վայեմ իմ յաւիտենական երանութիւնս՝ տեսնաւ լովզ ստուած ու ժառանգելովզն քը յաւիտեանս յաւիտենից։

---

ՔՍԱՆԵՐՈՐԴԻ ՎԵՑԵՐՈՐԴԻ ՕՐ

Յիսուսին տղայուրեանը վրայ։

Ա. Մամըտակ մանուկ Յիսուսին աղքատութիւնը իր ծննդեան ատենը, ու նայէ թէ ինչ կարօտութիւններ քաշեց։ Տուն մը շունենալով պէտք եղաւ որ մարին մէջը ծնանի։ Ենկողին շունենալով հարկ եղաւ որ կտօր մը խոտին վրայ պառկի։ Տաքնալու համար կրակ շունենալով կարօտ եղաւ որ երկու կենդանիք իրենց չնչով զննքը տաքցընեն։ Կմայ ըլլալ որ խանձարուրէն զատ ոլլուելու լաթ շունէր, պէտք եղաւ որ տուրը Յովսէփ իր լաթովը ծածկէ։ Յիսուս ասանկ աղքատ է. իսկ

գուն մեծութիւն կը սիրես , ու ետևէն ալ կ'կյնիս :

Ք . Ա տմբտան թէ Հիսուս ինչ նեղութիւն ալ քաշեց ան աղքատութեանը մէջ : Ի զնիս ու փափուկ մարմնով ինչ ցուրտ քաշած պիտի ըլլայ ան ձմեռուան ատենը , ինչ չարչարանք՝ ան չոր խոտին վրայ պառկելով , և որչափ ուրիշ նեղութիւններ ալ քաշած կ'ըլլայ իր անէն գուրս ըլլաով : Ա ակայն աս ամէն վշտաց մէջը միլուսւեցաւ բերնէն մէկ ճիշմը , կամ ազուրներէն արցունք մը : Հիսուս ասանկ համբերող է . իսկ զուն հանգստեան և ուրախութեան ետևէ ես :

Գ . Ա տմբտան Հիսուսին խօնարհութիւնն ալ , նայէ ինչպէս ծնաւ : Ա ութ զիշեր ատեն , ու անձանօթաեղ մը , չունեցաւ մէկը՝ որ իրեն ծառայէ , բայց եթէ իր մայրը՝ ու սուրբ Հովհանէփի : Ի չնչ մարդիկներու ձանցուց զինքը , բայց եթէ մէկ քանի գեղացի հովհաներու : Երեցընելով զինքը մէկ խեղչ աղքատի մը

պէս . ու զիգտնուեցաւ մէկը , որ զինքը զիշեր մը սուն ընդունի ողարմութեան համար : Հիսուս ասանկ խոնարհ է , իսկ զուն կ'ուզես որ ամէնը քեզ պատուեն ու մեծարեն Վանա մաքովդ Հիսուս մանուկին քովը , ու մոնիկ ըրէ ինչ քարոզ կու տան քեզի ան մնուրը , ան չոր խոտերը ուր պառկեր է Վրիստոս , ու ամըցիբրու կենացդ վրայ :

Պ ատուդ : Ա սլորութիւն ըրէ քեզի , որ ամէն գործքիդ մէջը միտքդ բերես Հիսուս ու սուրբ Ա ստուածածինը , իրենց յանձնելով քու ամէն բանդ՝ ու ինսքելով օգնութիւն որ կարենաս ըլլալ հշմարիտ հետեղող Վրիստոսի , ու ըսէ բոլորով սրտիւ . “ ( Ծ ընեալ ես զու ’ի կանայս , և օրհնեալ է պտուղ որովայնի քո ” :

ԱՊՈՔԻ

Ո՛Վ Վատուած իմ Հիսուս մըտ-  
մըտալով՝ քու խոնարհութիւնդ, քու  
աղքատութիւնդ, քու նեղութիւնդ  
որ քաշեր ես ինծի համար, մանա-  
ւանդ պղտիկութեանդ ատեն, կը  
ցաւիմ ու կը զղջամ իմ հապատու-  
թեան վրայ: Դուն որ Վատուած  
ըլլալով՝ անկարօս բանի մը, ու զե-  
ցիր իմ փրկութեանս համար զըր-  
կուիլ ամէն բանէն, ինչուան չփըտ-  
նուեցաւ տուն մը՝ ուր կարենաս ծնա-  
նիլ ու հանգչիլ. իսկ ես որ ոչինչ եմ  
քու առջեւդ՝ իմ հապատութեամբս  
չէ թէ մինակ հանդիսաս կը փնտը-  
ռեմ, այլ և աւելորդ ու անշահ բա-  
ներու ետևէ եմ, որով կը ցըցնեմ  
թէ չեմ քու ձշմարիտ աշկերտդ,  
չեմ ուզեր քու ետևէդ երթալ, ու  
վարքիդ նմանին: Վանկ ըլլալով՝  
ինչպէս կրնամ յայ ունենալ ար-  
քայութիւն համնելու, ու իմ հո-  
գիս փրկելու, որով ետև արքայու-

թեան ձամբէն դաւրս կը պարտիմ,  
ու չեմուզեր քու խոնարհութեանդ  
հետեւիլ: Կ'աղաղէմ փրկիչ իմ Հի-  
սուս, միջնորդութեամբ անարատ  
ծնողիդ լուսաւորէ իմ միտքս, զօ-  
րացուր իմ հաւատքս որ կարէնամ  
ձանընալ ինծի տուած օրինակներդ,  
ու բոլորով սրտիւ հետեւիլ անոնց  
որպէս զի վարքովս ցըցնեմ թէ  
իրաւ քու աշկերտդ եմ, ու կը փա-  
փարիմ զբեղ պաշտել, զբեղ փա-  
ռաւորել ու յաւիտեան քեզի հետ  
ըլլալ արքայութեան մէջ:

ԳՍԱՆԵՐՈՐԴ ԵՅԹՆԵՐՈՐԴ ՕՐ

Յիսուսին մեզի տուած օրինակներուն  
վրայ :

Ա. Յիսուս իր տղայութեան ա-  
տենը միշտ հնազանդ եղաւ իր սուրբ  
մօրը, ու սրբոյն Յալսեփայ: Եայէ  
ինչ մեծ հնազանդութիւն է՝ որ որ-  
պէն Վատուածոյ հնազանդի ստեղ-

ծուածի մը : || Առմըստան թէ ինչ բա-  
նի մէջ հնազանդեցաւ : Իր հնա-  
զանդութիւնը երկցուց ամէն խո-  
նարհ աշխատանքներու մէջ . ին-  
չուան աւլել ու փայտ կոտրել . որ  
տեսնողները կարծեցին թէ հիւսան  
(Քիւրիէրի) զաւակ մըն է : || և աս աշ-  
խատանքներս անանկ սիրով ու յօ-  
ժարութեամբ կ'ընէր , ինչպէս թէ  
հնազանդիլ ըլլար իր պարտքը : Դե-  
մա նայէ թէ ինչ մեծ ամօթէ քու-  
ան հնազանդութիւնդ , որ կը ցըցը-  
նես մեծաւորներուդ :

Բ. Հիսուս իր տղայութեան ա-  
տենը անգաղար աշխատանքի ու ա-  
զօթքի հետ էր . չէ թէ պարապ կե-  
նալին վախ մը ունէր , կամ վտանգ  
կար փորձութիւն քաշելու , (որ ա-  
զատ էր ասանկ բաներէն) , հապա-  
ռւզեց բարի օրինակ տալ տկար ու  
ողըրմելի կարիքներուն , որպէս զի  
իրենք ալ աշխատանայ ու աղօթքի  
հետ ըլլան , աշխըրքիս ու սատա-  
նային փօրձութիւններէն խալըսե-  
լու համար :

Գ. Հիսուս հրչափ որ տարւոք կը  
մեծնար , այնչափ աւելի իր սրբու-  
թիւնը դրսէն կ'երևցնէր . չէ թէ  
մինակ հօր Շատուծոյ առջևը՝ այլ և  
մարդիկներուն կը ցըցնէր , որպէս  
զի սորվըցնէ մեզի , թէ պէտք է  
դրսուանց ալ աղէկ երկնալ՝ ուրիշի  
բարի օրինակ ու շինութիւն տա-  
լու համար : Եւ ինչպէս որ Հիսուս  
առաջ իր հօրը , այսինքն Շատուծոյ  
աչքին աղէկ երկցաւ , ու ետքը մար-  
դիկներուն , ասանկ ալ մենք պիտի  
ջանանք որ էն առաջ Շատուծոյ հա-  
ջոց ըլլանք : || ևսի մեծ ամօթէ է  
մեզի՝ որ անհոգ ենք աղէկ ըլլալու ,  
ուրիշի բարի օրինակ տալու . և ա-  
սոր ներհակ՝ մարդկային նկատման  
համարկեանքերնիսգէշկանցնենք:

Պատաղ : Վ անա որ գատարկ ա-  
տեն ամեննեին չանցլնես . և եթէ  
բան մը չունենաս ընելու , կարդա  
անանկ գիրք մը , որ սուրբ Շատուծ-  
ածանայ մեծութիւնը , փառքը , մայ-  
րական խնամքը ու Ձերմեռանդու-  
թիւնը սորվըցնէր . քեզի : Եւ ըստ

իրեն բոլորավ սրտիւ . “ Օռառ կե-  
նաց , որ զանմանհութեան պատուղն  
ի քէն ետուր նախնոյ մօրն լըայի  
ի մահաբեր երկանց ազատելով . բա-  
րեխօսեամ առ Տէր վասն մերոյ փըր-  
կութեան ” :

ԱՂՅԹԻ.

Ծնորչակալ եմ քեզմէ Աքտուած  
իմ Հիսուս , որ քուկին տուած քա-  
րի օրինակներովդ անուցուցեր ես  
արքայութեան ձամբան . խնարհ  
Հնազանդութիւնդ կը յորդորէ զիս  
առանց մամրտալու խնարհիլ ու  
Հնազանդիլ իմ հոգեոր հօրս . քու  
անդադար ազօթքդ ու աշխատանքդ  
սիրտ կու տայ ինձի բողոք իմ կեան  
քը Աքտուծոյ ծառայութեան մէ-  
ջը անցընելու , քու անուշ վարմունքդ  
ու կենցաղավարութիւնդ կը շարժէ  
զիս սրբութեան ու առաքինութեան  
ետեւ ըլլալու : Աակսյն հողեղնէն ըլ-  
լալով՝ ակարութիւնս կը վախցնէ  
զիս աշխատանքէն , ետ կը քաշէ նե-

դութենէն , ու անպտուղ կ'ընէ իմ  
կեանքս : Ա'աղաչեմ փրկիչ իմ Յի-  
սուս , բայ իմ աչքս , զօրացուր իմ  
սիրոս , որ արհամարհէմ զաշխալք ,  
բանի տեղ չնդնեմ նեղութիւնը ,  
սիրեւմ զիսաչք , ու մեռնիմ քու սի-  
րյոդ համար . որպէս զի նմանելով  
քուկին կենացդ՝ արժանի ըլլամ' ար-  
քայութեան մէջն ալ քու տեսու-  
թեանդ ու աստուածային փառացդ :

ՔՍԱՆԵՐՈՒՐԴ ՈՒԹԵՐՈՒՐԴ ՕՐ

Եիսուսին անապատի մէշ տուած օրինակ-  
ներուն վրայ :

Ա . Յիսուս անապատին մէջ իր  
մինաւորութեամբը կը սորվոցընէ  
ինձի մէկ անզըաղ կեանք մը : Կնք  
թէպէտ բանէ մը վախ չունէր որ  
խաբուի , ոչ ընկերներէն՝ որ զինքը  
մոլորցընէն , ոչ խօսակցութիւննե-  
րէն՝ որ իր միտքը դարձնէն , սա-  
կայն այսու ամենայնիւ ուղեց փախ-

չիլ քաղքէն ու երթալ անապատը, հապա ես որ ասանկ տկար եմ, ու ամէն պղտիկ բանէն կը խարուիմ, ինչու համար չեմ քաշուիր, այլ կ'ու զեմ անգաղար մարդկանց մէջ կենալ, ու ամենուն հետ կենցաղավարիլ:

Բ. Հիսուս անապատին մէջը իր ծոմապահաւթեամբը կը սորվացընէ ինձի աղօթքի հետ ըլլալ: Ի՞նչ կարուութիւն ունէր Հիսուս աղօթքը ընելու, միթէ իրեն չնո՞րհք մի կը պակաէր՝ որ տէրն էր չնորհաց. միթէ առաքինութեան կը կարօտէր, որ լի էր ամէն առաքինութեամք. միթէ դիտութիւն չունէր, որ ինքն էր Իսուսուծոյ հօր իմաստութիւնը: Հապա ես որ կարօտ եմ չնորհքի, առաքինութեան ու դիտութեան, ինչու ասանկ քիչ աղօթք կ'ընեմ. ու ան ալ չու զելով, գաղջութեամք ու խելքս միտքս ասդին անդին ցըրուելով:

նայ դրած քանի մը պաքն ալ չես ուզեր պահէլ, կամ կը ջանաս բանով մը թեթևացընէլ:

Գ. Հիսուս անապատին մէջը իր անդադար աղօթքովը կը սորվացընէ ինձի աղօթքի հետ ըլլալ: Ի՞նչ կարուութիւն ունէր Հիսուս աղօթքը ընելու. միթէ իրեն չնո՞րհք մի կը պակաէր՝ որ տէրն էր չնորհաց. միթէ առաքինութեան կը կարօտէր, որ լի էր ամէն առաքինութեամք. միթէ դիտութիւն չունէր, որ ինքն էր Իսուսուծոյ հօր իմաստութիւնը: Հապա ես որ կարօտ եմ չնորհքի, առաքինութեան ու դիտութեան, ինչու ասանկ քիչ աղօթք կ'ընեմ. ու ան ալ չու զելով, գաղջութեամք ու խելքս միտքս ասդին անդին ցըրուելով:

Դիտուլ: Ո՞րչափ որ կրնաս նէ ջանա քեզ ժողուցտել ու մինաւորիկ հոգեսոր կեանք մը վարել. մանաւոր հոգ ունեցիր զործք ընելու ատենդ լուութիւն պահէլ սուրբ Իստուածածնայ սիրոյն համար. ու ըսէ

առ Հիսուս . “ Եկը տէր պահաւ պան բէրանց իմց , և դուռն ամուր շրթանց իմոց . զի մի խտարեսցի սիրո իմ քանիւ չարութեան , :

ԱՂՅԹՔ

Կը փափաքիմ փրկիչ իմ Հիսուս՝ քեզի հետ անապատը ելլալ . քեզի հետ քառուիլ , քեզի հետ նեղութիւն քաշել , ու մեղքերուս ապաշնարութիւնը քու քովզ ընել : Դիտեմ փրկիչ իմ Հիսուս՝ որ քաղցր ես , սիրով կ'ընդունիս քեզի ընկածները . կ'ողջընցընես իրենց տըկարութիւնը , կը մաքրես իրենց մեղքերը , կ'արդարացընես իրենց հոգին , ու կը զարդարես աստուածային չնորդքներովդ . ուստի կ'աղաւեմ որ ընդունիս իմ հոգիս ալ , որ զովալով ըրած մեղքերուն վրայ , կը փափաքի ասկից ետքը քեզի ծառայելու , ու քու սիրոյդ համար յանձկանու աշխարքէս հեռանալը , ու ամէն տանջանաց համբերելը . միայն

թէ արժանի ըլլայ քու անուշ ձայնդ լսելու , և հոգեւոր միսիթ արութիւնդ տեսնալու իր սրտին մէջը : ՎՀԼՇ տուած իմ Հիսուս , դուն ես իմ կեանքս . դուն ես իմ յոյսս , դուն ես իմ փրկութիւնս . դուն ես իմ արքայութիւնս . թէ որ քեզ զլտնամ , թէ որ քեզ տեսնամ , թէ որ քեզ ժառանգեմ , կը լցուի ամէն փափաքս , ու ես ալ անկարօս մնալով կ'ըլլամ յաւիտեան :

ՔՍԱՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ ՕՐ

Թիսուսին խաչեարեան վրայ :

Ա . Մամբուա քեզի ըրած Բատուծոյ բարութիւնը Հիսուսին խաչելութեամբը . Հայրն Աստուած իր միածինը քեզի համար զահ կընէ . ու միածին որդին ալ ինք զինք կու տայ քու փրկութեանդ համար . Հերիք էր մինակ մէկ կաթիւը իր սուրբ արիւնին զքեզ փրկելու .

սակայն իր բարութեանը համար ու զեց բոլորը թափել ինչուան եւոքի կաթիլը : Ի պից ՚ի զատ՝ թող իր բաշած չարչարանքները, նախատինքը, թուքը, ծեծը, փուշ պսակը, գամերը, ու լեղին՝ ՚լայէ որ ՚լուտուած սիրեց զքեզ ամենէն եւել իսկ դու կ անարգեն զինքը, ու ամէն բանէն վար ես զըեր զանիկայ :

Բ. ՚Վամբռակ ՚Կատուծոյ սաստկութիւնը ու արդարութիւնը ՚Յիսուսին վրայ. նոյնէ թէ իր միածին Ռոդին բնազիւս նախատական մահուան տակը ձգեց աշխարքիս մեղացը համար : ՚Կ մեղքերս թէպէտ իրը չէր, սակայն մարդկանց փրկութեանը համար առել էր իր վրայ. ուստի պէտք եղաւ որ քաշէ : ՚Ծակ պէտ ինքն անմեղութիւն ու որբութիւն էր, բայց ուրիշի մեղացը համար յանձն առաւ խաչուիլ : ՚Ծակ պէտ միածին որդի էր ՚Կատուծոյ ու գառն անարատ, սակայն մեղաւոր երեցաւ, ուստի պէտք եղաւ որ մեռնի նի երկու աւազակաց մէջ, մեռնի

իբրև իր հօրը երեսէ ինկած, մեռնի իբրև մէկ վատաննուն մը : ՚Այէ թէ ինչ սոսկալի բան է մեղքը . որ պիսի անողորմ դահիճէ, որ ՚Կատուածորդին խաչ համել տուաւ :

Գ. ՚Վամբռակ ՚Կատուծոյ բարութիւնը ու սաստկութիւնը : ՚Դէկ միաբդ զիր աս երկու ճշմարտութիւնը, որ ՚Կատուած քու վրադ ալ կը բանեցընէ : ՚Ծակ որ ՚Յիսուս քու հոգւոյդ փրկութեանը համար մեռնի ուղեց խաչին վրայ, ուրեմն փըր կութիւնը մեծ ու հարկաւոր բան մըն է, և նշան աստուածային բարութեան . ուստի վայ քեզի, թէ որ դատապարտուիս : ՚Ծակ որ ՚Կատուծոյ արդարութեամբը բոլորովինն սուրբ ու անմեղ ՚Յիսուսը ասանկ չարչարուեցաւ ուրիշի մեղացը համար, ինչ պիտոր ըլայ քեզի գժոխքին մէջը քու անթիւ չար մեղքերուդ համար : ՚Վկ անզին ու պատուական արիւն ՚Յիսուսի, որ իմ մեղքիս համար թափուեցար խաչին վրայ, թողութիւն տուր իմ մեղ-

քերուս, ՎՎլ խաչելութիւն Հիսուս  
սի փրկէ իմ հօգիս :

Պատուած : Ի՞ս մեծ բարերարու-  
թիւնն որ Վատուած ըրեր է քեզի,  
ջանա ամէն որ յիշել ու միտքդ բե-  
րել, մանաւանդ զրօսանքի ու յա-  
ջողութեան մէջ. չնորհակալ ըլլա-  
լով ու գուն քեզի ըսելով. | Ամ անես,  
իմ փրկիս խաչին վրայ մեռաւ. | Խակ  
ես կ'ուզեմ հանգստեան մէջ ապ-  
րիւ: | Ձաւէ սուրբ Վատուածածի-  
նը, որ սիրտգ տոգարէ Յիսուսին  
խաչելութեան սիրովը, ու ըսէ ի-  
րեն. “ Փափաքիմ ընդ քեզ լինել  
ի Պաղպոթա առ ոտս փրկին իմց ”:

### ԱՂՅԹԻՔ

Երկրպագեմ անձառելի խանար-  
հութեանդ Վատուած իմ Հիսուս,  
որ իմ փրկութեանս համար յանձն  
առիր չէ թէ միայն մարդ ըլլալ այլ  
և իմ սիրսոյ համար մասնալով քու  
մեծութիւնդ, քու փառքդ, քու  
պահնէլքդ՝ ուղեցիր մասնուիլ ան-

ողըրմ զինուորաց ձեւքը. կապուիլ,  
չարչարուիլ, վշով պսակուիլ ու էն  
եաբը խաչին վրայ մեռնիլ, որպէս  
զի իմ ծանր մէղքերուս թողութիւն  
ըլլայ, վերքերս ըսլմանան, սեցած  
հօգիս լուացուի քու սուրբ արիւ-  
նովդ : ՎՎլ իմաստութիւն յաւիտե-  
նական, չիտեմ թէ ինչ բանով  
չնորհակալ ըլլամ քեզի, որ ասանկ  
մեծ բարերարութիւն ըրեր ես ին-  
ծի. մինակ մժմըտալը քու սէրդ իմ  
վրաս՝ կ'ուրախացընէ զիս ու կը յոր  
դորէ որ ես ալ իմ կեանքս բոլոր  
քեզի ընծայեմ: ՎՎլ Տէր իմ խա-  
չեալ կը փափաքիմ քեզի հետ Պաղ-  
պոթա ելլէլ, քեզի հետ խաչուիլ  
քեզի հետ մեռնիլ ու քեզի հետ  
թաղուիլ աշխարքիս մէջը, որ կա-  
րենամ քեզի հետ ալ յալութիւն  
առնուլ ու մանալ արքայութիւն:  
Կ'աղաչեմ փրկիչ իմ Հիսուս տպա-  
ւորէ իմ սիրոս քու չարչարանքնե-  
րուդ յիշատակը, որպէս զի անուշ-  
նայ ինծի քեզի համար չարչարուի-  
լը, քու սիրոյդ համար մեռնիլը աշ-

իսրաքիս վրայ, որով կ'երենայ թէ  
Հմարիս քու աշակերտգ եմ, ու կը  
փափաքիմ քեզի նմանելու :

ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ՕՐ

Սուրբ Աստուածանայ ցատցը վրայ :

Ա. Ամէն ցաւերուն մէջը, որ սուրբ  
Կառուածածին քաշեց Հիսուսին  
չարչարանացը համար, իրէքը եղան  
աւելի սաստիկ սրեր՝ որ խոցեցն իր  
մայրական գթած սիրար : Ի՞սկինը  
եղաւ կորսնցընելը իր գեղեցիկ ա-  
մենասուրբ ու քանի զամշնը ամսեղ-  
որդին : Խնչ ծանր ու անտանելի ցաւ  
է տեսնալը մէկ հաստիկ որդին վե-  
րաւորուած, ձեռքը ոտքը ծակուած,  
երկու աւազակի մէջ կախուած ու  
մեռած . մանաւանդ անանկ աղուոր  
հասակի մէջ : Ի՞ս ալ կը մամըստար՝  
թէ Հիսուս որոնն համար կը թա-  
փէ կօր իր սուրբ արիւնը : Ճի՞ւ պէտ  
ամշնամրդու համար կը չարչարուէր,

սակայն անոնց մէջը պիտի գտուի  
քեզի պէս մէկ ու զզափառ քրիստո-  
նեայ մը, որ Հիսուսին չարչարանք-  
ները բանի տեղ չփոնելով, պիտոր  
ուղէ մեղանել ու գժոմք երթալ :  
Գիտես թէ ինչ մեծ կսկիծ ու ցաւ  
կ'ըլլայ իր սրտին . ինչու որ կը տես-  
նէ թէ Հիսուսին չարչարանքը ա-  
մենանին օգուտ մը չէ ըրած անոր :

Բ. Երկրորդ ցաւը եղաւ տեսնա-  
լը, թէ իր զաւկին արիւն թափելը  
չէ թէ մինակ ամսոգուտ պիտի ըլլայ  
շատ քրիստոնեաներուն, այլ և սատ-  
ճառ սաստիկ տանջանաց գժոմիքին  
մէջը . վասն զի նոյն արիւնը պիտի  
ամբաստանէ, երեմնուն զարնէ ու  
դատապարտէ զիրենք : Ի՞սկ թէ  
ինչ ծանր ցաւ է սուրբ Աստուածա-  
ծնայ ան մարդիկներուն դատապար-  
տուիլը, որ իրեն որդեզիր են եղեր :  
Վշեզի համար կորսնցընէ իր զաւա-  
կը, ու գուն ալ չիփրկուիս . այլ մա-  
նաւանդ ան պատճառաւաը աւելի  
տանջուիս : Խնչպէս կընայ մէկ զը-  
թած մայր մը զիմանալ աս ցաւե-  
լուս :

Դ. Խքրորդ ցաւը եղաւ մնածելը, թէ շատ քրիստոնէայք բանի տեղ պիտի միդնեն իր զաւկին ամենասուրբ արիւնը, որ զիրենք պիտոր փրկէ. այլ մանաւանդ անով աւելի գէշ ու անհոդ պիտի ըլլան: Խնանկ կ'երևցընենք, թէ Յիսուս սուրբ Խսուածածնայ միածին որդին մեզի համար մեռած ըլլար նէ, մենք այսափ մեղք չենք ընկը բնիք. ինչու որ հիմա կը մեզանէնք՝ յուսազվ թէ Յիսուսին սուրբ արիւնը մեզի կ'ազգուի. չենք դապրիր մեղքէն ինչ չուան մեռնելու ատենը ատ յօսը ունենալով, թէ Յիսուսին թափած արիւնը մեզ կը խալըսէ: Խսոնք ալ հերիք չեն, այլ և զործքով կը հայդուինք, ու բանի տեղ չենք դներ իր սուրբ արիւնը: Խնչ սոսկալի ցաւ ու վիշտ է սուրբ Խսուածածնայ քաշածը գէշ ու անկարդ քրիստոնէաւներէն:

Պիտուալ: Խնչ նեղութիւն քաշելու ըլլաս նէ ասօր, ամենուն ալ սիրով համբերի սուրբ Խսուածա-

Ճնայ ցաւերուն համար, ու ըսէ իր բերնէն: “ Ամ միածին գառն անպարտական՝ ընդ որ մեղաց կաս գու’ի խաջն ու: ”

ԱՂՅԹԻՔ

Ո՛Վ ցաւազին կոյս մայրդ Խսուածոյ, Ճանճնալով որ քուկին սաստիկ ցաւերուդ պատճառով իմ ապերախտու թիւնս է եղեր, կը ցաւիմ բոլորով սրտի, ու կը դիմեմ խոնարհութեամբ քու ոսքդ, որսկէս զի արցունքով մարեմ սրտիդ կրակը՝ որ իմ մեղքերովս վասեր եմ. սրտիս ցաւովը թէ թէ եցընեմ քու կսկիծդ. Ճշմարիտ ապաշխալութէ ամբամիսիթ արեմքու վշտացեալ սիրտդ: Խաղաչեմ զբեզ մայր ու զորմութեան՝ նայէ իմ վրաս մայրական սիրովդ, որով ճնար զիս չիստուսին խաջն տակը: Որդի եմ քու ցաւոյդ, մի թօղուր զիս՝ որ մոռնալով քու մայրութիւնդ հեռանամ քեզմէ. այլ քեզի հետ կենամ՝ չիս-

սուսի խաչն քավը • քեզի հետ լամ՝  
քեզի հետ ցաւիմ քու միաձնիթ ին-  
ծի համար քաշած նեղութիւննե-  
րուն վրայ : || Այ ինծի , այսափ ա-  
տեն է որ իմ անկարգ վարուքս հե-  
ռացեր եմ քու որդիութենէդ , փա-  
խեր եմ խաչն , չեմ ու զած հե-  
տեկիլ ցաւազնեալ մօրդ , վիրաւո-  
րեր եմ սիրադ , եւեցուցեր եմ կրս-  
կիծդ . ուստի անարժան գտուեր  
եմ մայրական ինամոցդ . սակայն  
հիմա կառաջադրեմ ճշմարիս սըր-  
տիւ , ու կը փափաքիմ մեռնիլ որ-  
դիութեանդ մէջը : || Վաղաչեմ մայր  
ողորմութեան , ցըցուր ինծի քու  
գթութիւննորէն ընդունելով զիս  
քեզ որդի ու ծառայ մշտնջենաւոր .  
տալով ինծի չնորհը հաստատուն  
մնալու առաջադրութեանս վրայ :

ԵՐԵՍՆԵՐՈՐԴԻ ԱՌԱՋՆԵՐՈՐԴԻ ՕՐ

Յիսուսին սիրոյն վրայ :

Ա . Թաէ որ կ'ուզես աշխըբքիս մէ-  
ջը աղէկ բան մը սիրել , սիրէ զէնի-  
սուս քու փրկիչգ , որ սիրելի ու գե-  
ղեցիկ է քան զամէն մարդիկ . գիտ-  
ցիր որ իր աստուածային գեղեցկու-  
թեանը ամեննեին բան մը չիհա-  
նիր : || Այս մեծ խենդութիւն է սի-  
րելը մէկ պլատիկ մատնի մը , մէկ քա-  
րի կտոր մը , մէկ քուրջ մը , մէկ հո-  
զաթափ մը ու այլ չնչն բաներ . և  
չուզելը սիրել զէնիսուս , որ Ճշմա-  
րիս մեծութիւն ու բոլանդակ գե-  
ղեցկութիւն է :

Բ . Դուն որ զէնիսուս չես սիրեր ,  
զիտցիր որ զէնիսուս քեզ կը սիրէ .  
ու անանկ շատ կը սիրէ , որ պլատի-  
կոց 'ի վեր իր ամէն մոմըսուքը ե-  
ղեր է քու փրկութեանդ համօր :  
|| Ամսուկ եղաւ քեզի համար , աշ-  
խատեցաւ խանութիւն մէջ , քարոզեց

Ճանր Ճանր նեղութիւններ քաշելով քեզի համար . Համբերեց նախատանաց , թուքի , բանտի ու ծեծի . և իր սուրբ արիւնը թափեց ու մեռաւ . քեզի համար : Ընէ որ աս քաշածները քիչ կ'երևնան քեզի , զիտցիր որ անսնցմէ աւելի առ բանս ալ ըրաւ , որ զինքը բոլոր քեզի թողուց , իր մարմինը կերակուր ընելով , ու սուրբ արիւնը խմելիք : Այս մըսան թէ ինչ այլ աւելի բան կըրնար ընել զքեզ շարժելու համար , որ սիրես զինքը : Այէկ պղտիկ անասուն մը թէ որ առջիդ խաղայ ու ցաթ կըտէ , կամ տղայ մը որ քեզ անուշ նայի ինտացընէ , անոր սիրովը կը խենդենաս ու սրտիդ մէջը կ'ուզես զնել . Հաստա չիսուս որ այս չափ մէծ սիրով սիրեր է ու կը սիրէ զքեզ , ինչպէս ամեննեին հոգ չունիս զինքը սիրելու :

Գ . Դրեր ես միտքդ թէ դուն կը սիրես զչիսուս , ինչու որ շատ հեղթերնով կը զբոցես իլեն , թէ չչիսուս կը սիրեմ զքեզ , : Այսկայն

ալտք է հաւատքով յուսովու գործքով սիրել , չէ թէ բերնով ըսել ու սրտանց ատել : Ուէ և մեղաւոր ըլլաս , պէտքը չէ որ չիսուսը սիրելն ետ կենաս . զիտցիր որ չիսուսին սէրը զքեզ սուրբ կ'ընէ : Կաքը քու ետեւէդ կը վազէ՝ զքեզ վաստրիելու համար . կը բանայ իր սիրտը քեզի ցըցընելու համար իր աստուածային սէրը՝ որ ունի քու վըրադ . զանազան չնորհքներով կը շարժէ , սիրտդ որ սիրես զինքը : Պարէ սիրտ պիտօր ունենաս որ չիշարժիս զինքը սիրելու :

Պարուշ : Այսնաւոր չերմեռանդութեամբ ալզօթք ըրէ չիսուսին ու սուրբ Աստուածանայ գթած սրտերուն , որ քու սիրտդ վառեն աստուածային սիրով , ու ըսէ բոլորով սրտիւ . “ Այէ անսւն չիսուս , սիրով քո ճմբեամ սիրտ իմ քարեզէն . վասն զթութեանդ վասն ոզրմնութեանդ վերստին կեցն ” :

ԱՂՅԹԻՔ

Ո՛վ սէր և զթութիւն անբաւ  
տէր իմ՝ Հիսուս Քրիստոս, քանի  
որ կը մտմիտամ ինծի ըրած բարիք-  
ներդ, կ'ուրախանամ ու կը ցնծամ  
հոգւով, տեսնալով թէ որչափ սի-  
րեր ես զիս։ Ընորհակալ եմ Վա-  
տուած իմ, գոհանամ ու կը փառա-  
ւորեմ քու մեծութիւնդ, քու կին  
մարդասիրութիւնդու բարութիւնդ  
որ ցըսուցեր ես ինծի. իսկ ես չու-  
նենալով մէկ արժանաւոր բան մը  
քեզի ընծայելու, կ'առաջադրեմ  
բոլոր սրտով սիրել զքեզ, Տէր զօ-  
րութիւն իմ, Տէր օգնական իմ, ա-  
պաւէն իմ և փրկիչ իմ։ Դրւն որ  
քու բարութեանդ համար արժանի  
ես ամենայն սիրոյ, քու մեծու-  
թեամբ արժանի ես ամենայն փա-  
ռաց, կը ցաւիմ որ իմ կուրութքս  
ինչուան հիմա չեմ ճանցած, չեմ  
մեծարած, ու չեմ սիրած զքեզ Վա-  
տուած իմ Հիսուս։ Կ'աղաւէմ իսո-

նարհութեամբ՝ մի նայիր իմ անար-  
ժանութեանս, մի սրդողիր իմ ա-  
պերախտութեանս, մի ձգեր զիս  
քու անուշ երեսէդ, այլ տուր ինծի  
չնորհքդ, որ կարենամ ասկից ետ-  
քը բոլոր կեանքս քու ծառայու-  
թեանդ մէջը անցընել, քեզի հա-  
մար ապրիլ, քեզի համար մեռնիլ,  
ու քու սիրովդ տուզորուիլ, ինչուան  
համնիմ քովդ արքայութեան մէջ։

---

## Խ Բ Ա. Տ

**Ա**մուռան մոտքականները քմբնալեն էութը, յուսնիսի առջե օրը՝ (որ նոտի բուռած է սուրբ Վարդապահնաց), չամ հօսիկ ինքանին որ էը հանդիպի ան օրեւը, ողբաս է մասնաւոր զերմուռանդրութիւնն ընել. որ առաջ աղջէ պատրաստութիւնն ընելով խոսութանանք ըլլալ ու սրբութիւն առնել:

## Ա. Պ. Օ Թ. Ք

Խոստովանաերեն ասաչ:

**Տ**էր իմ Հիսուս Քրիստոս, գուն որ իմ փրկութեանս համար եկար աշխարք, ու ծնար ամենասուրբ կուսէն. խալոսեցիր զիս սատանայինձեռքին. մաքրեցիր իմ հոգիս քու սուրբ արիւնովդ: Խս ապերախտս մառնալով քու կին բարերարութիւնդ՝ իմ

մեղքերովս նորէն մատնուեցայ սատանային ձեռքը, ու սեցուցի իմ հոգիս: Գիտեմ որ մեղանչեր եմ, ու շատ մեղք ալ ունիմ: բայց չեմ ճանչնար մեղացս ծանրութիւնը ցարութիւնը ու համբանքը. ուստի կ'ազաշեմ զքեզ միջնորդութեամբ ամենօր հնեալ մօրդ լուսաւորէ իմ խաւարած միտքս, կակղցուր իմ քարացեալ սիրաս, որ ճանչնամ ըրած մեղքերս, ու զզուելով անոնցմէ ճշմարիտ զղումնվ խոստովանիմ քու փոխանորդիդ. ու հաշտուելով քեզի հետ գանամ թողաւթիւն ամեն մեղքերուս. “ Ա զս տուր Ծէր աշաց իմոց, զի մի երբէք ննջեցից ’ի մահ ”:

Խոստովանաերեն Խորը:

**Ե**նորհակալ եմ փրկիչ իմ Հիսուս գոհանամ ու կը փառաւորեմ անբաւ ողորմութիւնդ, որով թողութիւն տուիր իմ ծանր մեղքերուս. երեցուցիր քու սրբութիւնդ՝

մաքրելով իմ աղջոտ հոգիս : Աը  
փափաքիմ Վատուած իմ Հիւտուս՝  
ասկից ետքը մնալ ու մեռնիլ քու  
չորհքիդ մէջը + ուստի կ'աղախեմ  
որ բարեխօսութեամբ ամէնօր  
հնեալ մօրդ տաս ինձի չորհք յա-  
րատևութեան, որպէս զի բարի ա-  
ռաջադրութեանս վրայ հաստատ մը-  
նալալ, ինչուան 'ի մահ ջիբաժնուիմ  
քեզմէ : “ յարձր առնեմ զբեզ  
Տէր, զի ընկալար զիս, և ոչ ուրախ  
արարեր զթնամիսն իմ յիս : Տէր  
Վատուած իմ կարգացի առ քեզ և  
բժկեցեր զիս . Տէր հաներ 'ի գծո-  
խոց զանձն իմ. փրկեցեր զիս յայն-  
ցանէ, որ իջանեն 'ի գուրք : Առաւ  
ինձ Տէր և ողորմեցաւ . և Տէր եղե  
ինձ օգնական : Դարձոց զառւդ իմ  
յուրախութիւն, զերծ յինէն ըզ-  
քուրծ . և ինձ զգեցոց զարախու-  
թիւն : Որպէս սաղմօս սասացեն  
քեզ փառք իմ . և այլ մի ևս զղջա-  
ցաց . Տէր Վատուած իմ յաւիտեան  
խոստովան եղեց քեզ” :

Հաղորդուելին ասալ :

Ո՛վ Հիւտուս փրկիչ իմ, կեանք  
իմ, յոյ իմ, ապաւէն իմ և միի-  
թարութիւն սրտիս . կը փափաքիմ  
ընդունիլ զբեզ իմ հոգիս, բայց  
անարժանութիւնս կը վախցյնէ զիս  
քեզի մօտենալու : “ Դու որ սրբու-  
թիւն սրբոց ես՝ մաքրել իմ սիրոս,  
որ ըլլայ քեզի արժանաւոր ընակա-  
րան . լուսաւորէ իմ միտքս՝ որ ձանչ-  
նայ քու մեծութիւնդ . վառէ իմ  
հոգիս աստուածային չորհքով, որ  
տողորուի քու սիրովլգ : Ո՛վ տիրա-  
մայր սուրբ կոյս Վատուածածին,  
ինձի համար բարեխօս եղիր առ  
հոգին սուրբ . որ ինչպէս պատրաս-  
տեց զբեզ մարմնարան ըլլալու Որ-  
դոյն Վատուածոյ, անանիկ ալ պատ-  
րաստէ իմ հոգիս արժանաւոր ընա-  
կարան ըլլալու միաձնի որդեւոյ քու :  
“ Տէր անուն Հիւտուս՝ սիրով քու  
ձիւնամ սիրտ իմ քարեղին : Տէնալի  
տեսլեամք՝ տուր ինձ յագենսալ Տէր

Հիսուս Քրիստոս : Յօլ արեան քո  
Տէր ցողեա'ի հոգիս՝ յնծասցէ անձն  
իմ,, :

Հաղորդուելեն ետքը :

Փառք քեզ Տէր, փառք քեզ Առ  
տուած իմ . գոհանամ' ու չնորհա-  
կալ եմ անձառնելի բարութեանդ,  
որ զիս անարժանա արժանի ըրիք  
հաղորդակից ըլլալ ամենասուրբ  
մարմնոյդ : Վաղաշեմ զեք պահէ՛  
զիս քու չնորհացդ մէջը, որպէս զի  
անդադար յիշելով ինձի ըրած բա-  
րերարութիւնդ, չիթաճնուիմ քեզ-  
մէ : Օրչնէ զիս աստուածային օր-  
հնութեամբդ, մի թողուր որ աս-  
կից ետքը սատանան մօտենայ իմ  
քովս : Կատարե՛ քու անսուախոսա-  
մանքդ որ ըրիք մեզի, թէ “Որ ու-  
տէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն  
իմ,” նա յիս բնակեցի, և ես ’ի  
նմա,, : Մի հեռանար ինձմէ Առ-  
տուած իմ Հիսուս . և մի թողուր  
զիս կարօտ աստուածային քաղցրու-

թեանդ . դուն ես աղքիւր ողորմու-  
թեան, գթութեան, մարդասիրու-  
թեան, միմիթ արութեան և ամե-  
նայն բարեաց, և քեզ վայելէ փառք  
պատիւ յաւիտեանս ամէն : “ (Օր-  
շնէցից զՏէր յամենայն ժամ, յա-  
մենայն ժամ օրշնութիւն նորա ’ի  
բերան իմ : Ի Տէր ապարձեսցի անձն  
իմ . լուիցեն հեզք և ուրախ եղե-  
ցին : Մեծ արարէք զՏէր ինեւ, և  
բարձր արասցուք զանուն նորա ’ի  
միասին : Խնզրեցի ’ի Տեառնէ և  
լուաւ ինձ . յամենայն նեղութենէ  
իմմէ փրկեաց զիս : Մատիք առ Տէր  
և առէք զլսու . և երեւք ձեր մի ա-  
մացէայեն : Այս աղքատ կարդաց  
առ Տէր . և Տէր լուաւ սմա , յա-  
մենայն նեղութենէ սորա փրկեաց  
զսա : Հանակ հրեշտակաց Տեառն  
շուրջ է զերկիւզածովք իւրովք , և  
պահէ զնոսա : Դաշակեցէք և տե-  
սէք, զի քաղցր է Տէր . երանեալ  
է այր՝ որ յուսայ ’ի նա,, :

Վերի աղօքքներեն ևորք, առ ևուի դրասած մինչ նոյիրմուքը այ բրէ առ սորդ  
Սառուածածինք :

Ա. Ընծայէլ իրեն ան ջերմեռան,  
գուշինները, որ բոզոր մայիս ամ  
սուն մէջը ըրեր ես իր փառացը հա  
մար. աղաշելով զինքը՝ որ մայրա  
կան սիրով ընդունի քու ընծագ. ու  
քեզի աշ չնորհք տայ կեանքդ աղէկ  
ու սուրբ անցընելու :

Բ. Փատուէ ու մեծարէ իր մայ  
րական գթած սիրտը, որ Կատուած  
ասանկ մեծ փառաց հասցընելով  
զարդարեր է զինքը ամէն չնորհքով,  
ու ըրեր է թագուհի երկնից և զան  
ձապետ չնորհաց մեզի բաշխելու  
համար :

Գ. Ծղաչէլ արքայութեան սուր  
բերն ալ, մանաւանդ զանոնք որ աշ  
խըրիս մէջը մամնաւոր ջերմեռանդ  
են եղեր սուրբ Կատուածածնայ, որ  
դէս զի բարեխօս ըլլան քեզի հա  
մար, ու թողութիւն առնուն ան

պակսութիւններուն որ ըրեր ես աս  
ամսուան ջերմեռանդութեան մէջը:

Դ. Ծղաչէ սուրբ Կատուածածին  
նը, որ ընդունի քու սրտիդ ընծան,  
միջնորդ ըլլալով քեզի համար, որ  
որ մէկ օր մը արքայութեան մէջն  
ալ կարենաս պատուել ու փառա  
ւորել զինքը, ինչոքէս որ աս աշխըր  
քիս մէջը կը փափաքիս ընելու :

Ե. Վաջնորդ սուրբ Կատուածնութութիւնս ըրած  
օրդ նայէ որ ամէն աղօթքդ սիրով  
ու սրտանց կատարես : Վակից ի զատ  
ու խոս երթառ մէկ ժամ մը կամ  
մէկ հրաշագործ Կատուածածնայ  
պատկերի մը : Ու ջանանոյն օրը ու  
դորմանթիւն մը տալ աղքատի սուրբ  
Կատուածածնայ սիրոյն համար :  
Վերջապէս՝ նայէ օր ան օրը առուը  
տանցինցուան իրիկուն սրբութեամին  
ու առանց մեղաց անցընես :

ԱՂՋԹԻՔ

ՈՎ ամենասրբուհի կոյս ԱՊԱ  
քիամ մայր Աստուծոյ, ևս մեղա-  
ւորս ու անարժան ծառայս իյնելով  
քու սուրբ սոթք կ'ընծայեմ քեզի  
իմ ողբարելի սիրտս . ու կը փափա-  
քիմ որ ասկից ետքը ըլլայ մինակ  
քուկինդ, ու քու սիրելի զաւկիդ :  
ՈՎ ամենագթած մայր, կ'աղաչեմ  
որ արքայութեան սուրբերուն բա-  
րեխօսութեամբը ընդունիս իմ աղ-  
քատ սրտիս նուիրմաննքը, որ ասօր  
կ'ընեմ քեզի: Տնւր ինձի մայրական  
օրհնութիւնդ, որ կարենամ ապրիլ  
մինակ Աստուծոյ ծառայութեանը  
համար . ու քուկին ջերմեռանդու-  
թեամբդ անյընելով իմ կեանքս,  
արժանի ըլլամ արքայութեան մէջն  
ալ սուրբերաւն հետ զքեզ գովել  
ու փառաւորել յաւիտեանս յաւի-  
տենից :

ՈՒՐԻՀ ԱՂՋԹԻՔ:

Ամենասուրբ կոյս մայր Աստու-  
ծոյ՝ գանձապետ շնորհաց, ապաս-  
տան մեղաւորաց . ևս անարժանս  
Ճշմարիտ ու հաստատուն հաւատ-  
քով, կը զիմեմ մայրական սիրոյդ,  
ու կ'աղաչեմ որ տաս ինձի զօրաւոր  
շնորհք մը, որպէս զի կարենամ միշտ  
Աստուծոյ ու քու կամքդ կատարել:  
Կ'ընծայեմ քեզի իմ սիրտս, խնդրե-  
լով քեզմէ իմ հոգւօյս փրկութիւ-  
նը . ու կը յուսամ որ մայրական  
զթութիւնդ զիս չիթ ողուր ձեռքէ,  
ինցուան դամ համնիմ արքայու-  
թիւն, ու հնա փառաւորեմ զքեզ  
յաւիտեան :

---

որ իմ առջի պատճառս ես, ու ետքի վախճանս:

**Աերգործութիւն Հաւատոյ, Յու-**  
**սոյ, Սիրոյ և Զդշման:**

Ո՛Վ Ռոտուած իմ, կը փափաքիս  
քեզի ընծայել իմ կեանքս աս ձըշ-  
մարիս աստուածային հաւատքիս  
մէջը, որով ուղեր ես սրբել ու զար-  
դարել իմ հոգիս մկրտութեամբ  
սուրբ աւազանին: Հաստատուն սրբ-  
ուով կը հաւատամ ու կ'ընդունիմ  
զայն ամենայն ձշմարտութիւնը, որ  
դուն անսահման իմաստութիւնդ ու  
անսխալ ձշմարտութիւնդ յայտներ  
ես սուրբ եկեղեցնայ:

Կը խոստանամ իմ ամէն յօյսս  
ու ապաւինութիւնս դնել քու վրադ  
ինչուան ետքի նեղութեան մեռնե-  
լու ատենս, որովհետեւ դու ամենա  
կարող ու գթած հայրս ըլլալով՝ զի-  
սուսի «Քիմատոսի չարչարանքովը  
խոստացեր ես տալ ինծի հարկաւոր  
չնորհքներդ, որպէս զի կարենամ  
բարի գործքերով ժառանգել զքեզ:

Ո՛Վ Ռոտուած իմ անհուն բա-  
րութիւն, կը փափաքիսմբ քովոր կեան-  
քըս քու սիրուդ համար անցընել,  
ու կ'ուզեմ որ իմ մահս աւլըլայ  
քեզի պատարագ սիրոյ ուստի կը  
խոստանամ սիրել զքեզ ամէն բա-  
նէն 'ի վեր, որ քան զամէնը բարի  
ու սիրելի ես. և քու սիրուդ հա-  
մար իմ անձիս պէս կը սիրեմ ըն-  
կերներս ալ, որ քու պատկերքդ ըլ-  
լալով՝ արժանի են սիրոյ:

Ո՛Վ Ռոտուած իմ, զիտեմ որ  
սրդողուցեր եմ զքեզ իմ մեղքե-  
րովմ, բայց կ'աղաւեմ որ նայիս իմ  
զղջացեալ ու ցաւագնեալ սրտիս:  
Կը խոստանամ ապաշխարել 'ի բո-  
լոր սրտէ. կը փափաքիսմանմիթձար  
ցաւով տողորուի՝ զքեզ ամենաբա-  
րիդ սրդողոցնելուս համար. կ'առա-  
ջազբեմ ասկից ետքը յանձն առ-  
նու իմ մահս՝ քան թէ մահացու  
մեղքով մը սրդողոցնել զքեզ:

## ՑԱՆԿ

|                                    |    |
|------------------------------------|----|
| Յորդորանք սուրբ Աստուածածնայ ջեր.  | 10 |
| մեռանդ ըլպարու համար . . . . .     | 3  |
| Գութ ու խնակ սուրբ Աստուածածնայ    | 10 |
| Կարգ ու կանոն ամսուան ջերմեռանդու  |    |
| թեան սուրբ Աստուածածնայ . . . . .  | 27 |
| Ծաղկեր հոգեոր, տասուերկու բարի     |    |
| գործեր . . . . .                   | 31 |
| Ծաղկեր հոգեոր, երսուներմեկ բարի    |    |
| գործեր . . . . .                   | 34 |
| Ա ՕՐ. թէ ինչո՞ւ համար աս ամսուան   |    |
| ջերմեռանդութիւնը պէտք է ընել . . . | 39 |
| Բ ՕՐ. Հոգոյ փրկութեան վրայ . . . . | 43 |
| Գ ՕՐ. Մարգուս հոգույն ազնուու      |    |
| թեանը վրայ . . . . .               | 47 |
| Դ ՕՐ. Մարմայ առողջութեան վրայ .    | 51 |
| Ե ՕՐ. Ժամանակի վրայ . . . . .      | 55 |
| Զ ՕՐ. Մահացու մեջայ վրայ . . . .   | 59 |
| Է ՕՐ. Մեղայ պատուհաներուն վրայ .   | 64 |
| Ը ՕՐ. Մահուան վրայ . . . . .       | 69 |
| Թ ՕՐ. Դատապատճին վրայ . . . .      | 73 |
| Ժ ՕՐ. Դժոխիքի վրայ . . . . .       | 77 |
| ԺԱ ՕՐ. Դատապարտելց համբանքին       |    |
| վրայ . . . . .                     | 82 |

|  |     |  |  |  |  |  |     |
|--|-----|--|--|--|--|--|-----|
| Ժ. ՕՐ. • Գրիստոնելն չարութեանը         |     |  |  |  |  |  | 183 |
| վայ . . . . .                          | 87  |  |  |  |  |  |     |
| Ժ. ՕՐ. • Գայթակղութեան մեղքին          |     |  |  |  |  |  | 184 |
| վայ . . . . .                          | 92  |  |  |  |  |  |     |
| Ժ. ՕՐ. • Մարդկային նկատման վայ         | 97  |  |  |  |  |  |     |
| Ժ. ՕՐ. • Աբայութեան վայ . . . . .      | 102 |  |  |  |  |  | 188 |
| Ժ. ՕՐ. • Աբբայութեան ճամբուն վայ       | 107 |  |  |  |  |  | 189 |
| Ժ. ՕՐ. • Սուրբ Աստվածածնայ ջեր-        |     |  |  |  |  |  |     |
| մեանդութեան վայ . . . . .              | 111 |  |  |  |  |  |     |
| Ժ. ՕՐ. • Աստուծոյ ներկայութեան         |     |  |  |  |  |  |     |
| վայ . . . . .                          | 116 |  |  |  |  |  |     |
| Ժ. ՕՐ. • Աստուծոյ ու պատանային ծա-     |     |  |  |  |  |  |     |
| ռայութեանը վայ . . . . .               | 121 |  |  |  |  |  |     |
| Ի ՕՐ. • Ազագանութիւնը ուշացընե-        |     |  |  |  |  |  |     |
| լուն վայ . . . . .                     | 125 |  |  |  |  |  |     |
| Ի ՕՐ. • Խոստովանութեան վայ . . . . .   | 130 |  |  |  |  |  |     |
| Ի ՕՐ. • Սուրբ հաղորդութեան վայ         | 134 |  |  |  |  |  |     |
| Ի ՕՐ. • Աստուծոյ ծածուկ շնորհեն-       |     |  |  |  |  |  |     |
| բուն վայ . . . . .                     | 139 |  |  |  |  |  |     |
| Ի ՕՐ. • Ներկից մեղաց վայ . . . . .     | 144 |  |  |  |  |  |     |
| Ի ՕՐ. • Քաւաբանին վայ . . . . .        | 148 |  |  |  |  |  |     |
| Ի ՕՐ. • Յիսուսին տղայութեանը վայ       | 153 |  |  |  |  |  |     |
| Ի ՕՐ. • Յիսուսին մեղի տուած օրինակ     |     |  |  |  |  |  |     |
| ներուն վայ . . . . .                   | 157 |  |  |  |  |  |     |
| Ի ՕՐ. • Յիսուսին անապատի մէջ ար-       |     |  |  |  |  |  |     |
| ւած օրինակներուն վայ . . . . .         | 161 |  |  |  |  |  |     |
| Ի ՕՐ. • Յիսուսին խաչելութեան վայ       | 165 |  |  |  |  |  |     |
| Լ. ՕՐ. • Սուրբ Աստվածածնայ ցաւոց       |     |  |  |  |  |  |     |
| վայ . . . . .                          | 170 |  |  |  |  |  |     |
| Ա. ՕՐ. • Յիսուսին սիրոյն վայ . . . . . | 175 |  |  |  |  |  |     |
| Կրաս . . . . .                         | 180 |  |  |  |  |  |     |
| Աղօթք խոստովանակին տաաջ . . . . .      | —   |  |  |  |  |  |     |
| Խոստովանակին հոբը . . . . .            | 181 |  |  |  |  |  |     |

ՊԱՇՕՆ

ՓԱՌԱԲԱՆՈՒԹԵԱՆ

ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱՆԱՆԻՆ

# ՊԱՇՏՈՆ

ՍՈՒՐԲ ԿՈՒՍԻՆ

---

Տէր եթէ զշըթունս իմ բանաս,  
բերան իմ երգեսցէ զօրչնութիւնս  
մօր քո :

(Օրչնեալ ես դու 'ի կանայս, և  
օրչնեալ է պտուղ որովայնի քո :

Երգ սրբոյ կուսին :

Մեծացուցէ անձն իմ զՏէր, և  
յնծացաւ հոգի իմ յլստուած փըլք-  
կիւ իմ : Օ ի հայեցաւ 'ի խոնար-  
հութիւն աղախնոյ իւրոյ, զի ահա  
յայսմհետէ երանեսցեն ինձ ամե-  
նայն աղզք : Օ ի արար ինձ մեծա-  
մեծս հզօրն, և սուրբ է անուն նո-  
րա : Խւ ողորմութիւն նորա աղգաց  
յաղզս երկիւղածաց իւրոյ : Արար

զօրութիւն բաղկաւ իւրավ. ցրուեաց  
զամբարտաւանս մտօք սրտից իւ-  
րեանց, Քակեաց զՀզօրս յաթոռց,  
և բարձրացյց զխոնարհս : Օքաղ-  
յեալս լոյց բարութեամբ, և զմեծա-  
տունս արձակեաց ունայնս : Պաշտ-  
պանեաց Խալայելի ծառայի իւրում՝  
յիշել զողորմութիւնս : Որպէս խօ-  
սեցաւ առ հարս մեր՝ Աբրահամու-  
և զաւակի նորա յաւիտեան :

## ՊԱՇՈՆ

Ա. Ռ. Ա. Խ Օ Տ Ե Ա. Ն

ԱՂՅԹԻ

Ամէնօրհնեալ սուրբ կյոս Առա-  
րիամ, ցանկալիդ հըեշտակաց և  
մարդկան, գուն որ քուկին անուշ-  
բերնիդ օրհնութեամբը փառաւո-  
րեցիր զԱստուծոյմեծութիւնը, բաց  
իմ բերանս ալ որ օրհնեմ, զովեմ  
ու փառաւորեմ քու մայրութիւնդ :  
Լուսաւորէ իմ միտքս, որ ձանչ-  
նամ քու դթութիւնդ ու ինամբդ  
իմ վրաս : Ա առէ իմ սիրտս քու  
ջերմեռանդութեան սիրովդ : Տնիր  
ինծի չնորհը հաւատարիմ մնալու  
ծառայութեանդ մէջ : Աաղաչէմ  
մայր ողորմութեան, մի նայիր իմ  
պակսութիւններուս, այլ քու դթու-  
թեամբդ մաքրէ, սրբէ իմ հոգիս

ամէն աղաստութէնէ, որպէս զի անարատ վարդով ըլլամ' արժանաւոր որդեգիր, մանաւանդ թէ մշտնջենաւոր ծառայ քուկին մեծութէդ։ Վ'աղացէմ տիրուհի, դուն պահէվ զիս ասօր չնորհքիդ մէջը, որ ըըլլայ թէ Աստուծոյ պատուիրանքները մոռնալով սրբողցընեմ իմ ստեղծողս + այլ բարի գործքերով փառաւորեմ զինքը, որ տուեր է ինձի միտք՝ զինքը ճանճնալու, կամք՝ զինքը սիրելու, յիշողութիւն՝ չմոռնալու զինքը, զգայութիւն՝ իրեն ծառայելու, ու բոլոր կեանքս իրեննուիրելու։ Վ'աղացէմ մայր Աստուծոյ՝ օկնական եղիր իմ տկարութեանս, պաշտպան ու ապաւէն սատանային փորձանքներէն խալլսելու, աշխըրքիս նեղութիւններուն համբերելու, մեղքէն զգուշանալու + որ ամէն գործքս Աստուծոյ փառացը համար ընելով, արժանի ըլլամ' քու օրհնութեամբդ ու բարեխսութեամբ աջողութիւն գտնալու իմ ամէն հոգեզր ու մարմնաւոր գործերուս

մէջ, և կեանքս բարի անցընելով օրհնեմ անդադար քու մնյրական խնակըդ, որ կը ցըցընես ինձի պէս ողըրմելի մեղաւորին։

Երգ։

Փառաւորեալ և օրհնեալ միշտ սուրբ կոյս Աստուածածին Արքիամ մայր Վրիստոսի՝ մատօ զաղաւանս մեր որդւոյ քո և Աստուծոյ մերոյ։

Մադրանք։

Ո'ղջ լեր թագուհի՝ մայր ողըրմութեան, կեանք, քաղցրութիւն, և յօյս մեր, ողջ լեր + առ քեզ աղաղակեմբ արսորեալ որդեկըս լայի, առ քեզ հառաչեմբ հեծեծելով և ողբալով յայսմ հովտի արտասուաց + արէ ուրեմն ովլ փառատքան մեր՝ գարձն առ մեզ զգթածահյեաց աշ քո + և զօրհնեալ պատզ սրավայնի քո զի խուս յետ

այսը աքսորական վայրիս ցոյց մեզ .  
ով գթած , ով բարեգութ , ով  
քաղցր կցս Արփիամ :

Բարեխօսեամ վասն մեր սուրբ  
Աստուածածին , զի խոստմանցն  
Վրիստոսի արժանաւորք եղիցուք :

Բարերանորիսե առ սուրբ կոյսե :

Տէր ողջոմեաց .

Վրիստոս ողջոմեաց .

Տէր ողջոմեաց .

Վրիստոս լուր մեզ .

Վրիստոս յար լուր մեզ :

Հայր երկնաւոր Աստուած , ողոր-  
մեաց մեզ :

Որդի փրկեց աշխարհի Աստուած ,  
ողջոմեաց :

Դոդիդ սուրբ Աստուած , ողջոմեաց :  
Սուրբ երրորդութիւն մի Աստուած ,  
ողջոմեաց :

Արքունիկ Արփիամ , աղօթ եամ վասն  
մեր :

Սուրբ Աստուածածին .      աղօթ :  
Սուրբ կոյս կուսանաց .      աղօթ :

Այր Վրիստոսի .      աղօթ :

Այր աստուածային չնորհաց . աղ :

Այր ամենամաքուր .      աղօթ :

Այր ամենողջախոհ .      աղօթ :

Այր անարատ .      աղօթ :

Այր ամբիծ .      աղօթ :

Այր սիրելի .      աղօթ :

Այր սքանչելի .      աղօթ :

Այր ստեղծողին .      աղօթ :

Այր կեցուցին .      աղօթ :

Կոյս ամենախօսիւմ .      աղօթ :

Կոյս գելյարգելի .      աղօթ :

Կոյս քարոզելի .      աղօթ :

Կոյս կարող .      աղօթ :

Կոյս բարեգութ .      աղօթ :

Կոյս հաւատարիմ .      աղօթ :

Հայելի արդարութեան .      աղօթ :

Լթոռ իմաստութեան .      աղօթ :

Պատճառ մերսյ խնդութեան .      աղ :

Վնօթ հոգեորական .      աղօթ :

Վնօթ պատուելի .      աղօթ :

Վնօթ յարգական ջերմե-

ռանդութեան .      աղօթ :

Արդ խորհրդական .      աղօթ :

Աշտարակ գաւթեան .      աղօթ :

|   |        |
|---|--------|
| Ա շոարակի փղոսկրեայ .   | աղօթ : |
| Պ ալատ ոսկեղէն .  | աղօթ : |
| Տ ապանակ ու խափ .   | աղօթ : |
| Դ րուռն երկնից .  | աղօթ : |
| Ռ ստղ առաւաօտեան .  | աղօթ : |
| Ռ ոռջօւ թիւն հիւանդաց .   | աղօթ : |
| Մ պաստան մեղաւորաց .  | աղօթ : |
| Մ իսիթ արիչ վշտացելոց .   | աղօթ : |
| ( Օքնական քրիստոնէից .  | աղօթ : |
| Ծ ճագուհի հրեշտակաց .   | աղօթ : |
| Ծ ճագուհի նահապետաց .   | աղօթ : |
| Ծ ճագուհի մարդարէից .   | աղօթ : |
| Ծ ճագուհի առաքելոց .  | աղօթ : |
| Ծ ճագուհի մարտիրոսաց .  | աղօթ : |
| Ծ ճագուհի խաստովանողաց .  | աղ :   |
| Ծ ճագուհի կուսանաց .  | աղօթ : |
| Ծ ճագուհի ամենայն սրբոց .   | աղ :   |
| Պ աշտանիչ օրդեգրաց .  | աղօթ : |
| Պ ատն Ռ ստուծոյ , որ բառնաս զմեզս<br>աշխարհի . անսա մեզ Տէր :     |        |
| Պ ատն Ռ ստուծոյ , որ բառնաս զմեզս<br>աշխարհի . յար լուր մեզ Տէր : |        |
| Պ ատն Ռ ստուծոյ , որ բառնաս զմեզս<br>աշխարհի . սպամեաց մեզ :      |        |

Աստուած անձառելի ողորմութեամբ, որ ուղեցիր մեզի համար մարդ ըլլալ ու որդի մարդոյ ըսուել. դուն որ էրկինքը ունեիր քեզի հայր զլատուած, ծնանելով՝ ի տուրք կուսէն՝ աշխարքիս մէջն ալ ունեցար քեզի մայր զսուրե կցան Վարիամ։ Վաղաշենք զքեզ տուր մեզի չնորհք՝ որ ջերմեանդութեամբ ընենք ամենասուրբ մօցդ պաշտօնը, ու անոր մայրութիւնն ալ սիրով մեծարենք. խնարհութեամբ նուիրենք զմեզ իրեն մեծութեանը. որ զքեզ Հոգւով սրբով յլացաւ, կուտութեամբ ծնաւ, ու իրեւ մայր իրեն հնազանդ որդի ունեցաւ զքեզ՝ ըգտէրդ մեր Հիսուս Քրիստոս, որ կենդանի ես ու կը թագաւորես ընդհօր և ընդ Հոգւոյն սրբոյ յաւետանս, յաւիտենից. ամէն:

Աղօրք՝ առաօտանց, կեսօրի, ու  
իրիկունք լսելու:

Հրեշտակ Տեառն աւետեաց կու-  
սին Արիամու և յղացաւ 'ի հո-  
գացն սրբոյ: Ողջոյն քեզ Արիամ,  
լի չնորհօք, և այն:

Ի հաւասիկ կամաղախին Տեառն,  
եղիցի ինձ ըստ բանի քում: Ողջոյն  
քեզ Արիամ, լի չնորհօք, և այն:

Եւ բանն մարմին եղեւ, և բնա-  
կեաց 'ի մեղ: Ողջոյն քեզ Արիամ.  
և այն:

Օ չնորհս քո՝ աղաւեմք Տէր, հե-  
ղուլ 'ի միտս մեր, զի ողբ հրեշտա-  
կին աւետեք զի՞րիստոսի որդւոյ  
քո զմարդեղութիւնն ծանեաք, չար-  
չարանօք նորին և խաջւն ժամա-  
նեացուք 'ի փառս յարութեան տե-  
րամբ մերով Յիսուսիւ Քրիստո-  
սիւ. ամէն:

Աղօրք եօրք ցաւց սուրբ Աստվածածնայ:

Ո՛վ կոյս ամէնօրհնեալ՝ ցաւա-  
գին դշխոյ և պասկ մարտիրոսաց,  
կ'աղաւեմ խոնարհութեամբ որ քու  
վիրաւորեալ սիրտդ դնես իմ առ-  
ջևս, որպէս զի տեսնալով քուկին  
ցաւերդ՝ ողբամ մեղերուս վրայ,  
որ ցաւերուգ պատճառ են եղեր. ու  
տաս ինձի չնորհք շտկելու իմվարքս:

Ա.

Ո՛վ սրբուհի կոյս, յիշելով քու  
առջի ցաւգ՝ որ քաշեցիր Աիմէնն  
ծերունիին մարդարէական խօսքո-  
վը, երբոր խմացուց քեզի թէ չիե-  
սուս շատ բան պիտոր քաշէ աշխար-  
քիս մէջը, ինչուան քու մայրական  
սիրտդ ալ պիտի վիրաւորուի անոր  
քաշածներէն. կ'աղաւեմ զքեզ տաս  
ինձի չնորհք, որպէս զի լրւաւո-  
րուի միտքս Կատուծյ երախտիք-  
ները աղէկ ձանանալու, ու իրեն ծա-

ույսութեանը մէջ հաւատարիմ  
մնալու : || ղջցն քեզ || արիամ :

Բ

Ո՛վ սրբուհի կոյս , միտքս բերե-  
լով քու երկրորդ ցաւդ՝ որ քաշեցիր  
չերավդէս թագաւորին վախէն ,  
երբոր կ'ուզէր մեռցընել զշիառս  
միածին որդիդ՝ ու առիջ փախար  
յլցիպտոս . կ'աղաւեմ զքեզ դիր  
իմ սիրոս լստուծոյ վախը , որպէս  
զի կարենամ իմ չար կամքս կոտրել  
ու լստուծոյ կամքին հնազանդիլ ,  
պահելով իրեն պատուիրանքները ,  
որ տուեր է իմ փրկութեանս հա-  
մար : || ղջցն քեզ || արիամ լի շնոր-  
հօք . և այն :

Գ

Ո՛վ սրբուհի կոյս , մոմբտալով  
քու երբորդ ցաւդ՝ որ քաշեցիր ի-  
րեք որ կորմնցնելով զշիառս սի-  
րելի զաւակդ , ու ետքը լըրտսա-

ղէմ տաճարին մէջը գտնալով . կ'ա-  
զաւեմ զքեզ արթենցնուր իմ թըմ  
ըած հոգիս , որ իմ փրկիչս ազես  
չիշեռացընեմ , այլ սիրոս ու միտքս  
անդադար զիստուսին հետ ըլլայ .  
տեմնալով իր ներկայութիւնը , ու  
պատկանելով իր աստուածային մե-  
ծութենէն , հետեւիմ ամենասուրբ  
վարուցը ու ինձի տուած օրինակնե-  
րուն : || ղջցն քեզ || արիամ : և այն :

Դ

Ո՛վ սրբուհի կոյս , յիշելով քու  
չորբորդ ցաւդ՝ որ քաշեցիր տեսնա-  
լով զիստուս միածին որդիդ , երբոր  
խաը կոնակը Վազգովմա կ'ելլար .  
կ'աղաւեմ զքեզ տուր ինձի շնորհք ,  
որ ես ալ լսելով ու մամբտալով զի-  
ստուսին չարչարանքները՝ վառուիմ  
ու տուորուիմ իրեն սիրովը . գոցեմ  
ականջս աշխարքին դէշ ու վնասա-  
կար բաներուն , ու բանամ սիրոս  
զիստուսին ձայնը ու հոգեւոր խրատ-  
ները լսելու իմ փրկութեանս հա-  
մար : || ղջցն քեզ || արիամ : և այն :

Ե

Ո՛Վ սրբուհի կոյս, յիշելով քու  
չինգերորդ ցաւդ որ քաշեցիր տես-  
նալով զ՞իսուս խաչն վրայ ըևե-  
ռած, կ'օղբամ իմ մեղքիս վրայ որ  
պատճառ եղեր է Հիսուսին խաչե-  
լութեամբ . ու կ'աղաւեմ զքեզ զօ-  
րացնոր զիս ալ որ նեղութիւն քա-  
շելով խաչակից ըլլամ Հիսուսին .  
ու ինչուան ՚ի մահս խաչն քովին  
ժղատուելով՝ իրեն ձեռքը աւան-  
դեմ իմ հոգիս : Ինունայ ինծի  
չարչարանքը ու Հիսուսին համար  
տանջուիլը, ինչպէս որ իրեն անուշ-  
երեցաւ լեզին՝ իմ փրկութեանս  
համար : Ողջոյն քեզ Արիամ, լի  
չնորհօք, Տէր ընդ քեզ, և այլն :

Զ

Ո՛Վ սրբուհի կոյս, մտմըտալով  
քուին վեցերորդ ցաւդ որ քաշե-  
ցիր տեսնալով զ՞իսուս խաչն վրա

առած, երբոր իրեն վիրաւորեալ  
մարմինը ինսկով կը պատէին գերեզ-  
ման զնելու համար, կ'աղաւեմ ըղ-  
քեզ տուր ինծի մեռնիլ դէս ՚ի աշ-  
խըրքիս ունայնութիւնը . ու զգայ-  
ութիւններս անանկ բանեցնել, որ  
ըլլան Հիսուսին իրեւ անուշահոտ  
խունկ մը իրեն հետ թաղուելու, ու  
զմայլելու աստուածային քաղցր սի-  
րով : Ողջոյն քեզ Արիամ . և  
այլն :

Է

Ո՛Վ սրբուհի կոյս մայր ցաւա-  
գին, մտածելով քուկին ետքի օսս-  
տիկ ցաւդ որ քաշեցիր՝ տեսնալով  
Հիսուս զերեզմանը զրուած ու  
թաղուած . ծածկելով զինքը անար-  
ժան ու ապերախտ աչքերէն, որ  
էին ուզէր ձանշնալ իր մեծութիւ-  
նը ու ըրած բարերարութիւնները .  
կ'աղաւեմ զքեզ մայր ողորմութեն,  
մի զներ զիս անոնց կարգին մէջը,  
այլ տուր ինծի չնորհք, որ նուիրե

Աղլ Աստուծոյ իմ հպակս ու մարմինս, թաղուիմ ու ծածկուիմ աշխըրքէս, օրպէս զի ետքը կարենամ Հիսուսին փառաւոր յարութեանն ալ արժանի ըլլալ: Ողջանքեղ Ապրիամ: և այլն:

ԱՂՅԹԻՔ

Ո՞վ քաղցրագութ կօյս մայր Էպտուծոյ, ես մեղաւորս՝ որ անարժան եմ քու առջևեդ երենալու, զիսնալով մայրական սէրդ ու գթութիւնդ՝ կը փափաքիմ ծառայել քեզի: ուստի կ'աղաւէմ որ ըլլաս ինձի ասօր թագուհի, պաշտպան ու մայր: Վ'առաջաղբեմ հաստատուն սրտով, որ ասկից ետքը չէ թէ միայն ջերմեռանդ ըլլամքեզի, այլ և ջանք ընեմ որ ուրիշներն ալ քեզի ծառայեն, քեզի որդեգիր ըլլան, ու քու սիրովդ փառուին: Վ'աղաւէմ մայր ամենագթած, Հիսուսինսուրբ սիրոյն համար ընդունէլ զիս ալ քու ջերմեռանդ ծառաներուդ համբան:

քին մէջը: Տուր ինձի չնորհք, որ իմ ամէն գործքս, խօսքս ու խորհութան ըլլան հաճոյ քու աքքիդ, ու օգտակար իմ հոգւսոյ: Մի թողուր զիս իմ ձեռքս, այլ քուկին մայրական սիրովդ պահէ, պահպանէ, խորնամէ ու առաջնորդէ ինձի բարի գործքերու: և մի մասնար զիս մեյր Աստուծոյ իմ մահուանս ատենը: Վ'աղաւէմ զիս աստուածորդիդ որ ողորմի ինձի ու քաղցր ընէ իմ դատաստանս, արդարութեամբ չիդատէ գործքերս: այլ զթութեամբ քաւէ իմ ամէն մեղքս, ու արժանի ընէ զիս իր աստուածային տեսութեանը:

Քարոզ սուրբ Աստուածածին:

Մայր սուրբ պքանչելի լուսոյն, որ զԱստուածն ամենայն յաւիտեանց յորովայնի քում կրեցեր, և ցնձութիւն աշխարհի ծնաբը զբանն Աստուած, աղաւէմք: Վ'այր սուրբ բարեխօսեալ:

Աղաչեան վասն մեր զառ՝ ի քէն  
զմարմնացեալն Աստուած, որ խո-  
նարհեցաւ՝ ի հայրական ծոյց, էառ  
մարմին ըստ մարդկային բնութեան,  
առնել խաղաղութիւն յերկինս և  
յերկրի. աղաչեմք: Ո՞յց սուրբ  
բարեխօսեա:

Աղաչեան վասն մեր զառ՝ ի քէն  
զմարմնացեալն Աստուած, ներել  
մեղ անտես առնել զյանցանս մեր,  
և տալ օգնականութիւնն ընդդիմա-  
կաց լինել հակառակամարտիցն՝ ի  
պատերազմի. աղաչեմք: Ո՞յց սուրբ  
բարեխօսեա:

Աղաչեան վասն մեր զառ՝ ի քէն  
զմարմնացեալն Աստուած, զի լուես-  
ցէն պատերազմանք, դադարեցին  
յարձակմանք թշնամեաց, անկես-  
ցի սէր և արդարութիւն՝ յերկրի.  
աղաչեմք: Ո՞յց սուրբ բարեխօ-  
սեա:

Աղաչեան վասն մեր զառ՝ ի քէն  
զմարմնացեալն Աստուած, աճեցու-  
ցանել յերկրի մերում զբաղցը բըղ-  
խումն աղաբաց, զառատ պտղաբե-

բութիւն բուսոց և անկոց առ՝ ի զը-  
ւարձալի լինել ամենայն հարկաւոր  
պիտոյից մերոց. աղաչեմք: Ո՞յց  
սուրբ բարեխօսեա:

Աղաչեան վասն մեր զառ՝ ի քէն  
զմարմնացեալն Աստուած, զի միա-  
բանեսցէ զեկեղեցի իւր սուրբ, շի-  
նեալ՝ ի վերայ հիման առաքելոց և  
մարդարեից՝ սպահել անարատ մինչեւ  
յօր երեւելոց գալստեան իւրոյ, ա-  
ղաչեմք: Ո՞յց սուրբ բարեխօսեա:

Աղաչեան վասն մեր սրբուհի ըզ-  
միածին քոզորդին, և վասն հոգւոցն  
հանգուցելոց ընդունել յարբացու-  
թիւնն երկնից, և տալ մասն և բա-  
ժին ընդ սուրբս ամենայն, աղա-  
չեմք: Հիշեա Տէր և ողբամեա:

Եւ ևս առաւել զորդօրումն սի-  
րոց և զգործս բարեաց սպարգեել  
մեզ ինզրեմք: Տուր մեզ տէր Աս-  
տուած մեր:

Օ անձինս մեր և զմիմեանս Տէա  
ուն Աստուածոյ ամենակալին յանձն  
արացուք: Ինել Տէառնդ յանձն  
եղիցուք:

Ողօրմեաց մեզ տէր Աստուած  
մեր ըստ մեծի ողօրմութեան քում,  
ասասցուք ամենելքեան միաբանու-  
թեամբ։ Տէր ողօրմեա, Տէր ողօր-  
մեա, մայր սուրբ բարեխօսեա առ  
Տէր վասն մեր։

ՍԱԼՄՈՆ ՀԱ:

Աստուած զիրաւունս քո ալքայի  
տուր, և զարդարութիւնս քո որ-  
դոյ թագաւորի։ Դատէլ զժողո-  
վուրդս քո արդարութեամբ, և զալ-  
քատս քո իրաւամքր։ Դայեն լե-  
րինք զիսաղաղութիւն ժողովրդեան,  
և բլուրք զարդարութիւն։ Իրաւ ա-  
րասցէ աղքատաց ժողովրդեան, և  
կեցուսցէ զորդիս մնանկաց, և խո-  
նարչեցուսցէ զամբարտաւանաւ լաց-  
ցէ և մնասցէ ընդ արևու, յառաջ  
քան զլուսին ազգէ մինչև յազգ։  
Դջէ որպէս զանձրե ՚ի վերայ գեղ-  
ման, որպէս յօղ զի յօղէ երկիր։

Քնրերցուած յԵսայիս մարգարէկ։

ԺԱ. 1:

Եւ բղխեացէ գաւազան յարմա-  
տոյն ՀԵսսեայ, և ելցէ ծաղիկ յար-  
մատոյ անտի : Խւ հանդիցէ ՚ի վե-  
րայ նորա հոգի Աստուծոյ, հոգի Ե-  
մաստութեան և հանձնարց, հոգի  
խորհրդոյ և զօրութեան, հոգի զի-  
տութեան և աստուածապաշտու-  
թեան։ և լցցէ զնա հոգի երկիւղի  
Աստուծոյ : Ոչ ՚ի կարծ զատեացի,  
և ոչ ըստ խօսից յանդիմանեսցէ,  
այլ արասցէ իրաւունս մնանկին, և  
յանդիմանեսցէ զիսնարհս երկրի։

Վալուիսա ալէլուիսա :

Հոգին սուրբ եկեսցէ ՚ի քեզ և  
զօրութիւն Բարձրելցն հովանի լե-  
ցի ՚ի վերայ քո։

Աշետարան ըստ Դակառու:

Ա. 26 :

Եւ յամեանն վեցերորդի առաքեցաւ Դարբել հրեշտակ ի լուսուծոյ ՚ի քաղաք մի գալիք ացւոց, որում անուն էր՝ Կաղարեթ ։ առկօյս խօսեցեալ առն, որում անուն էր Համեթի ՚ի տանէ Դաւթի, և անուն կուսին Ուարիամ: Եւ եկեալ առնա՝ ասէ, Ուրախ լեր բերկրեալ լուսն էր ընդ քեզ: Եւ նա ընդ բանսն խռովեցաւ և խորհրդ ընդ միաս՝ թէ որպիսի ինչ իցէ ողջյնս այս: Եւ ասէ յնա հրեշտակն. Ո՞ի երկնչիր Ուարիամ, զի գտեր շնորհս յ լուսուծոյ: Եւ ահա յլառջիր և ծընցես որդի, և կոչեսցես զանուն նորա Յիսուս: Կա եղիցի մեծ, և որդի Ռարձելոյ կոչեսցի. և տացէ նմատէր Ծատուած զաթուն Դաւթի հօր նորա. և թագաւորեսցէ ՚ի վերայ տանն Հակովայ ՚ի յաւիտեանս, և թագաւորութեան նորա վախճան

մի լոյի: Եւ ասէ Ուարիամ ցհրեշտակն. Օխարդ լինիցի ինձ այդ, քանզի զայր ոչ գիտեմ: Պատասխանի եաւ հրեշտակն և ասէ յնա. Հոգի սուրբ եկեսցէ ՚ի քեզ, և զօրութիւն Ռարձելոյն հովաննի լոյի ՚ի վերայ քո. քանզի և որ ծնանելոյն է ՚ի քէն սուրբ է, և որդի լուսուծոյ կոչեսցի: Եւ ահա Հրդիսաբեթ աղջական քո, և նա յզի է ՚ի ծերութեան իւրում. և այս վեցերորդ ամիս է նորա, որ ամուն կոչեցեալ էր. զի ոչ տկարասցի առ լուսուծոյ ամենայն բան: Եւ ասէ Ուարիամ: Հաւասիկ կամ աղախին Ծեառն. եղիցի ինձ ըստ բաննի քում. և զնաց ՚ի նմանէ հրեշտակն:

Քարոզ:

Սուրբ զԱստուածածինն և զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ հայր ՚ի յերկինս, զի կամեցեալ ողորմեսցի, և զթայեալ կեցաւցէ զարարածս իւր. ամենակալ տէր Ծատուած մէր, կեցն և ողորմեաւ:

ԱՂՋԹԻ

Ընկալ տէր զաղաչանս մեր բար  
ըեխոսութեամբ սուրբ Աստուա-  
ծածնին անարատ ծնողի միածնի  
որդւոյ քո, և աղաչանօք ամենայն  
սրբոց քոյ, և որոյ այսօր է յիշա-  
տակ. ընը մեզ տէր և ողջոմեամ.  
Ներեա քաւեա և թող զմեզս մեր:  
Արժանաւորեա գոհութեամբ փա-  
ռաւորել զբեզ ընդ որդւոյ և ընդ  
սրբոյ հոգւոյդ, այժմ և միշտ և յա-  
ւիտեանս յաւիտենից ամէն:

( Օրհնեալ տէր մեր Յիսուս Քրիս-  
տոս ամէն :

Հայր մեր՝ որ յերկինս ես, սուրբ  
եղիցի անուն քո + և այլն:

## ՊԱՇՏՈՆ

Ե Ր Ե Կ Ո Յ Ե Ա Ն

ԱՂՋԹԻ ՄԵԽԱՑՈՒՍԵԿԱ ԽՕՍՔԵՐՈՎԸ

Մեծացուցէ անձն իմ զջեր, և ցնծացա-  
նողի իմ յԱսուած փրկիչ իմ:

Ուրախութեամբ որտի կը փառա-  
ւորեմ զլուտուծոյ անբաւ մարդա-  
սիրութիւնը, որ ուզելով մեր փըր-  
կութեանը համար մարդ ըլլալ, ընտ-  
րեց զբեզ արժանաւոր մայր իր մե-  
ծութեանը. զարդարեց զբեզ ան-  
պատմելի չնորհքներով, լեցուց ըզ-  
քեզ անհուն ինսգութեամբ, հաս-  
ցընելով զբեզ այնպիսի պատուոյ ու  
փառաց, որ քեզմալ երեցաւ ու կ'ե-  
րմնայ Աստուծոյ մեծութիւնը, կա-  
րողութիւնը, սքանչելիքը, գթու-  
թիւնը ու ողջոմութիւնը մեր վրայ:  
Վաղաւեմ զբեզ տիրուհի, մեծ-

ցուր քու անունդ իմ վրաս, ողորմելով ինձի պէս անարժանին. փառաւորէք քու աստուածողողիդ՝ առնելով ինձի համար քաւութիւն ու թողութիւն ըրած մեղքերուս, որով լոտուծոյ գթութիւնը կ'երեւնայ, ու քուկին մայրական սրախդուախտութիւնը կ'եւելնայ :

Զի հայեցաւ ՚ի խոհարհուրիւն աղախնոյ խրս, զի անս յաշակնակ երանեացն ինձ ամենայն ազգբ :

Աը փառաւորէմ քուկին երկրսպագելի խոնարհութիւնդ մայր լոտուծոյ, որ արժանի ըլլալովլ ասանկ բարձր պատուայ ու մեծարանայ, խոնարհեցուցիր զքեզ՝ աղախին ըսուելով լոտ լոտուծոյ, ուստի լոտուած ալքուցանկալի խոնարհութեդ համար այնչափ բարձրացուց զքեզ ու փառաւորեց, որ չէ թէ մինակ երկինքին հրեշտակները, այլ և ամէն ազգ ու ազինք կը ճանչնան, կ'օրհնեն, կը պատուեն, կը գովեն ու

երանութիւն կու տան քեզի սուրբ լոտուածածին : Կը փափաքիմ ես ալ անարժան թերնովլ քանի որ ողջ եմ՝ նէ՝ օրհնել, գովել, պատուել, փառաւորէլ զքեզ սուրբ կյոս տիրամայր : ( Ճ օրհնեալ ես դու ՚ի կանայս, և օրհնեալ է պտուղ որովայնի քո Հիսուս :

Զի արար ինձ մեծամեծն հզօրն . և սուրբ կ անոն նորս :

Ճանչնալով քուկին արժանաւորութիւնդ աստուածային անհուն չնորհքներու, որով ելար բարձրացար փառքովլ քան զամէնը վեր, ինչ չուան եղար մայր ու ծնող լոտուծոյ, խոնարհութեամբ սրտի ու որդիի ական պատկառանքով կ'իսնիմ սուրբ ոորքդ . զիսմանալով որ լոտուած իր ամենակարող զօրութեը առեր է զքեզ միջնորդ, որպէս զի քեզմովլ փառաւորուի իր ամենասուրբ անունը . ըսեր է քեզի առմենամեծ չնորհքը, որ ըլլաս մեզի

սաշտպան, օգնական, ապաւէն, խնամակալ ու բարեխօս։ Վաղաչեմ զբեզ տիրամայր, ցըցուր իմ վրաս քու զօրաւոր մայրութիւնդ, փառաւորի՛ քու ցանկալի անտւնդ։ Փրկե՛ զիս 'ի փորձութենէ ու ամէն վտանգէ։ որպէս զի անարատ վարքով ծառայեմ Վատուծոյ, ու անդադար օրհնեմ քուկին մայրութիւնդ։

Ես ողորմորին նորս ազգաց յազգս  
երկիրդածաց իւրոց։

Գոհանամ Վատուծոյ անբաւ  
չնորհաց ու ողորմութեանը, որ քու  
միջնորդութեամբ զ ըրեր է ու ան-  
դադար կ'ընէ մեզի, և պիտի ընէ  
ինչուան աշխրըթիս ետքը, Վմէն  
ողորմ Վատուծոյ ամենագթած մայր  
ես։ ո՞վ կրնայ յասահատիլ քու ո-  
ղորմութենէնդ, իժէպէտ մեղքերուս  
շատութիւնը կը վախցընէ զիս, սա-  
կայն քու գթութիւնդ ու զօրաւոր  
բարեխօսութիւնդ կը քաջալէրէ,

սիրու կու տայ ինծի, որ իմ յօյսս բո-  
լը քու վրագ զնեմ։ Վախտեմ մայր  
ողորմութեան, որ չէ թէ մինակ ին-  
ծի կ'ողորմիս, այլ և ընտանեաց՝  
ազգականներուս ու բարեկամնե-  
րուս։ Քուկին մայրական խնամքդ ու  
գթութիւնդ չիպակսցընելով ինծ-  
մէ ու մեր տանը վրայէն։

Արար զօրուրին բազկաս իւրով, ցրուաց  
զամբարտաւան մոօր սրտից խրեանց։

Ո՛վ որպիսի մեծ ու անսպասութ-  
վ հրաշք էր՝ որ Վատուծո ըրաւ մե-  
զի։ Վատուպարտուած էինք Վա-  
մայ մեղքովը, մատնուած էինք սա-  
տանային ձեռքը, անձար էինք մնա-  
ցեր մեր փրկութենէն։ սակայն Վ-  
տուած իր ամենամեծ իմաստու-  
թեամբը գտաւ գեղը։ ու զեց գալ-  
ճնանիլ քեզմէ, ու մեր տկար ընու-  
թենով յաղթելսատանային, ազա-  
տել զմեզ անոր իշխանութենէն։  
Զըցուց իր զօրութիւնը, բաշխեց  
ողորմութիւնը՝ զբեզ զնելով միջ-

նորդ մեր վրկութեանը : «Քեզմալ  
ամբջուց սատանային հպարտու-  
թիւնը . քու յանկալի խոնարհու-  
թիւնդ ինչնջուց զի՞ստուած իր մե-  
ծութենէն, ըրաւ մեզի հաւասար .  
որպէս զի իր խոնարհութելը մենք  
երկինքը ելլէնք ու աստուածային  
փառքով զարգարուինք : Այս ամե-  
նամեծ լուսուծոյ բարերարութիւ-  
նը քու միջնորդութեամբդ ընդու-  
նելով սուրբ լուսուածածին, կը  
ցնծանք ու կ'ուրախանանք մեծու-  
թեան ու փառացդ վրայ . և կ'աղա-  
շենք զմայրութիւնդ, որ քու անուշ  
խնամքդ լիսպակսեցընես մեզմէ :

Քակեաց զնօրս յարուց, և բարձրացոյց  
զիսնարնեւ :

Ո՛վ անբաւ մեծութիւն ու ան-  
հառելի զթութիւն տէր չիսուս  
Քրիստոս լուսուած բոլորից, որ  
քու կինքազգրմարդասիրութեամբդ  
եկար մեզի համար մարդ եղար . պա-  
տուեցիր մեքտկար բնութիւնը, զար-

դարեցիր անման չնորհըներով, տը-  
ւիր մեզի իշխանութիւն կօխել ու  
տիրել սատանային վրայ : Կ'աղա-  
չեմ զբեզ լուսուած իմ հիսուս,  
ինչպէս որ զատ ամէն բարիքս ուզե-  
ցիր ընել աշխըրքիս՝ միջնորդու-  
թեամբ ամինորհնեալ մօրդ, ասանկ  
ալ հիմա ողօրմէ ինծի անոր բարե-  
խօսութեամբը, որ ես այլ զօրանամ  
քու չնորհքովզ, ու իմ հոգւոյս  
պէտք եղած բաներուն ջանք ընե-  
լով, արժանի ըլլամ Ճշմարիտ հա-  
ւասքով յուսուլու սիրով ծառայել  
քեզի : Իմ բոլոր կեանդս կը նուի-  
րեմ քու սիրոցդ, որ իմ փրկութեանս  
սիրով մոռացար քուկին մեծութիւնդ :  
Կ'աղաչեմ զբեզ ալ մայր ողօրմու-  
թեան՝ զիտես իմ տկարութիւնս  
ու կը գթաս խեղճերուն վրայ, մի  
մասնար զիս, որ բոլորով սրտիւ քու  
օգնութեանդ ապաւիներ եմ, ու  
քեզմէ ՚ի զատ չունիմ ինծի ուրիշ  
ապաւէն ու միմիթարութիւն :

Զբաղցեալս լցոյց բարորեամբ, և զմե-  
ծառուն արձակեաց ունայն :

Ո՞վ աղթիւր կենդանութեան տէ՛ր  
իմ Հիսուս Ք. բիստոս, որ քու գը-  
թութեամբդ ողջոմելով մեր աղ-  
քատութեան վրայ՝ եղար հայ ան-  
մահական կենաց + լեցուցիր մեր կա-  
րօտութիւնը երկնային չնորհքնե-  
րով, խալսեցիր սատանային գերի-  
ները. բացիր մեղի արքայութեան  
Ճամբան՝ որ համարձակ առանց վա-  
խի կարենանք քայել ու համնիլ  
յաւիտենական երանաւթեան : Վա-  
ղաշեմ զբեզ փրկիչ իմ Հիսուս՝ միջ-  
նորդութեամբ ամենասուրբ մօրդ  
տուր ինծի ճշմարիտ փափաք ար-  
քայութեան. արհամարհել զաշ-  
խարհք, զզուիլ իր մեծութենէն ու  
հանգստութենէն. քեզի ցանկալ,  
քեզի հառաշել, զբեզ մոտըտալ ու  
քու սիրովդ տոչորուիլ: Խըթ կըլ-  
լայ որ առ իմ սրտիս փափաքը ու ա-  
նօթութիւնը կշտանայ քուկին տե-

սութեամբդ, ու յաւիտեան ժա-  
ռանգելով զբեզ արքայութեան մէջ:

Պաշտպանեաց խորայելի ծառայի իրում՝  
յիշել զորդուորինս :

Գիտեմ Տէր ու կը դաւանիմ  
բոլորով սրտիւ, որ շատ ու անմիտ  
բարիքնել ըրեր ես քու ծառանե-  
րուդ, չէ թէ իրենց արժանաւորու-  
թեանը համար, այլ մինակ քուկին  
ողջոմութիւնդ ուղելով ցրցընել մե-  
զի ու իմացընել՝ որ բոլորովին գթու-  
թիւն ես: Աւստի ես ալ՝ թէպէտ  
անարժան եմ՝ չնորհքներուդ, սա-  
կայն ապաւինելով անքաւ մարդա-  
սիրութեանդ, կը յուսամ որ յի-  
շելով քու ողջոմածութիւնդ՝ կը զօ-  
րացընես իմ տկարութիւնս, կը  
ինսամես իմ կարօտութիւնս, կը  
պահես փորձանքներէն, կը պաշտ-  
պանես վտանգներէն. ու կու տաս  
ինծի չնորհքդ, որպէս զի առանց  
մեզայ անցընելմ իմ կեանքս, ան-  
դադար քեզի ծառայելով, ու միշտ

զքեզ փառաւորելով, որ արժաւնի ես ամէն փառաց : Ա'պաչեմ զքեզ ալ տիրուհի, մայրական սիրով միջնորդ եզիր իմ աղաճանաց + զիտեմ որ՝ Եթէ բարեխօս ըլլաս ինձի համար, անտարակոյս կ'ընդունիմ Ա'ստուծոյ ողջմաւթեն շնորհըլ :

Որպէս խօսեցաւ առ հարս մեր՝ Աբրահամուն և զարակի նորա յաշխեան :

Ո'վ ամէնօրհնեալ սուրբ կոյս տիրուհի, պսակ և պարծանք աստուածային բարերարութեանցը, քեզմով կատարեցաւ Ա'ստուծոյ խօստմունքը, քեզմով լսեցինք մեր փրկութեան աւետիքը, քեզմով լցցուեցանք ու լրացանք Ա'ստուծոյ շնորհքով . քնչզնվ օրհնուեցան աղջ ու աղինք . և քու միջնորդութեամբդ պիտոր հանինք մեր յաւիտենական նրանութեանը : Ա'պաչեմ զքեզ տիրամնյը՝ գուն որ անարատ մաքրութեամբ տաճար ու կաակ եղար Ա'ստուծոյ խօստմանը,

զբախտ եղար անմահ ծառին կենաց, տուիր բաշխեցիր մեզի քու ցանկալի պատոզդ, որով կշտացանք ու զմայլեցանք անձառելի իննդութեամբ : Ողդրմէ իմ խեղճութեանս վրայ, որ իւրեւ անտառակ որդի իմ մեղքովս վասնեցի, կորոցնցուցի Ա'ստուծոյ ինձի տուած չնորհքները . չիմանցայ իր բարերարութիւնները, ու իմ չար գործքերովս վաստիկեցայ ու շատցուցի հօգւոյս պատիմաները, ու հիմա զրկուած ըլլալով ամէն բանէն, ամինալով ըրածներուս վրայ՝ խոնարհութեամբ սրբատի կը զիմեմ քեզի սուրբ Ա'ստուածածին : Գիտեմ որ զթած ես, զիւեմ որ զօրաւոր ես . զիտեմ որ բան չիտկապանար քու առջեւդ, անոր համար կ'աղաչեմ զքեզ որ ըլլաս ինձի դեզ կենաց, պաշտպան փրկութեան, միջնորդ երանութեան, ու ցնծութիւն անվախան փառաց արքայութեան մէջ . ուր տեսնալով և վայլելով իմ Հիսուս փրկիս, փառաւորեմ քու մայրութիւնդ որ ցըցաւցիր ինձի պէս անարժան զաւկիդ :

Երգ:

“Ասահապետացն Աթրահամու,  
Խսահակայ և Յակոբայ պարզեւեցար՝  
ի յլ ստուծոյ կոյս Ուղիամ  
գուստը նոցին. Երանեն ազգ և ա-  
զինք այսօր զննեալդ ’ի յլ ննայէ :  
Եղախին և մնյըր կենաց աջպն ծնող  
Նոր միածնին, որ առ ’ի քէն մար-  
մաժն ընկէց զամբարտաւանն յա-  
թռոց. Երան”: Արթարձրացցց զան  
կեալ բնութիւնս ’ի քէն ծննդեամբ  
Որդին յերկինս. զիարօտեալս ելլոց  
հայիւ, և զմեծատունն ելլոց ու-  
նայն. Երան” :

Աղօրք եօրք խեղուրեան սուրբ  
Աստուածածկայ :

Ա.

Ո՛վ փառաւորեալ միշտ սուրբ  
կոյս, կը յնծամբ քու փառացգ վրայ՝  
որ աւետեօք Պարբիէլ հրեշտակա-

պետին եղար մայր Աստուծոյ, ընտ-  
րուեցար միջնորդ ըլլալ մեր փրկու-  
թեանը, լցուեցար աստուածային  
անթիւ չնորհքներով մեզի բաշխե-  
լու համար. կ’աղաչեմ զքեզ մայր  
ողօրմնեթեան՝ մի զրկեր զիս մայրա-  
կան օրհնութենէդ. մասնակից ըրէ  
իմ հոգիս ալ Երկնային ուրախու-  
թեանդ, որում արժանի եղար քու  
ամերիծ մաքրութեամբդ ու անձա-  
ռելի խոնարհութեամբ. Ողջնքեզ  
Ուղիամ և այն :

Բ.

Ո՛վ փառաւորեալ միշտ սուրբ  
կոյս, մատրուտով քու անպատմելի  
խնդութիւնդ որ ունեցար Յիսուս  
միածին որդիդ ծնանելու ատենը,  
Երբոր հրեշտակները Երևնալով հո-  
վուաց փառք կու տային Աստուծոյ,  
ու աշխրբիս ալ խաղաղութիւն կ’ա-  
ւետին, կ’աղաչեմ զքեզ որ իմ հո-  
գիս ալ արժանացընես ան ուրախու-  
թեանը և չնորհքներուն, որ Յի-

սուս փրկից մեզի համար բերաւ  
աշխարհը իրեն սուրբ ծննդեամբը:  
Ողջոն քեզ Վարիամ, և այն:

Գ.

Ո՛վ փառաւորեալ միշտ սուրբ  
կոյս՝ կ'ուրախանամ քու փառացդ  
վրայ, որ իրեւ թագուհի ու ծնող  
Վատուծոյ պատուեցար մոգերէն.  
ան երկրպագութիւնը ու ընծաներն  
որ սուբն Յիսուսի, չէ թէ մինակ  
զաւկիդ էր, այլ և քեզի, ըլլալովդ  
մայր Վատուծոյ ու միջնորդ փրկու-  
թեան. կ'աղաւեմ զբեզ՝ որ իմ հո-  
գիս ալ մանակից ընես ան օրհնու-  
թեան ու չորհքներուն, ինչ որ մայ-  
րական սիրովդ տուիր երանելի մո-  
գերուն: Ողջոն քեզ Վարիամ, լի  
չորհօք. և այն:

Գ.

Ո՛վ փառաւորեալ միշտ սուրբ  
կոյս՝ կը ցնծամբ քու անպատմելի ու

րախութեանդ համար, որ ունեցար  
տեսնալով Յիսուսին փառաւոր յա-  
րութիւնը, երբոր եկաւ միխթարեց  
քու ցաւադնեալ սիրտդ. կ'աղաւեմ  
զբեզ մայր ողղումնութեան՝ արժանի  
ըրէ իմ հոգիս ալ տեսնալու Յի-  
սուսին յարութեան չնորհքը, ու  
կենդանի հաւատքով, հաստատուն  
յուսով և շերմեռանդ սիրով պաշ-  
տելու զՅիսուս իմ փրկից: Ու-  
ջոն քեզ Վարիամ. և այն:

Ե

Ո՛վ փառաւորեալ միշտ սուրբ  
կոյս՝ կ'ուրախանամ անձառելի խրն-  
դութեանդ համար՝ որ ունեցար տես-  
նալով զՅիսուս միածին որդիդ, եր-  
բոր համբարձման օրը բազմութեք  
հրեշտակացիր աստուածային փառ-  
քովը ելաւ երկինքը ու նստաւ ընդ  
աջմէ հօր. կ'աղաւեմ զբեզ մայր  
ողղումնութեան՝ արժանի ըրէ իմ  
սիրտս ալ, որ միշտ Յիսուսին հետ  
ըլլայ արքայութեան փափիաքովը, և

բարի գործքերով փառաւորէ զինքը  
աշխըքիս մէջը : Ողջոյն քեզ Ո'ա-  
րիամ . և այլն :

Զ

Ո'զ փառաւորեալ միշտ սուրբ  
կյս՝ կը ցնծամ քու անպատմէլի  
խնդութեանդ համար , երբոր տէ-  
սար հոգւոյն սրբոյ գալուստը առա-  
քելոց վրայ՝ լեցրնելով զանանք ան-  
թիւ չնօրհքներով , որով եղան աշ-  
խըքիս մէջը քարոզ Յիսուսին առ-  
տուածութեանը , ու քուկին մայր  
Կստուծոյ ըլլալուդ : Վաղաշեմ ըզ-  
քեզ մայր գթութեան՝ լեցուր զիս  
ալ աստուածային չնորհքով , որով  
ըլլամ ձշմարիտ ծառայ Կստուծոյ .  
մնջով , գործքով ու բերնով փառա-  
ւորեմ քու մայրութիւնդ , որ կը  
ցըցընես ինձի : Ողջոյն քեզ Ո'ա-  
րիամ . և այլն :

Է

Ո'զ փառաւորեալ միշտ սուրբ  
կյս՝ կ'ուրախանամ անձառելի փա-  
ռաց ու խնդութեանդ համար՝ որ  
ունեցար վերափոխմանդ օրը , երբոր  
բազմութեամբ հրեշտակաց մասք  
յարքայութիւն , ու պատկեցար թա-  
գուհի երկնի և երկրի . կ'աղաւէմ  
զքեզ մայր ողորմութեան՝ առ զիս  
ալ քու պաշտպանութեանդ տակը ,  
որ կը փափաթիւ ջերմեռանդու-  
թեանդ մէջը մնալ ու մեռնիլ : Ող-  
ջոյն քեզ Ո'արիամ . և այլն :

Մաղրանք :

“ Բոտեմք ’ի քէն աղերսիւ բա-  
նի , որ ես քաղցրալուր զրաւ աշխար-  
հի . միայն երանեալ և բարեբա-  
նեալ , հօրն հաճութեամբ հովա-  
նաւորեալ . լրդւոյն ծնող , հոգւոյն  
վերլնդունով լրբորդութեան փա-  
ռայն տարող : Ո երանկարեալ զառ

՚ի յաւաղանէն անսախտ արդանդէ  
զկարգացեալս անսուն՝ ՚ի զիր մատե-  
նի վերնում դպրոցիդ ։։։

ԱՂԹԹԻ

Առնարհութեամբ սրտի կ'ինիմ  
քու ոտքդ տուրբ Աստուածածին ,  
թագուհի Հըշշոտակաց , ասկաստան  
մեղաւորաց , միսիթար վշտացելոց +  
սոգոմէ իմ կարօտեալ հոգւոյս , որ  
զրկուած է ամէն հոգւոր միսիթա-  
րութենէ . քեզմէ ՚ի զատ չոնիմ  
այլ յոյս մայր ողջոմնութեան . դուն  
ես իմ Ճարս , գուն ես իմ ապահնա ,  
դուն ես իմ միսիթարութիւն : | Կն-  
կած եմ այլէկոծութեան մէջ , թէ  
որ ձեռք շիտաս նէ ինձի , կը խըզ-  
դուիմ : Հիւանդ եմ հոգւով ու մար-  
մաով . թէ որ դեղ մը ընես , ան-  
տարակոյս կը մեռնիմ : Ուաղուած  
եմ մեղաց ու ախտից մէջը . թէ որ  
չաղստես , պիտի կօրսուիմ : Կի-  
տեմ մայր ողջոմնութեան , որ անթիւ  
է քու գթութիւնդ , մանաւանդ ա-

նանց վրայ՝ որ իրենց բողը յոյսը  
քեզի են զրեր : Ա'աղաւէմ զթա  
իմ վրաս , ցըցնը քու մայրական  
խնամքդ , որպէս զի փառաւորեմ  
քու մեծութիւնդ , քուկին կարո-  
ղութիւնդ , քու հրաշքդ , անպատ-  
մելի սէրդ ու գթութիւնդ , որ ու-  
նիս մեղաւորներուն վրայ :

Երգ:

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ անսարատ մայր  
Տեառն և կյոս սուրբ , բարեխօսուեա  
առ որդիկ քո միածին , զի փրկեսցէ  
զմեղ ՚ի սովառնալեաց զեհնայն , և  
պարզեսցէ մեղ զերկնից արքայ-  
ութիւնն , և հանգուոյէ զհոգիս  
մերննջեցելոցն . օգնեան ինձ՝ Քրիս-  
տոս այսօր յաւաջին Ճանապարհին ,  
և ՚ի միւսանգամ գալստեանդ քո  
օգնեան ինձ ։։։

ԱՂՋԹՔ

Ո՞վ բարեգութ կոյս Ո՞արիամ,  
մայր Ե՞ստուծոյ, գանձապետ չնոր-  
հաց, փաստաբան ու պաշտպան մե-  
ղաւորաց, քու կթութեամբդ մարկ  
ըրէ աղազանաց անարժան ծառայիս.  
տուր ինծի աս չնորհքս՝ որ ես ալ  
մանամ ջերմեռանդ ծառանէրուդ  
համբանքին մէջը : Ո՞վ ամենասուրբ  
կոյս՝ մաքրի իմ սիրտս ամէն աղտո-  
տութենէ . լուա ու սրբէ իմ հոգիս  
ամէն պակտութենէ, վառի զիս ար-  
քայութեան սիրովը, զզուելի ըրէ  
ինծի աշխարքիս ունայն բաները, որ  
իս քեզմէ կը հեռացընեն : Ինարե-  
խունէ ինծի համար առ միածին որ-  
դիդ, մանաւանդ մեռնելուս ատե-  
նը, երբոր փախով պաշարուիմ գա-  
տաստան երթալու պատասխան տա-  
լու իմ գործքերուս համար, որպէս  
զի քու զօրեղ միջնորդութեամբդ  
աղատիմ յաւիտենական տանջան-  
քէն, ու աս ողորմելի կեանքէս ետ-

քը արժանի ըլլամ աղքայութեան  
փառաց համնելու : Ո՞աղաշեմ մայր  
ողորմութեան, անուշ աշքդ մի վեր-  
ցըներ իմ վրայէս . քեզի կը յանձ-  
նեմիմ հոգիս ու մարմին ալ . դուն  
պահէ, գուն պաշտպանէ ամէն փոր-  
ձանքէ . դուն մաքրէ ու զարգարէ  
զիս աստուածային չնորհքով : Տիւր  
ինծի ձշմարիս ու կենդանի հա-  
ւատք, հաստատուն յոյս, և կատա-  
րեալ սէր . որպէս զի բարեգործու-  
թեան հետ ըլլալով կարենամաղէկ  
ծառայել Ե՞ստուծոյ : Ո՞աղաշեմ  
մայր Ե՞ստուծոյ՝ ողորմէ աս քաղքիս  
ալ, պահպանէ կոիւներէն, ազատէ  
ժանտամահէն, փրկէ սովլին, կրա-  
կէն, գետնաշարժէն ու այլ վնաս-  
ներէն : Քու մայրական սիրովդ հո-  
գա զիս ու ընտանիքս ալ, և զամե-  
նայն քրիստոնեայս, որ բօրորով սրբ-  
տիւ քուկին զթութեանդ ապաւի-  
ներ ենք :

Ո՞վ քաղցրագութ տիրուհի իմ,  
մի մանար քաւարանին մէջի եղած  
հոգիներն ալ որ կը սպասեն Ե՞ստու-

Ճոյ սղօրմնւթեանը, որպէս զի քու  
բարեխօսութեամբդ շուտով ազա-  
տին իրենց նեղութենէն, ու հաս-  
նին արքայութիւն + ուր արժանի ըլ-  
լարով աստուածային տեսութեան,  
փառաւորեն զմիածին Արդիդ ընդ  
հօր և ամենասուրբ Հոգւոյն այժմ  
և միշտ և յաւ իտեանս յաւ իտենից :

ՍԱՂՄՈՍ

**Ի** խորաց կարդացի առ քեզ Տէր,  
Տէր լուր ձայնի իմում : Խզիցին ա-  
կանջք քո 'ի լսել զձայն աղօթից ի-  
մոյ : Ուե զանօրէնութիւնս իմ  
քննես Տէր, Տէր ո՞ կարէ կալ ա-  
ռաջի քո, զի 'ի քէն է քաւութիւն :  
Ա ան անուան քո համբերի Տէր .  
Համբեր անձն իմ բանի քում : յու-  
սացաւ անձն իմ 'ի Տէր : Ի պահե-  
առաւօտու մինչև յերեկոյ, 'ի պա-  
հէ առաւօտու յուսացաւ Խսրայէլ  
'ի Տէր : Ի Տեամնէ է ողօրմութիւն  
բացում, և 'ի նմանէ է փրկութիւն,  
և նա փրկեաց զ Խսրայէլ յամենայն

նեղութեանց նորա : Փառք հօր, և  
այն : Հայր մեր որ յերկինս :

Աղօրք բարի մահ խնդրելոց առրդ  
Աստուածածեկե :

**Ո'Կ** քաղցրագութ մայր Յիսու-  
սի կցոյ Վարիամ, օգնական ու պատո-  
պան անձարակ մեղաւորներու, լի-  
դթութեամբ և ողօրմութեամբ, ա-  
նուշ աչքով նայէ ողօրմելիիս վրայ,  
համբը ինծի օգնութիւն քանի որ  
մահս չէ եկեր մօտեցեր իմ քովս,  
որ ըլլայ թէ յանկարծակի ու ա-  
ռանց պատրաստութեան ելլեմ աշ-  
խըրքէս : Կ'աղաշեմ զքեզ մայր ո-  
ղօրմութեան՝ Յիսուսին չարչարա-  
նայր ու մահուան սիրոյն համար,  
պահէ ու իմնամէ զիս, որ հիմակուը-  
նէ հեռանամ մեղքէ, փախչելով  
սատանային ու իր ամէն չար գործ-  
քէն . Ճշմարիտ զղջմամբ՝ կատա-  
րեալ խոստովանութեամբ ու ար-  
ժանաւոր ապաշխարութեամբ հաշ-  
տուիմ Յիսուսին հետ : Ողօրմելին

ծի երանուհի մայր Աստուծոյ՝ ան  
սովկալի ատենը՝ մեռնելուս օրը, եր-  
բոր շունց բռնուի, ու լեզուն կա-  
պուելով ջիկընամ՝ աղաչել զքեղ,  
ացուլներս մշըննան, ու ականջներս  
խնան, ան ատենը մի մօննար զիս  
մայր անարատ, այլ միտքդ բեր հի-  
մակուան աղաչանքս որ կ'ընեմ քու  
մայրական գթութեանդ, ու հասիր  
ինձի օգնութիւն, որպիս զի խալը-  
սիմ սատանային փորձանքներէն .  
ու անուշ մահուամիք քու ձեռքդ ա-  
ւանդելով իմ հողիս, արժանի ըլ-  
լամ արքայութեան ու մասնակցու-  
թեան սիրելի ծառաներուդ, որ քե-  
զի հետ կը վայեն զլստուած յա-  
ւիտեանս յաւիտենից :

“ Քարժանահայյ և յամենազօր  
քո բարեխօսութիւնդ միշտ ապա-  
ւինեալ, մնամիք ’ի հաստատութե-  
ինամեալը և հանդուցեալը ընդ  
հովանեաւ պաշտպանութեան ա-  
մօւը պատուարի սուրբ Աստուա-  
ծածնիդ . . . մայր հիմնադրութեան

հաստատութեան եկեղեցւոյ . . . ’ի  
թես պահպանութեան լայնատա-  
րած քումդ մաղթանաց ապաւինե-  
լով . . . աներկրպայ յուսով հաւա-  
տամբք ապրիւն : Եւար . . ’ի հերեն.  
իունին :

ՍՈՒՐԵ ԱՎՏՈՒԱՆԱՆԱՑ ՏԾՆԵՐՈՒՆ

Աղօրք անարտա յդուրեան սուրբ  
Աստուածածնայ :

Ո՛վ ամէնօրհնեալ տիրամայր  
սուրբ կոյս Արքամ, մատըշտալով  
քու ամբիծ ու անարտա յդութիւնդ,  
որ առանց մեղաց յդացար ու աս-  
տուածային չնորհքով զարդարուե-  
ցար, կ'ուրախանամ Աստուածոյ ան-  
հուն մարդասիրութեանը վրայ, որ  
քեզմով ու զեց յըցընել մեզի, և ո-  
րովէն տե իր ողօրմն թեամբը պիտի  
վերցընէր աշխըզիս մեղքը ու ա-  
նէծքը, անօրհամար զարդարեց ըզ-  
քել իր չնորհքովը, որպէս զի անա-  
րտա յդանաս, ու քու անմեղութիւնդ  
երենայ իր ամենակարող զօրու-  
թիւնը ու անպատմելի գթութիւնը  
մեր վրայ : Ապագեմ մայր ողօրմնւ-

թեան՝ անարտա յդութեանդ հա-  
մար մարքէ իմ հոգիս ալ ամէն աղ-  
տուութենէ, մանակից ընելով քու  
որբութեանդ, որ արժանի ըլլամ  
աստուածային չնորհաց . ու բարի  
վարքով, աղէկ գործքերով անցը-  
նեմ իմ բուօր կեանքս Աստուածոյ  
ծառայութեան մէջ : Հանկալի ըլ-  
լոյ ինծի մեռնիը, քան թէ մեղ-  
քով սրդողլցնել իմ տէրս, իմ փըր-  
կիս, իմ բարերարս, որ է իմ բո-  
ւոր յօյս ու ապա ինութիւնս աս  
աշխըզիս մէջը, և յաւիտենական  
յնծութիւնս ու փառքս անդին ար-  
քայութեան մէջ : Ապացեմ մայր  
Աստուածոյ, մի զրկեր վիս քու գթու-  
թիւնէդ, որ ամենանուն սուրբ ըլլալը  
ու աղքայութիւն համիլը կ'ուզէս :  
Եշտ : “ Անթառամ ծաղիկ, ան-  
դատապարտ շառաւիլ, վերաբու-  
սեալ յարմատոյն Հեսսեայ . զքեզ  
Ասայիս կանխաւ վերաբունեաց՝  
եօմնարփեան չնորհաց հոգւոյն լն-  
դունարան գոլ . Աստուածածին և  
կօյս զքեզ մեծացուցանեմբ , :

Աղօրք ծննդեան տորբ Աստուածածնայ:

Ո՛վ ամքիծ և անարատ տուրբ  
կցս Ո՞արիամ, դու որ մաքուր ծնըն-  
դեամքդ անպատմելու րախութիւն  
եղար աշխրիս, երեւալով իրեւ  
աղուոր արուսեակ մը ու առաւօտ  
խազաղութեան, իմացընելով մե-  
զի թէ քեզմով պիտոր ծագի արե-  
գակն արդարութեան Քըհատոս  
մեր փրկիչը. կը ջնծամ ու կ'ուրա-  
խանամ Շատուծոյ ողորմութեանը  
վրայ, որ զքեզ տուաւ մեզի նշան  
իր հաշտութեանը ու անբաւ մար-  
դասիրութե: Քու տուրբ ծնունդդ  
սիլզըն եղաւ աստուածային չնորհք-  
ներուն, որ պիտի ընէր մեզի: Պիակ  
եղար նահապետայ, պարծանք մար-  
դարէից, ուրախութիւն արդարոց,  
ու ապաւէն մեղաւորաց: Կ'աղա-  
չեմ մայր ողորմութեան՝ անարատ  
ծննդեանդ համար նորոգէ իմ սիր-  
արս, լուսաւորէ իմ միտքս, սրբէ  
ամէն զգայալանքս, որպէս զի ըլլամ

նոր մարդ ու աստուածային չնորհք-  
քով սրբութեամբ անցընեմ իմ  
բոլոր կեանքս, պատուելով ու փա-  
ռաւորելով քու սուրբ ծնունդդ, որ  
արժանի է ամենայն փառաց:

Երգ: “Կուսին նախնոյ մօրն Ե-  
ւայի՝ յարմէ Շատմն հին պարտի,  
բարձան անէծքըն արամական, քո  
սուրբ ծննդեամբ կցս Ո՞արիամ: ա-  
ղաչեաւ զքս միածին, թալուլ զմեզս  
որպւոցնոցին. յոր օրհնեցայք ազգք  
երկրածին, տնիք օրհնութիւն պըտ-  
զս կուսին,,:

Աղօրք տորբ Աստուածածնայ անուանք:

Ո՛վ անարատ կցս Շատուածածին  
Ո՞արիամ, ցանկալի կուսից և պար-  
ծանք ազգի մարդկան, միջնորդ և  
բարեխօս մեր, աիրուչի և խաղա-  
զարար ալէկոծ ծովսւ աշխարհիս:  
Քու սուրբ անունդ եղաւ միսիթա-  
րութիւն մեր սրտին. լուսաւոր աստ-  
զի մը պէս երեցար մեզի. ուրախա-  
ցուցիլ մարդկային բնութիւնը. ա-

և տիք տուիր՝ [թէ պիտոր ըլլաս մայր  
փրկութեան, արդարոց ցնծութիւն,  
մեղաւորաց ասպաստան, վշտացելոց  
հանգիստ, տարակուսելոց քաջալե-  
րութիւն, գանձապետ չնորհաց և  
դուռն ողորմութեան Աստուծոյ։  
Ա' աղաւեմ զքեզ սրբուհի, ցըցուը  
իմ վրաս ցանկալի անուանդ պը-  
տուզը, եղիր ինծի մայր, պաշտպան,  
ապաւէն, քաջալերութիւն և միսի-  
թարութիւն տառապեալ կենացս,  
որ կարօտ է քու գթութեանդ ու  
օգնականութեան, մի զրկեր զիս  
մայրական ինսալքէդ։ Հեռացեր եմ  
Աստուծոյ չնորհքէն, ու իբրև անսա-  
ռակ որդի կորմնցուցեր եմ ամէն  
հոգեռոր բարիիք։ մօտեցնուը զիս առ  
որդիդ քո միածին, հաշտեցնուը զիս  
իրեն հետ։ մեծցնուը ու փառաւորէ  
քու անունդ իմ հօգւոյս փրկու-  
թեամբը։

Երբ։ “Ա' արդարէից հանդիսա-  
րան և զրաւական կենաց մարդկան  
Ա' րիամ աստուածամայր, ընդու-  
նարան եօթնարիեան չնորհաց, իսա-

րիսին յուսոյ հաստատութեան, զու-  
գամիիւ աւուրց դարուց անցաւո-  
րաց . օրհնութեամբ երգով եկեղե-  
ցիք տիեզերաց այսօր տանեն զիշա-  
տակ ծննդեան քո ՚ի մօրէ , :

Աղօրք լնձայման սուրբ Աստուածածնայ։

Ամէնօրհնեալ սուրբ կոյս Ա' ա-  
րիամ, զաւակի ցանկալի, հարսն եր-  
կնաւոր, որ մաքրութեան սիրով  
ընծայուեցար Աստուծոյ, ու եղար  
մեղիօրինակամէն առաքինութեան։  
Պատակ եղար կուսութեան, պատկ  
խնարհութեան, պատկ համբերու-  
թեան, պատկ աստուածալաշու-  
թեան, պատկ աստուածային սիրոյ  
ու իմաստութեան։ Եղար մէկ զե-  
ղեցիկ պատկեր մը ամենայն գովելի  
գործոց բարեպաշտութեան, երե-  
ցընելով զքեզ իբրև ձիթենի պըտ-  
զալից Աստուծոյ տանը մէջ։ ինչուան  
արժանի եղար մայր Աստուծոյ ըլ-  
լալու։ Ա' աղաւեմ զքեզ տիրուհի,  
քուկին աստուածային սիրովդ վա-

ուէ իմ սիրաս ալ հոգեւոր ջերմեւ  
անդութեամբ . որպէս զի ես ալ  
նուիրեմ Աստուծոյ իմ կեանքս հո-  
գւով ու մարմնով . ըլլամ շմարիտ  
ծառայ Աստուծոյ , ու արժանաւոր  
որդեղից քու մայրութեանդ , հե-  
տեւլսվ քուկին տուած բարի օրի-  
նակներուդ . ու անով վայել մայ-  
րական խնամքդ ու մէրգ , որ կը ցը-  
ցընես քու ջերմեւանդներուդ :

Երջ : “ Աստուածատնկի ինկա-  
բեր ծառ յանուշահստ բուրաստա-  
նէն , որ 'ի զնաց Հոգւոյն վտակաց  
անկեցար , և զանմահստեան պր-  
տուդն 'ի ժամն ետուր մեզ . վասն  
որպ ամենէքեան զքեզ միշտ մեծա-  
ցանեմք ” :

Աղօրք աւետման սուրբ Աստուածածին :

Ո'վ ամենասրբուհի կոյս , ընտ-  
րեալ և փառաւորեալ մայրդ Աս-  
տուծոյ , լի աստուածային նորհքով .  
ուրախութիւն մարդկային ընու-  
թեանս և պարծանք եկեղեցւոյ :

Վեղմով կասարուեցաւ անշննելի  
խորհուրդն Աստուծոյ . քեղմով փա-  
ռաւորուեցան մարդիկ , քեղմով նա-  
հապեաք ու մարդարեք հասան ե-  
րենց բաղձանքին : Այս ցանկալի օ-  
րուանս կը նայէին ամէնքը , որ Աս-  
տուած իր ողորմութիւնը յայտնէ  
աշխըրքիս . ասօր բացուեցաւ Աս-  
տուծոյ ողորմութեան դուռը , խըր-  
կուեցաւ Դարբիկէլ հրեշտակապե-  
տը՝ որ գայ աւետիս տայ քեզի բո-  
լոր աշխըրքիս փրկութիւնը : Վու-  
արժանաւորութիւնդ շարժեց զԱս-  
տուած , որ աս բարիքս քեղմով լնէ  
մեզի . քու սրբութիւնդ արժանի ե-  
ղաւ աս աստուածային պատույ .  
քուկին կուսական ամբիծ մարդու-  
թիւնդ հասուց զքեզ ասանկ մեծա-  
րանաց : Կուրախանամ ու կը ցըն-  
ծամ փառացդ վրայ , և խօնարհու-  
թեամբ սրտի կ'ինիմ ոտքդ սուրբ  
Աստուածածին . կը փափիքիմ ող-  
ջունել զքեզ Դարբիկէլ հրեշտա-  
կին հետ : Աւրախ լեր բերկրեալ  
ջեր ընդ քեզ . լի ես ամենայն նոր-

Հօք, զարդարուած ես ամէն առաքինութեամբ։ օրհնեալ ես դու ՚ի կանայս, և օրհնեալ է պտուղ որովայնի քո։ Վաղաշեմ կուսական մայրութիւնդ, կը պարատիմ գթութեանդ, մի պակսեցըներ ինծմէ առուշ խնամքդ, մի զրկեր զիս քու չնորհքէդ, որ կարօտեալ հոգւով կը դիմեմ ողբուժութեանդ։ Վիտեմ մայր Վստուծոյ, որ աս անձառելի պատիւը մեզի համար ունեցար, որ պէս զի ըլլաս ծնող մեր փրկչնն, ու քու պաշտամնութեամբդ վայլենք մեր հոգւոյն փրկութիւնը։ Երբ պիտի ըլլայ օր ես ալ մէկ օր մը լսեմ քու անուշ բերնէդ, թէ մի վախնար, իմքարեխօսութեամբս կըդբանաս Վստուծոյ չնորհքը, ու յաւետենական երանութիւնդ։

Երդ։ “ Վստուածածին սուրբ կյս անապական տաճար, անպարազիծ եին բոլորից բնութեանց լայնածաւալ տեղի, այսօր ընդ բեր կրական զուարթնոյն կրեցեր աւետեօք զտէին տերանց ՚ի քեզ։ առ

որ մաղթեմք բարեխօսել վասն մեր անընթելի ձայնիւ ու։

Աղօրք այցելութեան առրը Աստուծածնայ :

Ո՛վ քաղցրագութ սուրբ կոյս Ո՛արիամ, քուկին ցնծալից այցելութեամբդ միսիթ արութիւն եղար վրացելոց, քաջալերութիւն տկարաց, ու ուրախութիւն տանը Եղիսաբեթի, որ քու չնորհալի բարեդ լսելով՝ լցուաւ հոգւով օրբով, ու երանութիւն տուաւ անսոնց՝ որ Տըշմարիտ հաւատքով ընդունին քու մայրութիւնդ։ Վաղաշեմ մայր ողբուժութեամ՝ փառաւորէ մեծութիւնդ իմ վրաս։ մի նայիր իմ անարժանութեանս, այլ մայրական գթութեամբդ եկներ տեսութիւն իմ աղքատ հոգւոյս լուսաւորէ խաւարած միտքս։ միսիթարէ սգաւոր միբատ, որ մեղքերոււ համար կ'ողբաց ու կը տանջուիմ։ Վիտի ըլլայ օր մը, որ լաեմ քու անուշ բարեդ

իմ հոգւոյս մէջը, ու փառք տալով  
Վասուծոյ ողբրմութեանը, լեցուիմ  
անպատմելի խնդութեամբ, տես-  
նալով մայրական գութդ ու ինամբդ  
իմ վրաս : Ես թէպէտ արժանի  
չեմ աս չնորհքին, սակայն քու մե-  
ծութեանդ ու գթութեանդ մինակ  
կը վայլէ, ու մէծ փառք է ողբրմիլ  
ինձի պէտ անարժան մեղաւորին :

Երգ : “ “ Դասք անմարմնոց հրեշ-  
տակաց քեզ երանեն ամէնօրհնեալ  
կոյս Ո’ արիամ, օր զէակից Բանն  
որ ընդ հօր կրեցեր ’ի քեզ անսեր-  
մնապէս . առ նա միշտ բարեխօսեա  
վասն քաւութեան մեղաց մերոց , :

Ազօրք վերափոխման աւորի Աստվա-  
ծածնայ :

Ո’ վ ամենամեծ թագուհի, ար-  
ժանի ամենայն փառաց և մէծու-  
թեան՝ մայրդ Վասուծոյ : Դաւն որ  
ասօր մանալով յաբայութիւն, ա-  
մենասուրբ Երբորդութենէն ասիր  
ծայրագոյն պատիւ իշխանութեան՝

թագուհի ըլլալով երկնի և երկրի .  
գանձապետ եղար չնորհաց ու ողբր-  
մութեան : Պատուեցար հրեշտակ-  
ներէն ու անդագար կը փառաւո-  
րուիս անպատմելի գովասանկներովլ.  
Կ’օրհնեն զքեզ սերորեք, կը գովեն  
քերորեք, և ամենայն երկնային զօ-  
րութիւնք կը սպասաւորեն գուկին  
արժանաւոր սրբութեանդ ու աս-  
տուածամայրութեանդ : Ո’ աղաչեմ  
զքեզ մայր ողբրմութեան՝ մի մոռ-  
նար զմեզ որ քու ծառայութեանդ  
ու որդեզը ութեանդ նուիրեր ենք  
մեր հօգին : Դաւն երկինքն ես ան-  
պատմելի երանութեան մէջ . իսկ  
մէնք աշխարքիս անտանելի թշուա-  
ռութեան, մի թողուր զմեզ մինակ  
ու անօգնական : Դիմես մեր տկա-  
ռութիւնը, կը տեսնաս մեր խեղ-  
ձութիւնը, կ’իմանսաս մեր սրտին  
փափաքը, կ’ողօրմիս ու կը գթաս  
ամենառն վրայ, որ բոլորով սրտիւ-  
քու մայրութեանդ ապաւիներ են :  
Ո՞ւ որ արդարներուն ողօրմիս, մէծ  
ըան չէ, ինչու որ արժանի են ողօր-

մութեան : այլ ինծի անարժանն մեղաւորիս ցըցուը քու դժութիւնդ, որով մեծութիւնդ կ'երեւայ , ու մայրական գութեզ կը փառաւորուի :

Երջ : “ Հարսն ընծայեալ յերկ կը յերկինս՝ յօր ամբաւնալք առ քեզ զհողիս , յօր լսելոյ քոյ զաւետիս՝ խնդրեալ լինել մեղ լսելիս , զձայն աւետեաց քոյ միածնին՝ եթէ եկայը օրհնեալք հօր իմ . յօր օրհնեցայք ազգք երկրածին՝ տուք օրհնութիւն պտղոյ կուսին , :

Աղօրի Յիսուսին ծննդեամբ :

Ո՛վ ամենաբարի մարդացեալ լսուած իմ չիսուս , ստեղծող երկնի և երկրի , երկիրսպագանեմու կը պաշտեմ զբեզ , որ իմ փրկութեանս համար եկար աշխարհք , ու աստուածային հրաշքով ծնար ՚ի կոյս մօրէ . չուզեցիը աշխարհիս փառքովը երեւալ մեզի , այլ խնարհութեամբ ու ազքատութեամբ՝ ինչուան միգտնուեցաւ քու մեծու-

թեանդ արժանաւոր աեղ մը ծնանելու . ուստի ծնար խեղճ մասկ մը , պատկեցար մօրի մը մէջ , ու անով ցըցուցիր մեզի քու անհաւատալի կարողութիւնդ՝ մէջ մեր սիրոյն համար որչափ կինսա եղեր խնարհել աստուածային բարձրութէց : Ծնորհակալ ըլլալով կը սիրեմ զբեզ մանակցեալ լսուած իմ չիսուս , կը պաշտեմ ու կը փառաւորեմ անձանելի խնարհութիւնդ . և ամընալով իմ հպարտութեանս վրայ , կ'իսնիմ քու ոտքք . գիտեմ օր չես զրգուիր մեղաւորներէն , կ'ուզես անոնց սրբութիւնը , ու չնորհքովդ կը զարդարես իրենց հոգին . անօր համար կը բանամ իմ սրտիս զուոր , կ'աղաշեմ որ գաս ծնանիս իմ հոգիս . փարատես սրտիս խաւարը , լուսաւորես աստուածային չնորհքովդ . միիթարես երկնային խաղաղութեամբ՝ որ բերիր աշխարհք մեր փրկութեանը համար . որպէս զի ես ալ երանելի հովիւներուն հետուըրախութեամբ փառք տամբ աս-

տուածային մեծութեանդ, և հրեշտակաց բազմութեանը չեւոր հնեմու գովելմքու անուշ մարդասիրութիւնդ որ ցըցուցիր մեղի:

Երդ:

“ Փառը ՚ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ՚ի մարդիկ հաճութիւն, և օրհնութիւն քեզ ՚ի բարձունս. օրհնեալ ես տէր Աստուած մեր, օրհնեմք զքեզ, և գովեմք զքեզ. խստովանիմք տէր զքեզ, և երկիրապատանեմք քեզ, փառաւորեմք զքեզ, գոհանամք տէր զքեն վասն մեծի փառաց քոյ. տէր թագաւոր սուրբդ երկնային՝ Աստուած և Հայր ամենակալ: Տէր և Արդի Հօր միածին Յիսուս Քրիստոս և սուրբ որդի. տէր Աստուած գառն Աստուծոյ և Արդի Հօր. որ ասեօ զմերա ՚ի կուսէն, ողորմեցար բարձեր զմեզս աշխարհի. և արդ ընկալ զաղացնս մեր, սուրբդ որ նոտիս ընդ աջմէ Հօր՝ ողորմեամ մեզ.

զի դու միայն սուրբ, դու միայն բարձրեալ ես, դու միայն տէր մեր Յիսուս Քրիստոս: Տէր և Հոգիդ սուրբ՝ որ ՚ի փառս Աստուած ընդ Հօր. ամէն”:

Աղօրք Յիսուսին աստուածայստնուրեալը:

Ո՛Վ Աստուած իմ և թագաւոր իմ Յիսուս Քրիստոս, դու որ աստուածային յայտնութեամբդ փառաւորեցիր մեր բնութիւնը. Տնաւրիս Աստուած ըլլալովդ՝ ստեղծող երկնի և երկրի, մարդկային մարմնովդ ալ պատուեցար ու պաշտեցար իրեք թագաւորմներէն, որք տեսնալով քուկին ծննդեանդ լուսաւոր աստղը, ու կարօտ ունենալով ցանկալի գալստեանդ և անուշ տեսութեանդ, փափաքանօք ելան քեզ մնալուելու. Թողուցին իրենց աշխարհը, մասնան իրենց մեծութիւնը, ցնայեցան իրենց հանգիստը, մէկդի գրին իրենց հոգը ու աշխար-

Քիս մժմըտուքը՝ զքեղ գանալու, զքեղ պաշտելու, զքեղ սիրելու համար : Վ'աղաւեմ փրկիչ իմ Յիսուս տուս + տուր ինծի ալ աստուածային չնորհքդ, որ ես ալ մռանամ չէ թէ մինակ աշխարքու ու աշխարհային բաները, այլ և իմ մարմինս ու հանգիստս + և հոգւով ջերմեռանդութեան ելլամ քեղ փնտրուելու, ըզքեղ գանալու, զքեղ սիրելու, քեղի ծառայելու, ու յաւիտեան քեղմէ չիզատուելու : Վ'աղաւեմ զքեղ ալ տիրամնջր սուրբ կցոս, ինծի համար միջնորդ եղիք Յիսուսին, որ արժանի ընէ զիս իր փառաւոր տեսութեանը արքայութեան մէջ, ուր մէծարելով փառաւորեմ քու մայրութիւնդ ալ որ ցըցուցեր ես ինծի :

Եթէ: “ Զայնիւ առ քեղ Տէր պատաժիմք՝ և առաջի քանկանիմք. աղաւանօք Աստուածածնին՝ շիջն ի մէնջ զբոց չնոցին . տուր արտասուօք զմեզս չնջել և վերստին ըզմեզնորդել, յոր օր չնեցայք ազգք երկրածին՝ տնք օրչնութիւն պըտղց կուսին ” ,

Աղօրք Յիսուսին մկրտուրեամբ :

Ո՛վ աղքիւր սրբութեան և ամենայն մաքրութեան տէր իմ Յիսուս Վ'րիսասոս, գուն որ եկեղ էիր աշխարհք մեր մեղքը մաքրելու և ըզմեզ սրբելու համար, յանձն ատիր խոնարհութեամբ երթալ Յօրգանան զետը, ու մկրտուիլ քու ծառայէդ. ու անով մաքրեցիր և օրչնեցիր զօրուրը, որ ըլլայ մեզին նիւթ մկրտութեան՝ լրւացուելու և սրբուելու մեր սկզբնական մեղքէն : Վը փառաւորենք աստուածային իմաստութիւնդ, կը գոհանաննք ու չնորհակալ ենք անբաւ ողորմութենէդ. կ'երկրսպագենք քուկին մեծութեանդ, կը քարոզենք քուկին սքանչելիքդ, ու կը գաւանինք զքեղ միածին Որդի Աստուծոյ. ինչպէս որ վլիյաեց Նայրն երկնաւոր մկրտուելուդ ատենը, ու Հողին սուրբ ալ աղաւանակերպ երենալով իմացուց աշխարքիս քու աստուածու-

Թիւնդ: Ազաւեմ գքեղ փրկիչ հուցոյ իմօյ, մաքըլ իմ սիրտս ամէն ապառութենէ մեղաց, ցողութ ու սրբէ իմ հոգիս քու շնորհքովդ, ուրով լրւսաւորուի պայծառանայ ու վառուի աստուածային սիրով:

Երժ: “Ի հօրէ լցոյ ծագեցար՝ մեռեալ ընսւթեանս կենդանարար. առաքեցեր յառաջնմաց՝ սուրբ զՅովշաննէս քարոզ կենաց. սորին հայցմանմէն ամենակալ՝ զպազատանրս մեր ընկալ. տուք օրհնութիւն անձառ լրւսոյն, հօր և Որդոյ և սուրբ հոգւոյն,,:

Ազորք տեսանելնադաշին:

Արքութիւն սրբոց տէր իմ Յիւ սուս Վրիսատոս, որ ուղեցիր քառամնօրեայ ընծայութ ՚ի տաճարն, ծածկելով աստուածութեանդ փառքը՝ ցըցուցիր մեզի անձանելի խոնարհութիւնդ: Մատորամենասուրբ էիր հոգւով ու մարմնով, ընծայութ լովդ ՚ի տաճար՝ դրսուանց երեցու.

ցիր զքեզ և զտուրբ մայրոդ կարօտ մաքրութեան. ու անով սրբեցիր մեր հոգին, և մեր բնութիւնը ընծայեցիր հօր Աստուծոյ: Ծնծայութլդ ՚ի տաճարն, ու սիրով զըրկուիլդ Ոիմէնն ծերունիէն՝ միմիթարեց մեր ծերացած բնութիւնը, որ կը փափաքէր քու գալստեանդ, որ պէս զի արժանանայ նորոգութեան ու խաղաղութեան հոգւոյ: Կշանեղար մեզի Աստուծոյ հետ հաշութեան. իբրև Ճիւղ դալար ձիթենոյ ՚ի զիրկս ամենասուրբ ազտինոյ մօրդ և կուսի ընծայութցար ՚ի տաճարն, որով իմացանդ թէ իջած է աստուածային բարկութեան ըրչեղեղը, ու բացուած է մեզի ողբամաթեան գոււրը: Ուստի մենք ալ Ոիմէնն ծերունիին հետ կ'աղաւենք ըդքեզ. ովկ փրկութիւն մեր, լցոյ հեթանոսաց, արձակիչ կապելոց և բժիշկ հոգւոց մերոց, ողորմէ քուժողովրեանդ, որք կարօտ են երկնաւոր պարզեացդ:

Երժ: “Ար արձակիչք ես կապե-

լոց պարզեատու ամենեցուն , այսօր  
հայցմանը ծերունցոյն արձակիւա և  
զիս զբաղմամեղս ՚ի կապանաց մա-  
հու ՚ի կեսանագ յաւիտենից , :

Սրբոյն Գրիգորի Նարեկացոյ  
պատատանք առ սորբ Աստուա-  
ծածինն : Բան . 2 :

Եւ արդ՝ ՚ի վերայ այսքանեաց  
յուսահատութեանց , և աշարկու  
սրտաբեկութեանց , պակուցանողա-  
կան սաստկութեց , աստուածային  
բարկութեանց , տագնասպեալ օդուով  
թափութեան իսպառ , աղաչեմ  
զբեզ սուրբ Վրտուածածին : Հզեշ-  
տակ ՚ի մարդկանեւ . մնրմնատեսիլ  
քերովլեւ . երկնաւոր արքայուհի .  
անխառն իրբեւ զօդ . մնքուր որպէս  
լոյս . անշաղախ ըստ նմանութեան  
պատկերի արուսեկին բարձրութեւ .  
գերազանց քան զընակութիւն ան-  
կոխելին սրբութեանց . երանաւոր  
խոստմանն տեղի . եդեմ շնչական .  
ծառ կենացն անմահից բոցեղէն սր-  
բովն պարունակեալ : Ի բարձրեան  
հօրէ զօրացեալ և հովանացեալ .  
հանգստեամբ հոգւոյն հանդեր-

ձեալ և մաքրագործեալ . բնակութեամբ լրդւցն յարդարեալ , և տաղաւարեալ : Միաժինն հօր , և քեզ անդրանիկ . որդիք քո ծննդեամք , և տէր արարջութեամբ : Ինդ անալու մաքրութեանդ՝ և ամրիծ բարի . ընդ անարատ սրբութեանդ՝ և ինսամակալ բարեխօս : Ինկալ զմալ թանս այսր աղեքսանաց քումդաւանողիս , և մատու ընծայեալ ընդ սմին խաճնեալ զրանն իմ նախնի մեծիդ ներքողի՝ 'ի քոյդ պազատանս : Հիւսեալ միացն զմեզուցելցոյ գառն հեծութիւն ընդ քումդերջանիկ և ինկաւորեալ հայցուածոց , առնկդ կենաց պտղոցն օրհնութեան : Օ յի 'ի քէն միշտ օդնեալ և բարեգործեալ , և 'ի մաքրական քո ծնելութիւնդ ապաւինեալ և լուսաւորեալ կեցից Քրիստոսի որդւց քոյ և տեան :

( ) ժանդակեալ թեայդ աղօթիք խոստովանեալ մայրդ կենդանեաց՝ և յելիցն իմ յերկրէս հովտէ , առանց լիկանաց հետեւել 'ի կեանս

օթեանացդ պատրաստութեան . զի թելթեասցի կատարածն իմ՝ ինձ ծանրացելցոյ անօրէնութեամբ : Ի՞րացե՞ս տօն ինձ բերկրութեան՝ զօրն իմ տագնապի՛ ողջացուցիչ երկանցն լայի : Քարեխօսեալ , խընդրեալ , աղաչեալ . զի ըստ անձաւելի մնաքրութեանդ՝ և աչազ զբանիդ հաւատամ զընդունելութիւն : Ի՞րտասուք օգնեալ վտանգեցելցոյ՝ գովեալդ 'ի կանայս . ծունդ խոնարհեցո առ իմ հաշտութիւն՝ ծնողդ լուսուծոյ . ընդ իմում թշուափի հոգա՝ խորան բարձրելցոյ . ձեռն տուր անկելցոյ՝ տաճար երկնային : Փառաւորեալ զորդիդ քո 'ի քեզ՝ աստուածօրէն ինձ հրաշագործել քաւութիւն և ողորմութիւն , աղախին Ատուծոյ և մայր :

Քարձրացի պատիւ քո ինեւ , և ցուցցի փրկութիւն իմ քեւ , եթէ զիս գտցես՝ տիրամայր . թէ ինձ ոզորմեսցին՝ սրբուհի . թէ զիորուսեալս շահեսցին՝ անարատ . թէ ըզհարթուցեալ յանձանձեսցես՝ եր-

Հանիկ . թէ զամաշեցեալ յառաջ  
մատուցես՝ բարեշնորհ . թէ յու<sup>ւ</sup>  
սահատեցյս ինձ միջնորդեցյես՝  
միշտ սուրբ կօյս . թէ զմերժեալս  
ընտանեցաւցես՝ մեծարեալդ յլու<sup>ւ</sup>  
տուծյ . թէ յիս ցուցցես զգթա<sup>ւ</sup>  
ծութիւն՝ լուծիցդ անիծից . թէ  
զժփեալ հաստատեցյես հանիխտ .  
թէ 'ի խոսվութեանց յուզմանց  
փօխեցյես զիս՝ խաղաղաբար . թէ  
վրիպեցյս ինձ հնարաւորեցյես՝ գու<sup>ւ</sup>  
վեալ . թէ վասն իմ մոտցես 'ի հան  
դէս՝ մահու նահանջիչ . թէ զբառ  
նութիւնս իմանուշեցյես՝ քաղցրու<sup>ւ</sup>  
թիւն . թէ զբաժանմանն իմ խրտ  
րոց քակտեցյես՝ հաշտութիւն . թէ  
զամանաքրութիւնս իմ բարձցես՝ դժ<sup>ւ</sup>  
ման ընդուանիչ . թէ զմաննեալս մա  
հու փրկեցյես՝ կենդանի լցոյս . թէ  
զբալեացս ձայն հատցես՝ բերկրու<sup>ւ</sup>  
թիւն . թէ զխորտակեալս կազդու<sup>ւ</sup>  
րեցյես՝ գեղ կենաց . թէ 'ի կոր  
ծաննեալս յիս ակնարկեցյես՝ հոգե<sup>ւ</sup>  
լից . թէ ողորմութեամբ ինձ պա<sup>ւ</sup>  
տահեցյես՝ կտակ նուիրեալ . որ

Հնեալդ միայն 'ի շրթունս ամբիծս  
լեզուաց երջանկաց : Ահա կաթիւ<sup>ւ</sup>  
միկաթին քումդ կուսութեան յան<sup>ւ</sup>  
ձրն իմանձրեեալ՝ կենաց ինձ զօրէ,  
մայրդ բարձրեց տեառն Յիսուսի  
արարցին երկնի և ընաւին երկրի :  
Օ որ անձաւապէս ծնալ բովանդակ  
մարմնովն , և համայն աստուածու<sup>ւ</sup>  
թեամբն . որ փառաւորեալն է ընդ  
հօր և հոգւցն սրբոյ՝ էութեամբ ,  
և անկննութեամբ մերոյին քնու<sup>ւ</sup>  
թեամբս միայելով՝ ամենայն , և յա<sup>ւ</sup>  
մենայնում . մի Աշրորդութենէն .  
Նմա փառք յաւիտենից յաւիտեանս .  
ամէն :

---

## ՄԱՂԹԱՆՔ

ԱՌ ՍՈՒՐԲ ԿՈՅՍՆ ՄԱՐԻԱՄ

---

Մարմանդ բանաւոր կենացըն բուսոյ ,  
Փառաց օթևան անզատուեր լուսոյ .  
Դիմելոցն ՚ի քեզ ապաւէն յուսոյ ,  
Ամբիծ միշտ սուրբ կոյս մայրոդ Աստուծոյ :  
Ամուր ապաստան՝ առ քեզ զիս գարձն՝ ,  
Տիբամնոյր սուրբ կոյս՝ ինձ ձեռն մասն .  
Զհոգւսոյ իմ՝ խաւար զու պայծառացն .  
Յարկածից չարին անվրտանդ զերծն՝ :  
Ի ամել ազաւեմ ըզգանձ սիրոյ քս ,  
Ի թափուր յիմ սիբա՝ աղնանկիս հոգւոյ .  
Յազբիւրդ անբաղաս կենդանի ջըրոյ ,  
Գրկութեան բաժակ պատրելցյա արբո՛ :  
Ի քեզ պաղատիմ՝ անարատ սուրբ կոյս .  
Հան զիս ՚ի մեղաց խաւարէս ՚ի լոյ .  
Միսյն ձեռնտու աբէկոն հոգւոյս ,  
Լէր ինձ ացելու , զի գու եւ իմ՝ յոյս :

Ազերս 'ի սըրտէս առ քեզ մերձեսցի ,  
Գըթութիւն կուսիդ յիս երկեսցի .  
Աշոյսս 'ի կենաց քե նորոգեսցի ,  
Եւ փառք դըշխոյնդ ինե փայլեսցի :  
Միածնին ծընող՝ սուրբ կօյս Մարիամ' ,  
Ընորհօք բերկրեալ՝ գլութիք փարթամ' ,  
Աղբերացն յիս շնորհս յարուժամ' ,  
Անկեցցս 'ի քո մայրական խընամ' :

---



